

ԾՄՄ 2016թ. ՍԱՅՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵՍ ԸՆԴՈՒՆՎԵԼ Է SEIU-ի 2016թ.-ի Կոնվենցիայում



Ծառայողների Միջազգային Միություն, CTW՝ Փոփոխություն հարթելու համար, CLC՝
Կանադայի աշխատանքային կոնգրես

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<i>Հոդված</i>	<i>Էջ</i>
Ներածություն	1
ԾՄՄ-ի Առաքելությունը	1
I Անվանում	3
II Խնդիրներն ու Նպատակները	3
III Իրավասություն և Անդամակցություն	4
IV Համագումար՝ Ներկայացվածությունը դրանում	5
V Աշխատակիցների Ընտրություն	9
VI Ծառայողներ	10
VII Թափուր Պաշտոնների Լրացում	12
VIII Միջազգային Նախագահ՝ Պարտականություններն ու Լիազորությունները	13
IX Միջազգային Քարտուղար-Գանձապահի Պարտականությունները	17
X Գործադիր Փոխնախագահների Պարտականությունները	17
XI Միջազգային Գործադիր Խորհրդի Պարտականությունները	18
XII Գործադույներ և Լոկաուտներ	21
XIII Եկամուտ	21
XIV Կանոնադրությունների Թողարկում	25
XV Տեղական Միությունների Պարտականությունները	26
XVI Անդամների Շահերն ու Փոխանցումները	32
XVII Դատավարություններ և Բողոքներ	32
XVIII Պատկանելություն Միջանկյալ Մարմինների..	36
XIX Վճարումներ՝ կապված Անդամների Մահվան հետ	37

XX	Կենսաթոշակային Հիմնադրամ՝ Աշխատակիցների, Տեղական Միությունների և Հարակից Մարմինների Աշխատակիցների համար	38
XXI	Միջազգային Սահմանադրության Տեղական Կիրարկում	40
XXII	Միջազգային Միության պատասխանատու չլինելը	41
XXIII	Վեճեր	41
XXIV	Փոփոխություններ	42
XXV	Լուծման Պայմաններ.....	42
XXVI	Խնայողությունների Ապահովում	43
	ԾՄՄ Անդամների Իրավունքների ու Պարտականությունների	
	Օրինագիծ Միությունում.....	43
	ԾՄՄ Անդամների Իրավունքների ու Պարտականությունների	
	Օրինագիծ Աշխատանքում	43
	Ընդհանուր Ընթացակարգերի Ձեռնարկ....	45
	Բանավեճ.....	46
	Կարգը	48

ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քանզի աշխատողների պայմանները, կազմակերպված ջանքերի արդյունքում, գրեթե ամբողջովին բարելավվել են, իսկ աշխատավարձը և արհեստավարժ աշխատողների բարեկեցությունը կարող են պաշտպանված լինել և առաջ շարժվել միայն մեկ Միջազգային Միության ներքո միավորվելով՝ մենք հիմնել ենք Ծառայողների Միջազգային Միությունը և հաստատել հետևյալ Մահմանադրությունը.

ԾՄՄ-Ի ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Մենք հանդիսանում ենք Ծառայողների Միջազգային Միություն՝ մի կազմակերպություն, որը ներառում է ավելի քան 1 միլիոն անդամ, ովքեր համախմբվել են աշխատողների արժանապատվության և նրանց մատուցած ծառայությունների կարևորության բարձրացման շուրջ և նվիրվել՝ աշխատողների և նրանց ընտանիքների կյանքը բարելավելու և առավել արդար ու

մարդկային հասարակություն ձևավորելու գաղափարներին:

Մենք հանրային, առողջապահական, ծառայություններ մատուցող, գրասենյակային, արդյունաբերական և այլ հարակից բնագավառների աշխատակիցներ ենք: Մենք ձգտում ենք ստեղծել առավել հզոր միություն և ամրապնդել մեր դիրքերը, որպեսզի պաշտպանենք այն մարդկանց, ում սպասարկում ենք:

Որպես առաջատար քարոզչական կազմակերպություն, մեր պարտավորությունն ենք համարում ապահովել արդարություն բոլոր աշխատողների համար: Մենք հավատում և պայքարում ենք արդար հասարակություն ստեղծելու համար, որտեղ բոլոր աշխատողները գնահատված են, իսկ մարդիկ՝ հարգված, որտեղ ընտանիքներն ու համայնքները բարգավաճում են և որտեղ մենք հաջորդ սերունդներին թողնում ենք առավել բարենպաստ և հավասարության աշխարհ:

Մենք, հանդիսանալով յուրաքանչյուր ռասայի, ազգային պատկանելության, կրոնի, տարիքի, ֆիզիկական ունակության, սեռային արտահայտման և սեռական ուղղվածության մարդիկ, պայքարում ենք սոցիալական և տնտեսական արդարության համար: Այս շարժումը նախաձեռնվել է մոտ մեկ դար առաջ հավաքարարների կողմից, ովքեր, չնայած իրենց ամենօրյա ծանր աշխատանքին, համարձակվել են երազել տնտեսական անվտանգության, արժանապատվության և հարգանքի մասին:

Միության և լավագույն հասարակության մեր պատկերացումը հետևյալն է.

Բոլոր աշխատողներն ու իրենց ընտանիքներն ապրում և աշխատում են արժանապատվությամբ:

Աշխատանքը կատարվում և արդար վարձատրվում է:

Աշխատողներն ունեն նշանակալից ձայն՝ իրենց վերաբերող որոշումների կայացման հարցում և աշխատողների հարավորություն ունեն զարգացնելու իրենց տղանդն ու հմտությունները

Աշխատողների միասնական ձայնն ու իշխանությունն իրականացվում է ժողովրդավարական, արդարացի և առաջադեմ միությունների օգնությամբ:

Միության համերաշխությունը դիմակայում է խտրականություն և ատելություն տարածող ուժերին, ինստիտուցիոնալ ռասիզմին և շահագործող գործատուների կողմից առաջարկվող զբաղվածության անարդար պայմաններին:

Աշխատողները կարող են ապրել ապահով և առողջ հայանքներում:

Կառավարությունն ակտիվ դերակատարություն ունի՝ աշխատող մարդկանց կենսակերպի բարելավման գործում:

Այս տեսլականին հասնելու համար՝ մենք պետք է.

Կազմակերպենք սպասարկման անկազմակերպ աշխատողներին՝ նրանց տեղեկացնելով միության գաղափարները և ապահովելով վերահսկողություն մեր տնտեսությունների և աշխատաշուկայի նկատմամբ:

Ամրապնդենք մեր քաղաքական դիրքերը՝ կառավարության բոլոր մակարդակներում աշխատողների ձայնը լսելի դարձնելու համար՝ տնտեսական հնարավորություն ստեղծելու և սոցիալական արդարությունը խթանելու նպատակով:

Ապահովենք անդամների ներգրավման և մասնակցության ճշգրիտ ուղիներ՝ ուժեղ, ժողովրդավարական միություններում:

Միության բոլոր մակարդակներում ներգրավենք և վերապատրաստենք նպատակալաց և նվիրյալ առաջնորդներ, ովքեր կապահովեն տվյալ տեղամասում համայնքների և անդամների բազմազանությունը:

Ապահովենք այնպիսի պայմանագրեր, ըստ որոնց կբարելավվեն աշխատավարձերն ու աշխատանքային պայմանները, կընդլայնվի աշխատողների դերակատարությունը աշխատավայրում որոշումներ կայացնելիս, կստեղծվի առավել հզոր միություն, ինչպես նաև կկառուցվեն ավելի ուժեղ ու առողջ համայնքներ:

Ստեղծենք կոալիցիաներ և համերաշխորեն համագործակցենք այլ կազմակերպությունների հետ, որոնք կիսում են մեր մտահոգությունները սոցիալական, բնապահպանական, ռասայական և տնտեսական արդարության վերաբերյալ:

Ծավալենք անմիջական գործունեություն, ինչը կարտահայտի

մեր ուժն ու հաղթելու վճռականությունը:

Պատասխան պահանջենք կորպորացիաներից և կապիտալիստներից հանուն հանրային շահի:

Նվիրումով վերացնենք ինստիտուցիոնալ ռասիզմը, որը մեզ հետ է պահում մեզ անհրաժեշտ միասնականության և ուժի հասնելուց:

Ճանապարհ հարթենք ներգաղթյալների իրավունքների պաշտպանության և արդարության համար:

Բաց լինենք փոփոխությունների նկատմամբ, ինչը հնարավորություն կտա հարմարվելու և առավել արդյունավետ լինելու այս անընդհատ փոփոխվող պայմաններում:

Այս նպատակներին հասնելու համար, մենք պետք է միասնական լինենք և ոգեշնչվենք այն հավատով և սկզբունքներով, որոնք կվերափոխեն մեր սոցիալական և մասնագիտական բազմազանությունը, ուղղորդեն մեր աշխատանքը:

Հավատում ենք, որ, որպես առանձին անհատներ կարող ենք հասնել փոքր հաջողությունների, իսկ միասին մենք կարող ենք ստեղծել արդար հասարակություն:

Հավատում ենք, որ միություններն են այն միջոցները, որոնց օգնությամբ աշխատողները կուժեղանան, իսկ սովորական մարդիկ կհասնեն արտակարգ արդյունքների:

Հավատում ենք, որ մեր ուժը միասնության մեջ է, և այն չպետք է խարխլվի սեռերի, ռասաների, ազգային պատկանելության, կրոնի, տարիքի, ֆիզիկական ունակությունների, սեռական ուղղվածության կամ ներգաղթի կարգավիճակի վրա հիմնված խտրականության ազդեցությունից:

Հավատում ենք, որ մեր ուժն ու արդյունավետ գործունեությունը կախված են մեր անդամների ակտիվ մասնակցությունից և նվիրումից, ԾՄՄ նվիրյալ առաջնորդների ներգրավումից և համերաշխությունից միմյանց և մեր համախոհների միջև:

Հավատում ենք, որ ունենք հատուկ առաքելություն. տնտեսական և սոցիալական արդարության հասնել մեր համայնքում առավելագույնս շահագործվողների համար՝

հատկապես կանանց և մաշկի տարբեր գույն ունեցող մարդկանց համար, ինչպես նաև սևամորթ ամերիկացիների նկատմամբ ինստիտուցիոնալ ռասիզմը վերացնելու հարցում:

Հավատում ենք, որ մեր ապագան չի կարող առանձնացվել աշխարհի տարբեր հատվածների աշխատողներից, ովքեր պայքարում են տնտեսական արդարության, իրենց ընտանիքների պատշաճ կյանքի, խաղաղության, արժանապատվության և ժողովրդավարության համար:

Հավատում ենք, որ միություններն անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության գերակայության համար և պետք է մասնակցություն ունենան մեր հասարակության քաղաքական կյանքում:

Հավատում ենք, որ բարոյական պատասխանատվություն ենք կրում մեր և բոլորի երեխաների առջև՝ աշխարհն ավելի արդար, առողջ և ապահով դարձնելու գործում:

Հոդված I ԱՆՎԱՆՈՒՄ

Այս կազմակերպությունը կկոչվի Ծառայողների Միջազգային Միություն՝ համակցված Փոփոխություն Հաղթելու համար և Կանադական Աշխատանքի Կոնգրես կազմակերպությունների հետ, և բաղկացած կլինի իր կողմից արտոնագրված անսահմանափակ քանակության Տեղական Միություններից անդամակցության հնարավորությամբ, և նմանատիպ հարակից մարմիններից, որոնք կարող են հիմնվել ժամանակ առ ժամանակ: Տեղական միության և նրա անդամների ջանքերին ընդհանուր Միության ուժը փոխանցելու նպատակով, Տեղական Միության և հարակից մարմնի անվանումը կսկսվի “ՕՄՄ”-ով:

Հոդված II ԽՆԴԻՐՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Այս Միջազգային Միության խնդիրներն ու նպատակներն են՝ ամեն կերպ աջակցել իր անդամներին և բարելավել նրանց պայմանները, ներառելով, բայց չսահմանափակվելով հետևյալով.

Ա. Երաշխավորելով տնտեսական առավելություններ. ավելի լավ աշխատավարձ, աշխատաժամեր և աշխատանքային պայմաններ՝ կազմակերպչական աշխատանքների, միասնական բանակցությունների, օրենսդրական և քաղաքական գործողությունների և այլ օրինական միջոցների կիրառման միջոցով:

Բ. Այս Միջազգային Միության շուրջ կազմակերպելով և միավորելով անդամակցության համար իրավասու բոլոր աշխատող տղամարդկանց և կանանց,

Գ. Ներգրավվելով նման քաղաքացիական, սոցիալական, քաղաքական, իրավական, տնտեսական, մշակութային, կրթական, բարեգործական և այլ գործունեություններին, ինչպես տեղական, ազգային, այնպես էլ միջազգային մակարդակում, ինչը նպաստավոր պայմաններ կստեղծի այս Միջազգային Միության դերի բարձրացման համար հասարակության և աշխատավորական շարժման մեջ, ինչպես նաև, ուղղակի կամ անուղղակիորեն, կնպաստի տվյալ կառույցի և դրա անդամների շահերին,

Դ. Առաջ մղելով և ամրապնդելով աշխատող տղամարդկանց ու կանանց իրավունքները՝ միասնաբար բանակցելու համար, և աշխատանքի իրականացմաննորարար եղանակներ ներմուծելով,

Ե. Ապահովելով առանձին միությունների անդամների, գործակալների և աշխատակիցների շահերն ու առավելությունները՝ կրթության, վերապատրաստման, նոր տեխնոլոգիաների ներդրման, անդամների ռեսուրսային կենտրոնների, 21-րդ դարի հաղորդակցական համակարգի, թոշակների, մահվան և սոցիալական նպաստների միջոցով,

Զ. Օգնելով Տեղական Միություններին կատարել փորձի, ռեսուրսների փոխանակում, տեղեկանալ մյուսի լավագույն փորձառությանը և հաշվետու լինել միմյանց,

Է. Համագործակցելով և բարոյական, ֆինանսական կամ որևէ այլ աջակցություն ցուցաբերելով այլ աշխատավորական կազմակերպություններին՝ անկախ այս Միջազգային Միությանը դրանց անդամակցման փաստից, կամ ցանկացած այլ խմբերի ու կառույցների, որոնց նպատակները, այս կամ այն չափով, վերաբերում կամ համահունչ են այս Միջազգային Միության նպատակներին և/կամ, ուղղակի կամ անուղղակիորեն, պաշտպանում են կազմակերպության և նրա անդամների շահերը,

Ը. Ամրապնդելով և երաշխավորելով այս Միջազգային Միության գործունեությունը ցանկացած օրինական միջոցով, որպեսզի այն իրականացնի իր նպատակները, առաջադրանքներն ու պարտավորությունները,

Թ. Օրինական ձևով օգտագործելով (ներառելով, բայց չսահմանափակվելով) այս Միջազգային Միության ֆինանսական, գույքային և ներդրումային միջոցները՝ հասնել առաջադրված նպատակների և խնդիրների իրականացմանը ու պարտավորությունների կատարմանը և, ուղղակի և անուղղակիերոն, առաջ մղել այս Միջազգային Միության և դրա անդամների շահերը,

Ժ. Անդամագրելով այնպիսի անկախ կազմակերպությունների, որոնք խորապես ծանոթ են Աշխատողներին նմանատիպ կառույցների պատմությանը, բացառիկ պահանջներին, ավանդույթներին ու հաջողություններին՝ հնարավորինս ապահովելով նույն ծառայությունների տրամադրումը, ինչ մեր առկա անդամներին,

Ի. Ծառայողների Միջազգային Միության անդամներին լիազորելով մասնակցել Միության ծրագրին և առաջ մղել այն՝ ապահովելով առավել բարեկեցիկ ապագա բոլորի համար, ներառյալ կազմակերպչական աշխատանքները, բանակցությունները, քաղաքական աշխատանքն ու համայնքային գործընկերությունները,

Լ. Ստեղծելով աշխատողների կազմակերպման նոր ձևեր՝ աշխատողների կոլեկտիվ տնտեսական և քաղաքական ուժ կառուցելու նպատակով, և

Խ. Կառուցելով Արդարության առավել ընդգրկուն շարժում:

Հոդված III

ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՂԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Բաժին 1. Միջազգային Միությունը բաղկացած է և իրավասություն ունի իր հարակից մարմինների և բոլոր Տեղական Միությունների նկատմամբ՝ կազմված աշխատող տղամարդկանցից և կանանցից, ովքեր աշխատում են կամ ներառված են մասնավոր, շահույթ չհետապնդող կամ հասարակական աշխատանքների ցանկացած փուլում՝ առանց սահմանափակման ներառելով քոլեջների, դպրոցների և համալսարանների աշխատակիցներին, հանրային գործատուներին (ներառյալ քաղաքները, համայնքները, նահանգները, գավառները, տարածաշրջանները, պետությունները, կառավարական տարածքները, դաշնային գործակալությունները և բազմոլորտ գործակալություններն ու իշխանությունները, ցանկացած ստորաբաժանումները), հաստատություններին կամ գործակալություններին, հիվանդանոցներին, ծերանոցներին կամ այլ առողջապահական հիմնարկներին, մասնավոր և կոմունալ ծառայություններին, հանրախանութներին, արդյունաբերական գործարաններին, իրավապահ մարմիններին, ապահովագրական

գործակալություններին և դրանց բոլոր աշխատակիցներին, ներառյալ գործավարներին, տեխնիկներին, արհեստավարժներին, պարապրոֆեսիոնալներին և պարաֆիզիկներին, նաև նրանց, ովքեր զբաղված են պահպանության, բոլոր տեսակի հաստատությունների, շենքերի կամ կառույցների, առևտրային կամ մանր առևտրային հաստատությունների, շենքերի և շինությունների պահպանման բնագավառում, անկախ այն փաստից, թե դրանք մասնավոր, հանրային, թե շահույթ չհետապնդող կառույցներ են, և բոլոր կատեգորիաների աշխատակիցներին, ներառյալ հավաքատեղիների, զվարճանքի, հանգստի, ժամանցի և սպորտային միջոցառումների վայրերի աշխատակիցներին:

Միջազգային Նախագահը լիազորված է վերարտադրել վերոհիշյալ իրավասությունը՝ ընդգրկելու աշխարհի ցանկացած վայրում ցանկացած հաստատության աշխատողների տարբեր դասակարգերը:

Բաժին 2 (ա). Միջազգային Միությունը իրավասություն ունի բոլոր Տեղական Միությունների, դրանց անդամների և բոլոր հարակից մարմինների նկատմամբ:

(բ). “Հարակից մարմիններ” եզրույթը ներառում է Նահանգային և Գավառական Խորհուրդները, Համատեղ Խորհուրդները, Սպասարկման Խորհուրդները, տարածքային, կրոնական և արդյունաբերական Կոնֆերանսներն ու ստորաբաժանումները, կազմակերպչական հանձնաժողովները, ժամանակավոր տեղական կառույցները, ինչպես նաև նմանատիպ այլ մարմիններ, որոնք Միջազգային Միությունը ժամանակ առ ժամանակ կհիմնադրի տեղական, ազգային և միջազգային մակարդակում, սակայն ոչ Տեղական Միությունները: “Տեղական Միություն” եզրույթը չի ներառում որևէ այլ հարակից մարմին:

Բաժին 3 (ա). Ցանկացած անձ, ով աշխատում է այն բնագավառում, որի նկատմամբ Միջազգային Միությունը հավակնում և իրազործում է արդարադատություն, իրավասու է անդամակցել Միջազգային Միությանը, որևէ Տեղական Միության, կազմակերպչական կոմիտեին կամ այս կազմակերպության ժամանակավոր տեղական կամ այլ լիազոր

մարմնին: Տեղական Միությունը կարող է որդեգրել անդամակցության հավելյալ պահանջներ՝ ըստ Տեղական Միության Սահմանադրության և Կանոնակարգի: Արդարադատությունը կարող է համարվել Տեղական Միության կամ Միջազգային Միության հարակից մարմնի ներառական ծառայությունը, սակայն յուրաքանչյուր Տեղական Միություն ունի որոշելու իրավունք, թե արդյոք այդպիսի ծառայություն տրամադրող անձը կարող է հավակնել Տեղական Միության անդամակցությանը: Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է սահմանել իրավունակության պահանջներ և այլ չափանիշներ (ներառյալ անդամավճարների չափը) թղթակից անդամների համար, ինչպես նաև անդամակցության այլ հատուկ կատեգորիաներ՝ սույն Սահմանադրության համաձայն ստեղծված Միջազգային կամ հարակից մարմինների անդամակցության համար:

(բ). Ինքնազբաղված անձինք, ովքեր աշխատում են այս Միջազգային Միության իրավասության ներքո, կարող է անդամակցել Տեղական Միություններին, որոնց Սահմանադրությունն ու Կանոնակարգերը կարող են ներառել ցանկացած այլ լրացուցիչ պահանջներ: Միջազգային Նախագահը, այս Միջազգային Միության իրավասության ներքո, իրավունք ունի սահմանել ինքնազբաղված աշխատողներին վերաբերող բոլոր անհրաժեշտ կանոններն ու կանոնակարգերը:

(գ). Միջազգային Միության համաձայնությամբ, Տեղական Միությունները կարող են սահմանել անդամակցության տարբեր կատեգորիաներ և անդամավճարի չափեր այն անձանց համար, ովքեր Տեղական Միության կողմից ներկայացված կամ չեն ներկայացված կոլեկտիվ բանակցային նպատակներով, ներառելով, սակայն չսահմանափակվելով հետևյալ պաշտոններով՝ առկա անդամներ, պաշտոնաթող անդամներ և թղթակից անդամներ:

(դ). Անդամակցությանը կամ անդամագրվելու իրավասությանը վերաբերող ցանկացած վեճ որոշվում է Միջազգային Նախագահի կողմից Տեղական Միության կամ դիմողի հետ, ով իրավունք ունի բողոքարկել այդ որոշումը՝ տվյալ որոշման գրությունը ստանալուց հետո 10 օրվա ընթացքում գրավոր կերպով դիմելով

Միջազգային Գործադիր Խորհրդին:

Բաժին 4. Անդամներից ոչ ոք իրավունք չունի խտրականություն ցուցաբերել կամ քարոզել մեկ այլ անդամի նկատմամբ՝ ռասայի, դավանանքի, մաշկի գույնի, կրոնի սեռի, սեռային արտահայտման, սեռական ուղղվածության, ազգային ծագման, քաղաքացիության կարգավիճակի, ամուսնական կարգավիճակի, նախնիների, տարիքի կամ հաշմանդամության համար:

Հոդված IV

Համագումար՝ Ներկայացվածությունը Դրանում

Բաժին 1. Այս Միջազգային Միության Համագումարը հրավիրվում է չորս տարին մեկ անգամ, իսկ ժամանակն ու վայրը որոշվում է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից Միջազգային Նախագահի առաջարկությամբ:

Բաժին 2. Միջազգային Գործադիր Խորհրդի հրամանով, խորհրդի կողմից որոշված վայրում և ժամին, կարող է հրավիրվել համագումար, որտեղ կարող են դիմել ցանկացած գործի կապակցությամբ, ներառյալ Միջազգային Գործադիր Խորհրդի որոշումների բողոքարկումները, նախքան նման Հատուկ Համագումարի հրավիրումը, քանի դեռ դրանց ընդունումը չի սահմանափակվել հրավերով: Այդ հրավերը կուղարկվի յուրաքանչյուր Տեղական Միությանը Հատուկ Համագումարից 60 օր առաջ՝ տվյալ Տեղական Միությանը հասկացված պատվիրակների թվաքանակի հետ միասին: Այս հոդվածի մյուս դրույթներով կվերահսկվեն բոլոր Հատուկ Համագումարները:

Բաժին 3. Միջազգային Համագումարին կմասնակցեն պատշաճ կերպով ընտրված պատվիրակները և, այդ պատվիրակներից բացի, ովքեր պատշաճ կերպով ընտրվել են սույն Սահմանադրության և Կանոնակարգերի դրույթներին և կիրառելի օրենքներին համաձայն, ոչ ոք իրավասու չէ ցանկացած Տեղական Միություն ներկայացնելու Միջազգային Համագումարում և լիազորված չէ քվեարկել, բացառությամբ լրիվ դրույթով Միջազգային ծառայողների, ովքեր, իրենց պաշտոնի

ուժով, ձայնի իրավունքով պատվիրակներ են հանդիսանում, սակայն ոչ իրենց պաշտոնավարման ընթացքում հրավիրված Համագումարում:

Տեղական Միության այն բոլոր ծառայողները, որոնք ընտրվում են բոլոր կիրառելի օրենքների համաձայն, այդ ընտրության ուժով հանդիսանում են իրենց պաշտոնավարման ընթացքում հրավիրված ցանկացած Միջազգային Համագումարի իրավասու պատվիրակներ: Այն դեպքում, երբ Համագումարի հրավիրման պահին, այդպիսի ընտրված ծառայողների թիվը ավելի փոքր է, քան տվյալ Միջազգային Համագումարի կողմից՝ Տեղական Միությունը հատկացված պատվիրակների թվաքանակը, ապա, ըստ պահանջի, Տեղական Գործադիր Խորհրդի կողմից կարող է կատարվել թեկնածուների առաջադրում և գաղտնի քվեարկություն՝ իրավասու անդամներից Համագումարի լրացուցիչ պատվիրակներ ընտրելու նպատակով: Առաջադրված թեկնածուն, ընդդիմության բացակայության պարագայում, համարվում է ընտրված՝ առանց հետագա ընթացակարգերի անհրաժեշտության: Տեղական Միությունը պետք է իր Սահմանադրությամբ և Կանոնակարգերով սահմանի այն կարգը, ըստ որի ծառայողները կնշանակվեն՝ որպես Համագումարի պատվիրակներ կամ փոխարինողներ՝ պայմանով, որ Տեղական Միության գլխավոր գործադիր տնօրենը, անվերապահորեն համարվում է իրավասու, եթե նույնիսկ Տեղական Միությունը չի նշանակում: Ցանկացած Տեղական Միություն կարող է իր Սահմանադրության և Կանոնակարգերի մեջ բաց թողնել վերահռիշյալ այն դրույթը, որ Տեղական Միության ծառայողները ի պաշտոնե հանդիսանում են Միջազգային Համագումարի պատվիրակներ և, ըստ անհրաժեշտության, կազմակերպի պատվիրակների թեկնածուների առաջադրում և գաղտնի քվեարկություն: Բացի այդ, կիրառելի օրենքների համաձայն, Միջազգային Խորհուրդը կարող է հաստատել պատվիրակների ներկայացվածության կանոններ՝ թղթակից անդամների խմբերի կամ անդամակցության հատուկ կատեգորիաների կամ տեղական միությունների համար, ինչը կներկայացվի ինչպես Միջազգային, այնպես էլ Հատուկ Համագումարի Հրավերում: Նմանատիպ խմբերի ներկայացվածությունը, քանակական առումով, չպետք է ավելի մեծ լինի, քան Բաժին 4-ում ստորև

բերված բանաձևը: Այս պատվիրակներին տրված քվեարկելու իրավունքը պետք է համապատասխանի կիրառելի օրենքին:

Բաժին 4. Ներկայացվածության հիմքը կազմում է 500 անդամ կամ պակաս ունեցող միությունից՝ մեկ պատվիրակ և մեկ լրացուցիչ պատվիրակ՝ ամեն լրացուցիչ 500 անդամների պարագայում, իսկ առավել խոշոր թվի պարագայում՝ մինչև 5000 անդամ, մեկ լրացուցիչ անդամ՝ ամեն լրացուցիչ 1000 անդամի դեպքում: Պատվիրակների ոչ ամբողջական կազմով մասնակցելու որոշումը չի ազդում Տեղական Միության իրավասու քվեների վրա: Տեղական Միության Գործադիր Խորհուրդը որոշում է պատվիրակների թիվը՝ Համագումարում ներկայացվելու համար: Քվեարկելու նպատակով Տեղական Միության անդամների հաշվարկում չեն ներառվում նվիրյալ անդամները, պաշտոնաթող և Տեղական Միության աշխատող անդամների անհրաժեշտ ամբողջական անդամավճարից պակաս վճարող անդամները, թղթակից անդամներն ու գործակալությունների վարձ վճարողները:

Բաժին 5. Ի հավելումն Բաժին 4-ում բերված ներկայացվածության պայմաններին՝ յուրաքանչյուր Տեղական Միություն, որն ունի ավելի քան 500 պաշտոնաթող անդամ, կարող է մեկ պաշտոնաթող պատվիրակ ներկայացնել, ով իր ձայնն ու քվեն կունենա Համագումարում: Միայն այն պաշտոնաթող անդամներն, ովքեջ նախքան Համագումարը 60 օր հանդիսացել են Տեղական Միության լիազոր, պաշտոնաթող կամ նվիրյալ անդամ, կարող է ներկայացվել որպես պաշտոնաթող անդամ պատվիրակ: Պաշտոնաթող անդամ պատվիրակը պետք է ընտրվի համաձայն Տեղական Միության Սահմանադրությունում և Կանոնակարգերում սահմանված ընթացակարգերի կամ Տեղական Միության Գործադիր Խորհրդի կողմից այն դեպքում, երբ Տեղական Միության Սահմանադրությունում և Կանոնակարգերում որևէ ընթացակարգ սահմանված չէ: Պաշտոնաթող անդամ պատվիրակը Համագումարում իրավունք չունի քվեարկել անդամավճարների հետ կապված հարցերում կամ առաջադրել կամ քվեարկել ծառայողների համար:

Բաժին 6. Պատվիրակներին չի թույլատրվում ներկայացնել մեկից ավելի Տեղական Միություն:

Բաժին 7(ա). Այն Տեղական Միությունը, որը չի արտոնագրվել, միացել և լավ համբավ ունեցել Համագումարի բացումից առաջ առնվազն մեկ ամսվա ընթացքում, իրավունք չունի ներկայացվելու Համագումարին, իսկ այն Տեղական Միությունը, որն իրավունք է ստացել ներկայացվելու Համագումարում, պետք է Միջազգային Գանձապետարան վճարած լինի առնվազն մեկ ամսվա մեկ շնչին ընկնող հարկ՝ նախքան Համագումարի բացումը:

(բ). Համագումարին ներկայացնելու իրավունք ստացած Տեղական Միության կողմից վճարման ենթակա բոլոր գումարները. (1) Միջազգային Միությանը՝ կամ մեկ շնչին ընկնող հարկ, կամ այլ (2) այլ հարակից մարմիններին՝ կամ մեկ շնչին ընկնող հարկ, կամ այլ, ինչպես որոշված է կամ հեռացված Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից (3) սույն Սահմանադրությամբ սահմանված, կենսաթոշակի կամ նպաստների ֆոնդերի հասանելիք գումարները, պետք է վճարվեն Համագումարի բացումից առնվազն 15 օր առաջ:

Բաժին 8. Միջազգային Քարտուղար-Գանձապահը կյոողարկի Համագումարի հրավերը և, համագումարից 100 օր առաջ, յուրաքանչյուր Տեղական Միությանը կհայտնի տվյալ Միությանը հատկացված պատվիրակների թվաքանակը, ինչպես նաև կտրամադրի պատվիրակության հավաստագրման ձևաթուղթը գրանցված պատվիրակների անուններով՝ Տեղական Միության Քարտուղարի և Նախագահի ստորագրման համար:

Բաժին 9. Պատվիրակության հավաստագրման ձևաթուղթը, որը պարունակում է Միջազգային Համագումարի պատվիրակների անունները և ստորագրված է Տեղական Միության Քարտուղարի և Նախագահի կողմից, պետք է ուղարկվի Միջազգային Քարտուղար-Գանձապահին՝ Համագումարի բացումից առնվազն 30 օր առաջ: Համագումարին մասնակցելու իրավունք ունեցող պատվիրակը չի որակագրկվի միայն այն պատճառով, որ Տեղական Միության ծառայողը չի ընդգրկել նրա անունը պատվիրակության հավաստագրման ձևաթղթում:

Բաժին 10. Ի լրումն սույն հոդվածի 3-րդ բաժնում նշված կերպով ընտրված պատվիրակների, Տեղական Միությունը կարող է

կազմակերպել նույն քանակի փոխարինողների ընտրություն, ովքեր, անհրաժեշտության դեպքում, կփոխարինեն հիմնական պատվիրակներին: Այդ փոխարինողներն ընտրվում են սույն հոդվածի 3-րդ բաժնում նշված պայմանների համաձայն: Յուրաքանչյուր պատվիրակ կամ փոխարինող պետք է հանդիսանա Տեղական Միության անդամ, ով աշխատում է Տեղական Միության իրավասության ներքո: Այնուամենայնիվ այս պահանջը չի արգելում այն անդամի ընտրությունը, ով հանդիսանում է Տեղական Միության կամ Միջազգային Միության կամ դրանց հարակից կազմակերպության ծառայող կամ աշխատակից կամ ով ընտրվել է հանրային պաշտոնի համար:

Բաժին 11. Յուրաքանչյուր անդամ, ով ցանկանում է բողոքարկել որևէ պատվիրակի ընտրությունը կամ Տեղական Միության ծառայողի՝ որպես պատվիրակ հանդես գալու իրավունքը համաձայն IV հոդվածի հոդվածի 3-րդ բաժնի, պետք է գրավոր բողոք ներկայացնի Միջազգային Քարտուղար-Գանձապահին՝ 15 օրվա ընթացքում այդ ընտրությունից կամ Տեղական Միության այն որոշումից հետո, որ IV հոդվածի հոդվածի 3-րդ բաժնի համաձայն, ընտրություն հարկավոր չէ: Ցանկացած նման բողոք ուղարկվում է Հավատարմագրման Հանձնաժողով՝ Միջազգային Քարտուղար-Գանձապահի պատասխանատվության ներքո: Հավատարմագրման Հանձնաժողովը կարող է վերացնել բողոքների ընդունման ժամկետային սահմանափակումը՝ հաշվի առնելով այն, որ բողոքարկող անդամը տեղյակ չի եղել բողոքարկման հիմքի մասին, որպեսզի ժամանակին ներկայացներ բողոքը կամ դիմել է բողոքով՝ այդ հիմքը պարզելուց անմիջապես հետո: Հավատարմագրման Հանձնաժողովը ուսումնասիրում է ժամանակին ներկայացված բոլոր բողոքները և ներառում դրանց վերաբերող որոշումը Համագումարին ներկայացվելիք զեկույցում: Հանձնաժողովն, իր հայեցողությամբ, կարող է կազմակերպել որևէ բողոքի լսում՝ համապատասխանաբար տեղեկացնելով բոլոր շահագրգիռ կողմերին:

Բաժին 12. Համագումարում յուրաքանչյուր Տեղական Միությանը հատկացվող քվեների քանակը որոշվում է՝ հաշվի

առնելով Համագումարի անցկացման օրացույցային տարվան անմիջապես նախորդող տարվա մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ Միջազգային Միության կողմից անդամների համար ստացված մեկ շնչին ընկնող 12 ամսական վճարումների միջինը: Նոր արտոնագրված տեղական միության դեպքում, երբ մինչև դեկտեմբերի 31-ը առկա չէ տասներկուամսյա վճարում, քվեների քանակը որոշվում է Միջազգային Միության կողմից ստացված ամսական հարկային վճարումների միջինացմամբ՝ առավելագույն տասներկու ամիս: Քվեների հաշվարկը չի ներառում թղթակից անդամներին, նվիրյալ անդամներին կամ գործակալության վարձ վճարողներին: Այն դեպքում, երբ մեկ Տեղական Միությունից ներկայացված է երկու կամ ավելի պատվիրակ, ապա քվե հավասարապես բաժանվում է նրանց միջև: Ըստ IV հոդվածի՝ վերակազմակերպման հետևանքով առաջացած, նոր արտոնագրված տեղական միության պարագայում, Միջազգային Միության Գործադիր Խորհուրդը որոշում է տեղական միությունների քվեարկության հաշվարկը, որպեսզի անդամները ներառվեն միայն մեկ տեղական միության քվեների ազդեցության մեջ:

Բաժին 13. Միջազգային Նախագահը, յուրաքանչյուր Համագումարից առաջ, պատվիրակներից ընտրում է առնվազն յոթ հոգու՝ որպես Հավատարմագրման Հանձնաժողով գործելու նպատակով: Բոլոր հավատարմագրերն ուղարկվում են այս հանձնաժողովին: Այս հանձնաժողովը ներկայացնում է իր գրավոր զեկույցը Համագումարում:

Բաժին 14. Համագումարում քննարկման ենթակա, տեղական միության կողմից առաջարկված բոլոր Որոշումները պետք է գրավոր ներկայացվեն Միջազգային Քարտուղար-Գանձապահին՝ Համագումարից առնվազն 30 օր առաջ, հակառակ դեպքում դրանք քննարկման չեն դրվի, բացի այն դեպքից, երբ ներկա պատվիրակները միաձայն համաձայնում են: Որոշումները կարող են Համագումարին ներկայացվել Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից Համագումարի ընթացքում ցանկացած պահի՝ առանց միաձայն համաձայնության:

Բաժին 15. Պատվիրակները, ովքեր ներկայացնում են

Համագումարում հատկացված ձայների մեկ չորրորդը կապահովեն քվորում՝ հարցի անցկացման համար:

Բաժին 16. Միջազգային Միության յուրաքանչյուր Համագումար իրականացվում է համաձայն նախորդ Համագումարի ընթացքում կիրառված կանոնների և կարգի, քանի դեռ Համագումարի կողմից չեն հաստատվել նոր կանոններ:

Հոդված V

ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կետ 1. Միջազգային պաշտոնատար անձանց բոլոր թեկնածուների առաջարկումը կատարվում է բաց համագումարով և ընտրությունները կատարվում են անվանական քվեարկությամբ, որտեղ մեկ պաշտոնի համար կան ավելի քան մեկ թեկնածու: Անվանական քվեարկությունը պետք է իրականացվի ձայնային կապի միջոցով և/կամ բաց գրավոր քվեարկությամբ, ինչպես սահմանված է համագումարի կանոններում: Պաշտոնատար անձինք ընտրվում են մեծամասնության քվեարկությամբ:

Կետ 2. Միջազգային պաշտոնի կամ Տեղական Միության Թեկնածուները (այդ թվում հեռանկարային թեկնածուները) կամ թեկնածուների կապակցված անձը կամ ներկայացուցիչը չեն կարող պահանջել կամ ընդունել ցանկացած տեսակի ֆինանսական օգնություն կամ այլ ուղղակի կամ անուղղակի օգնություն Միջազգային Միության անդամ չհանդիսացող որևէ անդամից:

Կետ 3. Ցանկացած անդամ, ով ցանկանում է բողոքարկել Միջազգային պաշտոնատար անձի ընտրության դեմ կապված թեկնածուի համապատասխանության կամ ընտրությունների անցկացման կարգի հետ, պետք է ներկայացնի բողոքը Համագումարի Կանոնների պահանջներին համապատասխան:

Կետ 4. Ցանկացած անդամ, ով ցանկանում է ներկայացնել ընտրության վերաբերյալ բողոք կապված հոդված IV, 11-րդ կետով, կամ սույն հոդվածի 3-րդ կետով, պետք է ներկայացնի այդ բողոքը Հանրագումարից հետո 15 օրվա ընթացքում: Բոլոր այդ

բողոքները պետք է հանձնվեն Միջազգային Նախագահին: Միջազգային նախագահը պետք է փորձի անցկացնել նիստ բողոքը ներկայացնելու հետո 30 օրվա ընթացքում, եթե Միջազգային Նախագահը համարում է, որ նիստը անհրաժեշտ է և պետք է փորձի ներկայացնի իր որոշումը 30 օր հետո: Միջազգային Նախագահի վերջնական գործողությունից հետո 15 օրվա ընթացքում, կարող է ներկայացվել միջնորդություն Միջազգային Գործադիր Խորհրդին: Որպես այլընտրանք, Միջազգային Նախագահը կարող է հանձնել ընտրության վերաբերյալ բողոքը Միջազգային Գործադիր Խորհրդին որոշում կայացնելու համար:

Հոդված VI **ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆՔ**

Կետ 1. Սույն Միջազգային Միության պաշտոնատար անձանց կազմում ընդգրկված են Միջազգային Նախագահը, Միջազգային Քարտուղար-Գանձապահը, յոթը ամբողջ դրույքով զբաղվածություն ունեցող Գործադիր փոխնախագահները, 25 Փոխնախագահները (որոնցից առնվազն երկուսը պետք է լինեն Կանադական Տեղական Միությունների անդամ) և 40 Գործադիր Խորհրդի անդամներ (որոնցից առնվազն երկուսը պետք է լինեն Կանադական Տեղական Միությունների անդամներ և որոնցից մեկը պետք է լինի պաշտոնաթողի անցած): Միջազգային Նախագահը, Միջազգային Քարտուղար-Գանձապահը, յոթը Գործադիր Փոխնախագահները ընտրվում են ընդհանրապես Միջազգային Համագումարին հավաքված բոլոր անդամների կողմից: Երկու Կանադացի Փոխնախագահները և երկու Կանադացի Գործադիր Խորհրդի Անդամները ընտրվում են հետևյալ հիմունքներով՝ Փոխնախագահի և Խորհրդի անդամի թեկնածությունը առաջարկվում է և ընտրվում է Քվեբեկ նահանգից բացի ցանկացած այլ նահանգներից: Փոխնախագահի և Խորհրդի անդամի թեկնածությունը առաջարկվում է և ընտրվում է միայն Քվեբեկ նահանգից, այն դեպքում, եթե Քվեբեկից Փոխնախագահը և Գործադիր Խորհրդի անդամը չեն

հանդիսանում միևնույն Տեղական միության անդամ: Այս Կանադացի Փոխնախագահները և Գործադիր Խորհրդի անդամները ընտրվում են Կանադայի խորհրդի կողմից, որը բաղկացած է սույն Սահմանադրությանը և գործող օրենսդրությանը համապատասխան ընտրված անդամներից Համագումարի ժամանակ, որը տեղի է ունենում Միջազգային Համագումարից առաջ 90 օրերի ընթացքում, որտեղ Միջազգային Միության պաշտոնատար անձինք են ընտրվում: Բոլոր մնացած Փոխնախագահները և Գործադիր Խորհրդի անդամների (այդ թվում պաշտոնաթող եղած անդամի) թեկնածուները առաջարկվում է և ընտրվում են:

Կետ 2. Այս պաշտոնատար անձինք ընդգրկված են Միջազգային Գործադիր Խորհրդի մեջ և նրանց պաշտոնի զբաղեցումը սկսվում է անմիջապես իրենց ընտրությունից հետո և նրանք զբաղեցնում են պաշտոնը չորս տարի կամ մինչև իրենց իրավահաջորդները պատշաճ կերպով ընտրվում են և որակավորվում:

(a). Յուրաքանչյուր Փոխնախագահ և Գործադիր Խորհրդի անդամ պատասխանատվություն է կրում Միջազգային Նախագահի կողմից նշանակված պարտականությունների համար:

(b). Միջազգային Նախագահը կարող է նշանակել Գործադիր Կոմիտե Միջազգային Գործադիր Խորհրդի անդամներից: Գործադիր Կոմիտեն ժողով է հրավիրում Միջազգային Նախագահի պահանջով: Գործադիր կոմիտեն պարտավորվում է խորհրդակցել Միջազգային Նախագահին վարչական իր պարտականությունների լավագույն կատարման համար և խորհուրդնե տալ Միջազգային Գործադիր Խորհրդին Միջազգային Միության քաղաքականությունների և ծրագրերի վերաբերյալ: Գործադիր Կոմիտեն նաև կարող է ստանձնել Միջազգային Գործադիր խորհրդի հատուկ գործառույթների և լիազորությունների կատարում Խորհրդի լիազորությամբ XI հոդվածի, 6B կետի համաձայն: Գործադիր Կոմիտեի բոլոր ժողովների արձանագրությունը կատարվում է Միջազգային Քարտուղար-Գանձապահի կողմից, ով հաշվետվություն է ներկայացնում Միջազգային գործադիր Խորհրդին:

Կետ 3. Այս Միջազգային Միության յուրաքանչյուր հերթական

Համագումար ընտրում է Վերստուգողների Խորհուրդ, որը բաղկացած է ութ անդամից: Վերստուգողների Խորհուրդը վերանայում և քննում է Միջազգային Քարտուղար-Գանձապահի հաշվետվությունը առնվազն մեկ անգամ յուրաքանչյուր տասներկու ամիսների ժամանակահատվածում՝ օգտվելով Միջազգային Նախագահի կողմից նշանակված արտոնագրված պետական հաշվապահների օգնությունից: Միջազգային Քարտուղար-Գանձապահի հաշվապահական հաշվետվության այդ ուսումնասիրությունը ներառում է Միջազգային Քարտուղար-Գանձապահի պատասխանատու խնամքի տակ գտնվող գույքի և սարքերի հաշվետվությունը: Վերստուգողների Խորհրդի տարեկան հաշվետվությունների պատճենը ներկայացվում է Միջազգային գործադիր Խորհրդին: Վերստուգողների Խորհուրդը նույնպես գրավոր հաշվետվություն է տալիս Միջազգային Համագումարին: Վերստուգողի հասանելի չլինելու կամ ժամանակավոր անաշխատունակության դեպքում մնացած վերստուգողները պետք է կատարում են սույն փաստաթղթում սահմանված պարտականությունները: Վերստուգողները պետք է ստանան Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից սահմանված օրեկան փոխհատուցում և ծախսերի փոխհատուցում:

Կետ 4. Միջազգային Միության պաշտոնի զբաղեցման համար չեն համապատասխանում այն անձինք, ովքեր չեն հանդիսանում անդամ սույն Միջազգային Միությունում գրանցված Միջազգային Միությունում կամ Տեղական Միություններում կամ որևէ արհմիությունում, որը կապակցված է այս Միջազգային Միության հետ, իր ընտրությունից անմիջապես առաջ ունենալով առնվազն երկու տարվա լավ համբավ: Սույն պահանջը կարող է կրճատվել Միջազգային գործադիր խորհրդի կողմից առնվազն 60 օրով, այդպիսով ընդլայնելով հնարավորությունը զբաղեցնել պաշտոն այն անդամների համար, ովքեր նոր են ընդգրկված Միջազգային Միությունում համաձայն Article XI հոդվածի, 6-րդ կետի: Միջազգային Գործադիր Խորհրդում պաշտոնաթողի անցած անդամ լինելու դեպքում միայն պաշտոնաթողի անցած այն անդամները, ովքեր եղել են բարի համբավ ունեցող անդամներ Համագումարից առաջ երկու տարի, Տեղական միության պաշտոնաթողի անցած կամ մշտական անդամները

կարող են աշխատել: Համաձայն Լենդրում-Գրիֆին Օրենքի 504-րդ կետի (քրեականորեն պատժվող արարք Կանադայում) հանցավոր գործունեության համար դատապարտված անձը չի կարող պաշտոն զբաղեցնել Միջազգային Միությունում գործող օրենսդրությանը համապատասխան

Կետ 5. Կապակցված անդամները, մշտական անդամները կամ պաշտոնաթողի անցած անդամները, ովքեր վճարում են Տեղական Միության աշխատող անդամների համար պահանջվող տուրքերը ամբողջությամբ չվճարելու դեպքում չեն կարող հավակնել նշանակվել որպես Միջազգային պաշտոնատար անձ, բացառությամբ այն դեպքերի, եթե պաշտոնաթողառու անդամները համապատասխանեն Միջազգային Գործադիր Խորհրդի պաշտոնաթողի անցած անդամի պաշտոնին:

Կետ 6. Միջազգային Միության ամբողջ դրույք զբաղվածություն ունեցող պաշտոնատար անձը չի կարող ստանալ ցանկացած տեսակի փոխհատուցում որևէ Տեղական Միությունից կամ Տեղական Միությանը պատկանող կամ նրա վերահսկողության ներքո գտնվող որևէ մարմնից, բացի կենսապաշտոնաթողային հիմնադրամի կողմից վճարվող արտոնավճարներից: Այնուամենայնիվ, Միջազգային Նախագահը լիազորված է հաստատելու ժամանակավոր անցումային պլան (որը չպետք է գերազանցի վեց ամիսը) այլ նորանշանակ ամբողջ դրույքով պաշտոնատար անձանց համար, որոնք անցում են կատարում Տեղական Միությունից Միջազգային Միություն՝ պայմանով, որ անձը չի ստանում փոխհատուցում Միջազգային Միությունից և Տեղական միությունից միննույն ժամանակ:

Կետ 7. Միջազգային Նախագահը նշանակում է պաշտոնաթողի անցած անդամների խորհրդակցական կոմիտե, որը բաղկացած է տեղական միության առաջնորդներից, պաշտոնաթողի անցած անդամների խմբերից և պաշտոնաթողի անցած Միջազգային Գործադիր Խորհրդի անդամներից: Միջազգային Նախագահի կողմից նշանակված որևէ պաշտոնաթողառու անդամ նախագահում է այն:

Կետ 8. Միջազգային պաշտոնատար անձին պաշտոնաթող վաստակավոր գործչի շնորհում կատարվում է միայն այն անձանց, ովքեր առնվազն երեք միջազգային համագումարների

ընտրվել են որպես Միջազգային Նախագահ: Այդ կարգավիճակը իրավունք է տալիս այդ անձին լինել SEIU Միջազգային Համագումարի պատվավոր հյուր և նա կարող է նշանակվել Միջազգային Նախագահի կողմից ազգային կամ միջազգային դաշնային հանրագումարի ժամանակ որպես SEIU ներկայացուցչության անդամ կամ անդամի ներկայացուցիչ: Միջազգային Նախագահը կարող է կատարել լրացուցիչ նշանակումներ փոխադարձ համաձայնությամբ:

Հոդված VII **ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԶԲԱՂԵՑՈՒՄ**

Մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով Միջազգային Նախագահի պաշտոնի թափուր տեղերրի առկայության դեպքում Միջազգային Քարտուղար-Գանձապահի պարտականությունն է, իր լրումն նրա այլ պարտականությունների, ստանձնել Միջազգային Նախագահի պաշտոնը: Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է զբաղեցնի այդ պաշտոնը ոչ ավել քան 30 օր և այդ ժամանակահատվածի ընթացքում Միջազգային Գործադիր Խորհուրդը պետք է գումարվի թափուր տեղը լրացնելու համար մեծամասնության քվեարկությամբ: Մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով Միջազգային Քարտուղար-Գանձապահի պաշտոնի թափուր տեղերրի առկայության դեպքում Միջազգային Նախագահի պարտականությունն է, իր լրումն նրա այլ պարտականությունների, ստանձնել Միջազգային Քարտուղար-Գանձապահի պաշտոնը: Միջազգային Նախագահը պետք է զբաղեցնի այդ պաշտոնը ոչ ավել քան 60 օր և այդ ժամանակահատվածի ընթացքում Միջազգային Գործադիր Խորհուրդը պետք է գումարվի թափուր տեղը լրացնելու համար մեծամասնության քվեարկությամբ: Մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով Փոխնախագահների կամ Վերստուգողների խորհրդի պաշտոնի թափուր տեղերրի առկայության դեպքում Միջազգային գործադիր խորհուրդը պետք է այդ թափուր աշխատատեղի առաջացումից հետո 90 օրվա ընթացքում փակել թափուր տեղը մեծամասնության քվեարկությամբ: Մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով Գործադիր Փոխնախագահների կամ Միջազգային գործադիր խորհրդի

անդամների պաշտոնի թափուր տեղերրի առկայության դեպքում Միջազգային գործադիր խորհուրդը պետք է իր հայեցողությամբ փակի թափուր տեղը մեծամասնության քվեարկությամբ: Մահվան, հրաժարականի կամ այլ պատճառով միաժամանակ Միջազգային Նախագահի և Միջազգային Քարտուղար-Գանձապահի պաշտոնի թափուր տեղերրի առկայության դեպքում Միջազգային գործադիր խորհուրդը պետք է գումարվի Վաշինգտոնում առնվազն չորս Միջազգային գործադիր խորհրդի անդամների կանչից 10 օրվա ընթացքում մեծամասնության քվեարկությամբ թափուր տեղը զբաղեցնելու համար: Միջազգային Նախագահի, Միջազգային Քարտուղար-Գանձապահի կամ Գործադիր Փոխնախագահի թափուր աշխատատեղերի առկայության դեպքում Միջազգային գործադիր Խորհրդում պաշտոնատար անձի ձայնը (բացառությամբ ամբողջ դրույք զբաղեցնող պաշտոնատար անձանց և պաշտոնաթող անդամի) պետք է լինի համամասնորեն իր տեղական մարմնի թվային ուժին, ինչպես սահմանված է Տեղական մարմնի բնակչության մեկ շունչի համար հարկի վճարով Միջազգային Միությանը, բացառությամբ կապակցված անդամների, մշտական, պաշտոնաթող անդամների, ովքեր վճարում են ամբողջ դրույքով նախատեսված վճարներից պակաս գումար և գործակալության վճարողներ: Եթե մեկից ավելի անդամ միևնույն Տեղական Միությունից է, ձայները բաժանվում են հավասարապես այդ պաշտոնատար անձանց միջև այդ նպատակով:

Հոդված VIII

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՆԱԽԱԳԱՀ—

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կետ 1(a). Միջազգային Նախագահի պարտականությունն է նախագահել Միջազգային Միության Համագումարին և Միջազգային գործադիր խորհրդի ժողովներին և անցկացնել դրանք համաձայն պառլամենտական կանոնների և սույն Սահմանադրությանը համապատասխան: Միջազգային Նախագահը նշանակում է բոլոր կոմիտեները և խորհուրդները և հանդիսանում է բոլոր կոմիտեների և խորհուրդների

պաշտոնական անդամ:

(b). Միջազգային նախագահը հավասար ձայների դեպքում ունի որոշիչ ձայն ցանկացած հարցի շուրջ:

(c). Միջազգային Նախագահը իր կարողությունների սահմաններում՝ հետամուտ լինելով կազմակերպության նպատակներին և իր անդամների շահերին:

(d). Միջազգայի Նախագահը կարող է իրականացնել Միջազգային Միության գործերի ընդհանուր վերահսկողություն և տնօրինում: Միջազգային Նախագահը իրավասու է հրավիրել և կազմակերպել իր հայեցողությամբ ժողովներ, սեմինարներ, կոնֆերանսներ, և ղեկավարում է Միջազգային Միության բոլոր բաժինները, գործառույթները և ծրագրերը:

(e). Միջազգային Նախագահը կատարում է Միջազգային Միության ընդհանուր վերահսկողությունը և տնօրինումը: Միջազգային Նախագահը իրավասու է նշանակել կազմակերպիչներ, ներկայացուցիչներ, համակարգողներ և կազմակերպող կոմիտեներ և իր հայեցողությամբ տրամադրել վարկեր և դրամական օժանդակություն Տեղական Միություններին և կապակցված մարմիններին:

(f). SEIU Համագումարի անդամների կողմից ընդունված ծրագրերի և քաղաքականության համաձայն Միջազգային Նախագահը իրավասու է բանակցել և կնքել ազգային, տարածաշրջանային կոլեկտիվ աշխատանքային պայմանագրեր, այդ թվում ընկերության կամ մի խումբ գործատուների համաձայնագրեր և համակարգել գործունեությունը այդ նպատակով խորհրդակցելով ներգրավված Տեղական Միությունների հետ և իրավասու է պահանջել և ղեկավարել ուղղակի համակարգված բանակցությունների վարումը Տեղական Միությունների հետ: Միջազգային Միության տնտեսության բաժանումը նաև կարող է առաջարկել Միջազգային Նախագահին այնպիսի իրավիճակներ, որտեղ համակարգված բանակցությունների վարումը երաշխավորված է կամ որտեղ գործատուի հարաբերությունների համալիր ռազմավարություն է անհրաժեշտ հիմնական ռազմավարական համընդհանուր, ազգային և տարածաշրջանային գործատուների

համար: Համապատասխանաբար տնտեսության բաժանումը մշակում է մի ընթացակարգ այդ հանգամանքները բացահայտելու համար և յուրաքանչյուր դեպքում որոշում կայացնելու համար առաջարկելով կառուցվածքը (ներառյալ անդամակցության լիազորությունը գործադրուլի համար և անդամների քվեարկությունն պայմանագրի ռատիֆիկացիայի համար), և բանակցային ընթացքի ֆինանսավորում: Բաժնի առաջարկում պետք է նշվի, թե արդյոք կա անհրաժեշտություն տալի Միջազգային Միությանը կամ Միջազգային Նախագահի կողմից նշանակված ազգային կամ տարածաշրջանային բանակցային կոմիտեին բանակցություններ վարելու իրավասություն: Ներգրավված տեղական մարմինները պետք է վճարեն իրենց մասնակցության վճարները այդպիսի ֆինանսավորման տարրերի մեջ իրենց ներգրավումից հետո:

(գ). Միջազգայի Նախագահը իրավասու է աշխատանքի ընդունել աշխատողներ և պայմանագիր կնքել փաստաբանների, հաշվապահների և այլ մասնագիտացված անձնակազմի հետ, որոնց նա համարում է անհրաժեշտ գործունեությունը իրականացնելու համար: Նա իրավասու է սահմանել Միջազգային Փոխնախագահների վարձավճարը: Կապված Միջազգային Փոխնախագահի և Միջազգային Գործադիր Խորհրդի անդամի պաշտոնների հետ, Միջազգային Գործադիր Խորհուրդը աստիճանաբար կրճատում է աշխավարային վճարները և իրավասու է ընդունել այլընտրանքային վարձատրման քաղաքականություն, ինչի փոփոխության արդյունքում կարելի է հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև դնել լրացուցիչ պատասխանատվություն հատուկ անձանց վրա:

(հ). Միջազգային Նախագահը իրավասու է մեկնաբանել Սահմանադրությունը և Կանոնադրությունը և որոշում կայացնել Տեղական Միությունների կողմից իրեն հանձնված բոլոր կետերի շուրջ, որոնք ենթակա են ներկայացման Գործադիր Խորհրդին և հաջորդ Համագումարին:

Կետ 2. Տեղական Միության ցանկացած անդամ կամ պաշտոնատար անձ, ում Տեղական մարմնի Սահմանադրության XVII հոդված դրույթներով չնախատեսված գործողությունների

արդյունքում վնաս է հասցվել (ներառյալ ընտրությունների բողոքների հետ կապված) կարող է դիմել Միջազգային Նախագահին այդ գործողությունից հետո 15 օրվա ընթացքում կամ կարող է դիմել Միջազգային Գործադիր Խորհրդին, Միջազգային Նախագահին ներկայացնելուց հետո 15 օրվա ընթացքում, Տեղական մարմնի կամ կապակցված անձի գործողությունները քննելու համար: Նախագահը պետք է փորձի նիստ հրավիրել դիմումի կամ բողոքի ներկայացումից հետո 30 օրվա ընթացքում, եթե Նախագահը համարում է այդ նիստը անհրաժեշտ և պետք է փորձի իր որոշումը կայացնել դրանից հետո 30 օրվա ընթացքում:

Կետ 3. Միջազգային Նախագահը իր պաշտոնի բերումով պետք է ներկայացնի Միջազգայի Միությունը աշխատանքային կազմակերպությունների համագումարներին, որոնց հետ կապված է Միջազգային Միությունը և պետք է նշանակի այլ անդամներին այդ համագումարներին:

Կետ 4. Միջազգային Նախագահը պետք է ստորագրի այս Միջազգային Միության բոլոր պաշտոնական փաստաթղթերը, իրավասու է տնօրինել հաշվապահական հաշվետվության կամ Տեղական Միության կամ կապակցված մարմնի գրառումների և վաուչերներ թողարկի Միջազգային Քարտուղար-Գանձապահի անունով այն գումարի չափով, որը անհրաժեշտ է գործունեություն իրականացնելու համար և այն նույն գումարը պետք է վճարի Միջազգային Քարտուղար-Գանձապահը:

Կետ 5. Միջազգային Նախագահը իրավասու է նշանակել Միջազգային Քարտուղար-Գանձապահի առաջարկությամբ այնպիսի աշխատակիցներ, որոնց անհրաժեշտությունը կա:

Կետ 6. Միջազգային Միության բոլոր չեկերը պետք է ներկայացվեն Միջազգային Նախագահին հաստատման համար: Միջազգային Նախագահը կարող է ցանկացած ժամանակ նշանակել Վերստուգողների Խորհրդի անդամ կամ այլ ներկայացուցիչ կամ հաշվապահ, որին նա նշանակում է ուսումնասիրելու համար Միջազգային Միության հետ կապված ֆինանսական հարցերի շուրջ:

Կետ 7(ա). Եթե Միջազգային Նախագահը ունի պատճառ

հավատալ, որ անդամների շահերը պաշտպանելու համար անհրաժեշտ է նշանակել վստահված անձ կոռուպցիան կամ ֆինանսական խարդախությունները շտկելու համար, ապահովելով կոլեկտիվ բանակցային պայմանագրերի կամ բանակցությունների վարող ներկայացուցչի այլ պարտականությունները, ժողովրդավարական ընթացակարգերի վերականգնում կամ այլ կերպ իրականացնել Միջազգային Միության օրինական նպատակները, նա կարող է նշանակել այնպիսի վստահված անձ, ով պատասխանատու կլինի Տեղական միության կամ կապակցված մարմնի գործերի համար և այդ նշանակումը նաև իրավունք է տալիս հեռացնել Տեղական միության կամ կապակցված մարմնի աշխատողներին պաշտոնից

(b). Վստահված անձը իրավասու է լիովին պատասխանատվություն կրել Տեղական Միության կամ կապակցված մարմնի գործերի համար և դրա հետ կապված արտոնագրային հիմնադրամների հետ, հանել Տեղական Միության կամ կապակցված մարմնի գործերը և նշանակել այդ գործակալներին, աշխատողներին կամ վստահված անձանց և ձեռնարկել այլ գործողություններ Տեղական Միության կամ կապակցված մարմնի պահպանման և շահերի պաշտպանության համար:

(c). Վստահություն սահմանելուց հետո Տեղական Միության կամ կապակցված մարմինների դրամական միջոցները, հաշվետվությունը և գույքը անցնում են Վստահված անձին:

(d). Վստահված անձը պարտավորվում է պարտաճանաչ կերպով կատարել իր պարտականությունները կապված Տեղական Միության կամ կապակցված մարմնի պարտականությունների կատարման հետ:

(e). Վստահված անձը տնօրինում է Տեղական Միության կամ կապակցված մարմնի բոլոր դրամական միջոցները, փաստաթղթերը և այլ գույքը: Վստահված անձը վճարում է չբավարարված բողոքների համար, եթե դրամական միջոցները բավարար են: shall take possession of all the funds, books, papers and other property of the Local Union or affiliated body. Երբ վերականգնվում է ինքնակառավարումը, Վստահված անձը

վերադարձնում է բոլոր դրամական միջոցները, հաշվապահական հաշվետվությունները փաստաթղթերը և այլ գույքը Տեղական Միության կամ կապակցված մարմինին: Եթե այնուամենայնիվ Տեղական Միությունը կամ կապակցված մարմինը լուծվում է կանոնադրության չեղարկման միջոցով, Տեղական միության կամ կապակցված մարմնի հաշվին մնացած հաշվեկշիռը ուղարկվում է Միջազգային Քարտուղար-Գանձապահին և դառնում է Միջազգային Միության սեփականությունը:

(f). Համոզվելու համար, որ չի դրվել որևէ լիազորություն առանց համապատասխան իրավունքի կամ առանց այլ համապատասխան երաշխիքների, նախքան լիազորություններ սահմանելը, Միջազգային Նախագահը նշանակում է պաշտոնատար անձին կամ անձանց (ովքեր չպետք է լինեն այս կազմակերպության անդամը կամ անդամները) և տրամադրում ծանուցում, որը պետք է բաշխվի ժամանակին, սահմանելով նիստի ժամանակ և վայր, որոշելու համար, թե արդյոք նշանակվում է Վստահված անձ: Նշված պաշտոնատար անձը կամ անձինք տրամադրում են հաշվետվություն և առաջարկներ բանավոր կամ գրավոր Միջազգային Նախագահին, ովքեր կայացնում են իրենց որոշումը, այն դեպքում, եթե Միջազգային նախագահի դատողություններում կա անհետաձգելիություն, Միջազգային Գործադիր Խորհուրդը նշանակում է պաշտոնատար անձին կամ անձանց (ովքեր չպետք է լինեն այս կազմակերպության անդամը կամ անդամները) և տրամադրում ծանուցում, ովքեր անցկացնում են այդ նիստը 30 օրվա ընթացքում և Միջազգային Գործադիր Խորհրդի որոշումը կայացվում է այդ Վստահված անձի նշանակումից հետո 60 օրվա ընթացքում: Այս ժամանակահատվածը կարող է երկարացվել Միջազգային Նախագահի կողմից լավ պատճառներով, որի որոշումը պետք է լինի վերջնական և պարտավորեցնող: Մինչև Միջազգային Գործադիր Խորհրդի որոշման կայացումը, լիազորությունները մնում են ուժի մեջ:

(g). Միջազգային Նախագահը կարող է նշանակել ներկայացուցչի, որպեսզի նա հանդիպի Տեղական Միության կամ կապակցված մարմինների պաշտոնատար անձանց հետ և ներկա

գտնվել Տեղական Միությունների կամ կապակցված մարմինների ժողովներին, որտեղ ըստ Միջազգային Նախագահի դատողության կարիք կա օժանդակել Տեղական Միություններին կամ կապակցված մարմիններին կապված իր ներքին կարիքների հետ: Միջազգային Նախագահը կարող է նշանակել գործը քննող պաշտոնատար անձ ուսումնասիրելու համար Տեղական միության կամ կապակցված մարմնի ներքին պահանջները և օգնել նրան, թե ինչ գործողություններ են անհրաժեշտ իրականացնել Տեղական Միության կամ աֆիլացված մարմնի կողմից: Ցանկացած ժամանակ Միջազգային Նախագահը նույնպես կարող է նշանակել իր ներկայացուցչին որպես վերահսկիչ լրացուցիչ պատասխանատվություն դնելով ստուգել, թե արդյոք պահպանվում են Միջազգային նախագահի հանձնարարությունների կատարումը և/կամ այլ կերպ օգնել Տեղական Միության կամ կապակցված մարմնի ներքին պահանջները բավարարելու համար: Քննարկման ենթակա ներքին պահանջներից են, թե արդյոք Տեղական Միությունը կամ կապակցված մարմինը բավարարել են Միջազգային Համագումարի կողմից հաստատված գործող չափանիշները կամ բավարարել այդ ընթացակարգերը, կանոնները և/կամ կանոնակարգերը, որոնք պատշաճ կերպով ընդունվել են Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից իրականացնելու համար Միջազգային Համագումարի կողմից սահմանված նպատակները:

Կետ 8. Միջազգային Նախագահը իրավասու է ըստ անհրաժեշտության պահանջել աշխատակիցների աջակցությունը և խորհրդատվությունը:

Կետ 9. Միջազգային Նախագահը պետք է ամբողջությամբ հաշվետվություն ներկայացնի յուրաքանչյուր միջազգայի համագումարին և Գործադիր Խորհրդի ժամանակ:

Հոդված IX
ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ-ԳԱՆՁԱՊԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կետ 1. Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է կատարի Միջազգային Համագումարի և Միջազգային Գործադիր Խորհրդի արձանագրության ճիշտ գրանցում:

Կետ 2. Միջազգային Քարտուղար-Գանձապահը ստանում է Միջազգային Միության հետ կապված բոլոր գումաները, որոնք մուտքագրվում են Միջազգային գործադիր Խորհրդի կողմից սահմված բանկում:

Կետ 3. Միջազգային Քարտուղար-Գանձապահը վարում է պաշտոնական թղթակցություն, ստանում է կանոնադրությունների համար դիմումները, ստորագրում և տրամադրում է կանոնադրություն և պատասխանատու է պաշտոնական կնիքի համար:

Կետ 4. Միջազգային Քարտուղար-Գանձապահը դուրս գրի և ստորագրի կամ լիազորի ստորագրել Միջազգային Միության ծախսերը փոխհատուցելու համար բոլոր չեկերը Միջազգային նախագահի ստորագրությունի կամ հաստատումից հետո:

Կետ 5. Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է հաշվետվություն վարի Միջազգային անդամակցության վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում հաշվետվության ներկայացնի Միջազգային Նախագահին և Միջազգային գործադիր խորհրդին:

Կետ 6. Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է Միջազգային Համագումարին ներկայացնի ամբողջական հաշվետվություն իր զբաղեցրած պաշտոնի հետ կապված:

Կետ 7. Միջազգային Քարտուղար-Գանձապահը իր պաշտոնի ժամկետի վերջում պետք է փոխանցի իր իրավահաջորդին Միջազգային Միության բոլոր հաշվետվությունները, դրամական միջոցները, գույքը և այլ պատկանելիքները:

Կետ 8. Միջազգային Քարտուղար-Գանձապահի հաշվապահական հաշվետվությունը պետք է հասանելի լինի Միջազգային Միության աշխատակիցների կողմից ստուգման համար:

Կետ 9. Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է գրանցի ցանկացած տեսակի եկամուտներ, ծախսերը և ֆինանսական գործարքները առնվազն վեց տարի ժամկետով

կամ ավելի երկար, եթե դա պահանջվում է գործող օրենսդրությամբ:

Հոդված X **ԳՈՐԾԱԴԻՐ ՓՈԽՆԱԽԱԳԱՆՆԵՐԻ** **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կետ 1. Միջազգային գործադիր փոխնախագահները գործում են Միջազգային Նախագահի վերահսկողության ներքո:

Կետ 2. Միջազգային Գործադիր փոխնախագահները պետք է կատարեն Միջազգային Նախագահի կողմից իրենց հանձնարարված պարտականությունները:

Հոդված XI **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԽՈՐՀՐԴԻ** **ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կետ 1. Միջազգային Գործադիր Խորհուրդը անցկացնում է նիստեր առնվազն տարեկան երկու անգամ: Միջազգային Գործադիր Խորհրդի ժողովները անցկացվում են Միջազգային Նախագահի պահանջով այն վայրում և ժամանակ, որը ըստ նրա լավագույնս ծառայում է Միջազգային Միության պահանջներին: Երբ Միջազգային Գործադիր Խորհրդի անդամների մեծամասնությունը դիմում է Միջազգային Նախագահին հրավիրել ժողով, նա պարտավոր է անել դա: Միջազգային Գործադիր Խորհրդի անդամների ժողովը կարող է անցկացվել հեռախոսով կամ վիդեո կոնֆերանսի միջոցով Միջազգային Նախագահի հայեցողությամբ: Այդ ժողովների բոլոր անհրաժեշտ ծախսերը կրում է Միջազգային Միությունը: Միջազգային Գործադիր Խորհուրդը իրավասու է վարել Միջազգային Միության բոլոր գործերը: Միջազգային Գործադիր խորհրդի անդամների մեծամասնությունը կազմում է քվորում գործարքներ իրականացնելու համար:

Կետ 2. Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է ծանուցի բոլոր Տեղական Միություններին և կապակցված մարմիններին Միջազգային Գործադիր Խորհրդի ժողովների ժամի և տեղի մասին: Ցանկացած Տեղական Միություն կամ

կապակցված մարմին կարող է ներկայացնել բողոք կամ հարց, որը համարում է, որ բխում է Միջազգային Միության կամ կամ Տեղական միությունների կամ կապակցված մարմինների բարեկեցությունից Միջազգային Գործադիր Խորհրդի ցանկացած ժողովին:

Կետ 3. Միջազգային Գործադիր Խորհուրդը գործում է և սահմանում է բոլոր բողոքները, որոնք ներկայացվում են Տեղական Միությունների կամ անհատ անդամների կամ կապակցված մարմինների կողմից:

Կետ 4. Միջազգային Գործադիր Խորհուրդը պատասխանատու է Միջազգային Միության պաշտոնատար անձանց և աշխատողների պարտավորությունների համար գործող օրենսդրության պահանջներին համապատասխան կամ ինչպես նպատահարմար է գտնում Միջազգային Գործադիր Խորհուրդը:

Կետ 5. Երբ Միջազգային Գործադիր Խորհուրդը ժողով չի անցկացնում և Միջազգային Նախագահը անհրաժեշտ է համարում, որպեսզի Միջազգային Գործադիր Խորհուրդը պատշաճ կերպով գործի, Միջազգային Քարտուղար-Գանձապահը պետք է քվեարկի Միջազգային Գործադիր Խորհրդին և այդ գործողությունը և ձայնը կարող է իրականացվել նամակով, հեռագրով, հեռատիպով, ֆաքսիմիլային եղանակով, հեռախոսով կամ այլ համապատասխան կապի միջոցով: Միջազգային Գործադիր Խորհրդի անդամների մեծամասնության կողմից քվեարկած այդ գործողությունները համարվում են Միջազգային Գործադիր Խորհրդի պաշտոնական գործողություն:

Կետ 6. Միջազգային Գործադիր Խորհուրդը համաձայն Միջազգային Համագումարի գործողության հանդիսանում է Միջազգային Միության բարձրագույն ատյանը և բարձրագույն կառավարման մարմինը:

Խորհուրդը սույնով իրավասու է կատարել Սահմանադրությանը չհակասող ցանկացած իրավական գործողություններ պաշտպանելու համար Միջազգային Միությունը, Միջազգային Միության, Տեղական Միությունները և կապակցված մարմինների պաշտոնատար անձանց և անդամների իրավունքները, պարտականությունները,

արտոնությունները, ղեկավարել, կառավարել, վարել և տնօրինել Միջազգային Միության գործունեությունը, գործերը և գործառույթները ցանկացած եղանակով, ներառյալ առանց սահմանափակումների ծախսերը, ներդրումները և կառավարումը, օգտագործել Միջազգային Միության գույքը և ֆինանսական միջոցները սույն կազմակերպության նպատակները իրականացնելու համար: Բացի Խորհրդին տրված ընդհանուր և հատուկ լիազորությունների, Խորհուրդը հատկապես լիազորված է՝

A. սահմանել, ընդունել, նշանակել, հանձնարարել այնպիսի ընթացակարգրե, կանոններ և կանոնակարգեր, որոնք համապատասխանում են սույն Սահմանադրությանը, որոնք պահանջվում են Միջազգային Միության և նրա բաղկացուցիչ ենթակա մարմինների գործերի տնօրինման և կառավարման համար և չեղարկել կամ փոփոխել դրան;

B. Հանձնարարել համաձայն Սահմանադրության իր աշխատակիցներին կամ գործակալներին սահմանված գործառույթները և իրավասությունները, բացառությամբ թափուր աշխատատեղերի լրացման հարցը;

C. Սահմանել և/կամ հաստատել աշխատավարձերի, վարձատրությունների, ծախսերի, նպաստների վճարումը պաշտոնատար անձանց, գործակալներին և աշխատողներին, և ընդունել, պահպանել և փոփոխել կենսապաշտոնաթողային, առողջապահական և բարեկեցության, վստահության համաձայնությունը կամ պլանը, որը նա համարում է, որ բխում է Միջազգային Միության կամ Տեղական միության կամ կապակցված մարմինների և այդ աշխատողների ընտանիքների շահերից, այն դեպքում, եթե չեն խախտվում մասնակցի իրավունքները:

D. Իրականացել իրավական գործողություններ, որոնք անհրաժեշտ է համարում Միջազգային Միության, նրա աշխատակիցների, ներկայացուցիչների, գործակալների, աշխատողների, անդամների կամ Տեղական Մարմինների կամ կապակցված մարմինների շահերը պաշտպանելու համար, ներառյալ ներկայացնել, վարել հայցեր և վեճեր, բողոքի լուծում և այդ գործողությունների հետ կապված ծախսերի փոխհատուցում,

կամ գերծ մնալ հայցեր ներկայացնելուց:

Ե. Միջազգային Միության միջոցները ներդնել կամ վերաներդնել այնպիսի անշարժ կամ շարժական, նյութական կամ ոչ նյութական գույքի մեջ, որը նա ցանկալի է համարում Միջազգային Միության նպատակները իրականացնելու համար և բխելով անդամների շահերից կամ թողնել այդ միջոցներ առանց ներդրման:

Բ. Վարձատրության հանձնել, գնել և ցանկացած օրինական եղանակով ձեռք բերել Միջազգային Միության անունից գույքը, իրավունքները և արտոնությունները, որը նա ցանկալի է համարում Միջազգային Միության նպատակները իրականացնելու համար և բխում է իր անդամների շահերից այնպիսի գնով, պայմաններով, որը Խորհուրդը նպատակահարմար է գտնում:

Գ. Վաճառել, վարձակալել, վարձատրության հանձնել, գրավ դնել, փոխանակել կամ այլ կերպ օտարել շարժական կամ անշարժ, նյութական կամ ոչ նյութական գույքը, կամ Միջազգային Միությանը պատկանող իրավունքները կամ արտոնությունները, այն ժամանակ, երբ Խորհուրդը համարում է, որ այդպիսով իրականացվում են Միջազգային Միության նպատակները և բխում են նրա շահերից, ինչպես նաև Խորհրդի հայեցողությամբ սահմանված գնով և պայմաններով:

Դ. Ձեռք բերել վարկեր ցանկացած բանկերից, ընկերություններից, կորպորացիաներից կամ հաստատություններից Խորհրդի կողմից սահմանված պայմաններով, թողարեկլ սովորական մուրհակներ կամ պարտքերի մասին այլ վկայող փաստաթղթեր:

Ե. Կնքել, ստեղծել, իրականացնել և դադարեցնել այնպիսի գրավի, թրաստային պայմանագրեր և բանակցային փաստաթղթեր, որոնք Խորհուրդը համարում է որ ծառայում են Միջազգային Միության նպատակներին հասնելուն և բխում են նրա անդամների շահերից:

Զ. Միանալ այդ Միջազգային Միությանը կամ այլ կերպ կնքել կամ դադարեցնել հարաբերությունները այդ կազմակերպությունների և տեղական, ազգային և միջազգային

մարմինների հետ, որը Խորհուրդը համարում է նպատակահարմար և բխում է իր անդամների շահերից:

Մինչ 2013թ. Հունվարի 13-ը Տեղական Արհմիությունը կարող է պահանջել Միջազգային քարտուղար-գանձապահին հաստատել 25 ցենտի վճարման համար այլընտրանքային պլանի որոնումները: Միջազգային Արհմիության համար այդ պլանը կարող է հնարավորություն տալ պահպանել միջոցները, որոնք այլ դեպքերում պետք է հետ վճարվեն տեղական արհմիությանը՝ համաձայն Հոդված XV-ի 18-րդ մասի:

Մինչ 2013թ. Հունվարի 1-ը ֆոնդում կուտակված ցանկացած գումարի համար, ըստ Միջազգային Քարտուղար-գանձապետի կողմից սահմանված չափանիշների, Տեղական արհմիությունը կարող է նվիրատվություններից առնվազն մեկ տարի հետո օգտվել Գործադուլի և Պաշտպանության հիմնադրամից կամ Միջազգային Արհմիության այլ միջոցներից, ինչպես սահմանված կլինի Միջազգային գործադիր խորհրդի կողմից, հաշվին եղած չձախսված բոլոր միջոցների, ինչպես նաև նախորդ 12 ամիսների ընթացքում պահանջված վճարումներից կողքի դրված լրացուցիչ գումարի չափով:

Երբ լրացուցիչ տվյալ վճարումը իրականացվում է Տեղական Արհմիության կողմից, ուրիշ հետագա վճարում չի արվում Տեղական Արհմիությանը՝ համաձայն այս Բաժնի դրույթների: Միջազգային Գործադիր Խորհուրդն իրավասու է տնօրինել, որ Տեղական Արհմիության 2012թ. Գործադուլների և Պաշտպանության հիմնադրամին ուղղված նվիրատվություններով Տեղական Արհմիությունը վճարի Միջազգային Արհմիությանն ունեցած ֆինանսական չվճարված պարտքերը կամ համաձայն Միջազգային Գործադիր Խորհրդի որոշման՝ համապատասխան գործընթացներից հետո այլ կից մարմնի կամ Տեղական Արհմիության, եթե այդ պարտքի ժամկետն անց է առնվազն 90 օրով: Նման դեպքերում Տեղական Արհմիությունը ստանում է ծանուցում այդ գործողությունների նախաձեռնումից 15 օր առաջ:

Այս ենթաբաժնի կիրառմանը կամ մեկնաբանմանը վերաբերող հարցերը կլուծվեն Միջազգային քարտուղար-գանձապահի

որոշմանը համապատասխան՝ համաձայն Միջազգային Գործադիր Խորհրդի բողոքի:

(d). Ի լրումն 1(a) բաժնում շարադրված բնակչության գլխահարկի՝ յուրաքանչյուր Տեղական Արհմիություն, բացի Կանադայում հիմնադրված Արհմիություններից, Միջազգային Արհմիությանը պետք է վճարի գլխահարկ՝ Միասնության Հիմնադրամի ֆինանսավորման նպատակով:

Միասնության Հիմնադրամի միջոցով բոլոր տեղական արհմիությունները պետք է միավորեն ռեսուրսները, որպեսզի նոր ուժ ստանան անդամների համար հաղթահարելու բարձրացրած վճարները, շահութահարկն ու անվտանգության հարկը 21-րդ դարում: Յուրաքանչյուր անդամի գլխահարկի համար այդ լրացուցիչ հարկը ամսեկան կազմում է \$5.00:

Չնայած վերը նշվածին, լրացուցիչ գլխահարկը Միասնության Հիմնադրամի համար ամսեկան չի վճարվում ոչ մի անդամի կողմից, ով իր համախառն եկամուտի համար վճարում է ավելի քիչ, քան \$433: Միասնության հիմնադրամի համար լրացուցիչ գլխահարկը չի պահվում այն անդամներից, ովքեր չեն կնքել առաջին կոլեկտիվ պայմանագիրը:

(e). Կանադական Խորհրդի հանձնարարականի հիման վրա Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է Կանադայում հիմնված յուրաքանչյուր Տեղական Արհմիությունից պահանջել Միջազգային Արհմիությանը վճարել գլխահարկ ի հավելումն 1(a) բաժնում սահմանված գլխահարկի Կանադական Միասնության Հիմնադրամին ֆինանսավորելու համար: Միասնության Հիմնադրամի միջոցով բոլոր Կանադական Տեղական Արհմիությունները պետք է համախմբեն ռեսուրսները, որպեսզի նոր ուժ ստանան 21-րդ դարում անդամների համար հաղթահարելու բարձրացրած վճարները, շահութահարկն ու անվտանգության հարկը: Գլխահարկը սահմանվում է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից Կանադական Խորհրդի հանձնարարականի հիման վրա:

(f). Այս բաժնի շրջանակներում “անդամ” տերմինը կնշանակի գործակալության վարձ վճարող, Ռենդ բանաձև վճարող և համադրելի վճարներ վճարողներ, իսկ “տուրքեր” տերմինը

կնշանակի գործակալության ծառայության վճար, Ռենդ Բանաձևի վճար և համադրելի վճարներ:

Մաս 2. Անդամների տուրքերը ենթակա են վճարման և վճարվում են կամ ընթացիկ ամսվա վերջին օրից առաջ կամ յուրաքանչյուր ամսվա վերջին օրվանից առաջ, և որպեսզի տվյալ անդամը գտնվի նպաստավոր դրության մեջ, նրա տուրքերը պետք է վճարվեն: Տեղական Արհմիության մյուս բոլոր ֆինանսական պարտականությունները պետք է իրականացվեն նույն ժամանակ կամ այն ամսվա վերջին օրից առաջ, որի ժամանակ նրանք ձեռք են բերում պարտքը:

Մաս 3. Որպեսզի Տեղական Արհմիությունը գտնվի լավ վիճակում, բնակչության գլխահարկը և մյուս տուրքերն ու վճարումները պետք է կատարվեն Միջազգային Արհմիությանը յուրաքանչյուր Տեղական Արհմիության կողմից այն ամսվա ավարտից առաջ, որը հաջորդում է Տեղական Արհմիության կողմից պարտքերն ու այլ վճարումները ստանալու ամսվան: Այդ պարքերի ու վճարումների հաշվից գլխահարկն ու տուրքերը վճարվում են Միջազգային Արհմիությանը: Եթե գլխահարկը կամ դրա որևէ մասը չի վճարվում այն ամսվա վերջում, որը հաջորդում է վճարվելիք ամսվան, Տեղական Արհմիությունը համարվում է պարտականությունները չկատարող և պետք է վճարի տուգանք ուշացման համար, որի տոկոսագումարը պարբերաբար սահմանվում է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից այն չվճարված գլխահարկի չափով, որը սահմանված ժամկետում չի վճարվել, բացառությամբ այն դեպքերի, երբ Միջազգային Նախագահն ազատում է տուգանքի վճարումից հիմնավոր պատճառ ներկայացնելու դեպքում: Եթե Տեղական Արհմիությունը չի կարողանում կատարել պահանջվող վճարումները սահմանված ժամկետում՝ 30 օրվա ընթացքում, ապա Միջազգային Քարտուղար-Գանձապահը տեղեկացնում է Տեղական Արհմիությանը, որ նա այլևս լավ վիճակում չի գտնվում և պետք է 30 օրվա ընթացքում գործը ներկայացնի Միջազգային Նախագահին, որպեսզի վերջինս առանց սահմանափակումների համապատասխան համարի Տեղական Միության կասեցումը, կանոնադրության չեղարկումը կամ Հոգաբարձուի նշանակումը, ինչպես նշված է նրա Սահմանադրության Հոդված VIII-ի 7-րդ

մասում և Կանոնակարգում: Միջազգային Նախագահը և նաև Միջազգային Խորհուրդը, որոշման վերաբերյալ բողոքարկում ստանալու դեպքում, կարող են դադարեցնել կասեցումը կամ կանոնադրության չեղարկումը համաձայն այն ժամկետների և պայմանների, որոնք կսահմանվեն:

Մաս 4. Ոչ մի Տեղական Արհմիություն իրավունք չունի որևէ վճարում կատարել, մինչև ամեն ամիս չկատարի ամբողջական վճարումները Միջազգային Արհմիությանը:

Մաս 5(a). Տեղական Արհմիությունը Քարտուղար-Գանձապահի միջոցով Միջազգային Քարտուղար-Գանձապահին պետք է ուղարկի բոլոր անդամների ճիշտ անուններն ու հասցեները (ներառյալ էլ.հասցեներն ու հեռախոսահամարները, եթե դրանք առկա են) և անդամակցության վերաբերյալ այլ տեղեկատվություն, ինչպես նշված է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից: Ամեն ամիս Արհմիությունը պետք է մուտքագրի հասցեների փոփոխությունները՝ բոլոր նոր ընդունված կամ կրկին ընդունված անդամների, այլ հարկ վճարող անձանց և տուրքերի չվճարման կամ այլ պատճառով հեռացված անձանց անունները, ինչպես նաև փոխանցման կամ կանխիկացման քարտ վերցնողների ճիշտ ցանկը:

Բացի այդ, Միջազգային Արհմիությանը պետք է ներկայացնեն բոլոր ընտրված պաշտոնյաների անուններն ու հասցեները 15 օրվա ընթացքում: Ամեն հասցեի կողքին պետք է գրել հստակ փոստային կոդը: Յուրաքանչյուր Տեղական Արհմիություն պետք է անդամակցության նույն ցանկը ներկայացնի իրեն կից Տեղական Խորհրդին: Համաձայն Միջազգային Քարտուղար-Գանձապահի հանձնարարականի՝ Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է հաստատել այս մասի տվյալ պահանջի հաճախականության կամ բովանդակության սահմանափակման վերաբերյալ փոփոխությունը:

(b). Ըստ պահանջի մինչև ամեն տարվա ապրիլի 1-ը յուրաքանչյուր տեղական արհմիություն պետք է ուղարկի Միջազգային Քարտուղար-Գանձապահին նախորդ օրացույցային տարվա անդամակցության միջինացված, համախառն եկամուտներից պահումների մասին տեղեկատվությունն ու փաստաթղթերը: Միջազգային

Քարտուղար-Գանձապահը կարող է հատուկ պահանջներ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթերի բնույթի վերաբերյալ:

Մաս 6(Ա). Տեղական Արհմիության կամ այլ կից մարմնի պաշտոնյաները Միջազգային Նախագահի կողմից նշանակված ցանկացած անձի պետք է ուսումնասիրության նպատակով ապահովեն գրքերով, արձանագրություններով, հաշիվներով, ստացականներով, երաշխավորներով կամ ֆինանսական տվյալներով, երբ անհրաժեշտ է:

Բոլոր Տեղական Արհմիություններն ու կից մարմինները պետք է Միջազգային Քարտուղար-Գանձապահին անհապաղ ուղարկեն բոլոր տարեկան աուդիտորական զեկույցների և ֆինանսական հաշվետվությունների կրկնօրինակները՝ ներկայացնելով ակտիվների և պարտականությունների, ինչպես նաև ստացականների և ծախսերի հայտարարագրերը, որոնք պահանջվում են օրենքով:

(Բ). Տեղական Արհմիության կամ այլ կից մարմնի բոլոր արձանագրությունները եկամուտների, ծախսերի և ցանկացած տեսակի ֆինանսական գործարքների վերաբերյալ պետք է պահպանվեն առնվազն վեց տարի կամ ավելի, եթե դա պահանջվում է օրենքով:

Մաս 7. Երբ Տեղական Արհմիության կամ այլ կից մարմնի կանոնադրությունը կասեցվում է, Տեղական Արհմիությունը կամ այլ կից մարմիններն ու նրանց պաշտոնյաները պետք է վերադարձնեն բոլոր գրքերը, փաստաթղթերը, սեփականությունն ու միջոցները Միջազգային Արհմիությանը:

Մաս 8. Կանադական Տեղական արհմիությունների կողմից վճարվող գլխահարկից ստացված եկամուտը պետք է ծախսվի Միջազգային Արհմիության կողմից Կանադական Տեղական Արհմիություններին սատարելու նպատակով:

Հոդված XIV

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹՈՂԱՐԿՈՒՄԸ

Բաժին 1. Քսանհինգ կամ ավելի անձինք այս Միջազգային Արհմիության իրավասության սահմաններում կարող են դիմել Միջազգային քարտուղար-գանձապահին կանոնադրության

թողարկման նպատակով: Այսպես թե այնպես, Միջազգային Նախագահը կամ Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող են թողարկել կանոնադրությունը, երբ այն նպատակահարմար է համարվում: Կանոնադրության դիմումին կից պետք է լինեն ներգրավվածության և կանոնադրության համար նախատեսված վճարումներ:

Բաժին 2. Միջազգային Գործադիր Խորհուրդը հաստատում է կանոնադրության թողարկման կառավարման քաղաքականությունն ու գործընթացները և սահմանում է իրավասության հետ կապված բոլոր հնարավորությունները Տեղական Արհմիությունների միջև: Միջազգային Արհմիության ձևավորման ժամանակ գոյություն ունեցող Տեղական Արհմիությունները պահպանում են այն իրավասությունները, որոնք այդ պահին ունեն:

Եթե այս բաժնի հետ կապված որևէ առարկություն է լինում, Միջազգային Գործադիր Խորհուրդը պետք է որևէ քայլ ձեռնարկի խելամիտ հիմնավորում լսելուց կամ Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից նշանակված պաշտոնյային կամ պաշտոնյաներին լսելուց հետո (ով չի ցանկանում այլևս տվյալ կազմակերպության անդամ լինել):

Բաժին 3. Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է ամրապնդել կամ միավորել գոյություն ունեցող Տեղական Արհմիություններին նման պայմանների ներքո, քանի որ Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է սահմանել, թե երբ են իր կարծիքով Միջազգային Արհմիության շահերն ու բարեկեցությունը և համապատասխանաբար անդամակցությունը ավելի լավ սպասարկվում:

Բաժին 4. Տեղական Արհմիությունների նման միավորումը կամ միությունը համաձայնեցվում է Տեղական Արհմիությունների հետ կամ իրականացվում է Միջազգային Գործադիր Խորհրդի Կողմից կամ նրա կողմից նշանակված պաշտոնյայի ու պաշտոնյաների կողմից խելամիտ հիմնավորում ստանալուց հետո (ով չի ցանկանում այլևս տվյալ կազմակերպություն անդամ լինել):

Բաժին 5. Միջազգային Նախագահը կարող է նշանակել աշխատանքը համակարգողների և ստեղծել հանձնաժողով կամ

Տեղական Միություններ աշխատողներ ընդունելու նպատակով, ինչպես նաև իր նպատակահարմարությամբ ստեղծել այլ մարմիններ այլ նպատակներով՝ պահանջելով կամ առանց պահանջելու վճարել տուրքեր, ներգրավվածության վճար կամ գլխահարկ: Միջազգային Նախագահն իրավունք ունի և իրավասու է նշանակել ժամանակավոր պաշտոնյաների՝ տնօրինելու կամ վերահսկելու նման կազմակերպող հանձնաժողովների կամ Տեղական Արհմիությունների ու այլ մարմինների ֆինանսական միջոցները: Այնուհետև Միջազգային Նախագահը դրա մասին պետք է զեկուցի Միջազգային Գործադիր Խորհրդին:

Հոդված XV
ՏԵՂԱԿԱՆ ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաս 1. Բոլոր Տեղական Արհմիությունները և նրանց կից մարմինները պետք է երաշխավորեն և պահպանեն երաշխիքային պարտատոմսերը այն գումարների չափով և ձևով, որոնք պահանջվում են կիրառվող կանոնադրությամբ: Միջազգային քարտուղար-գանձապահը կարող է կառավարել ցանկացած պարտատոմսի գումարի մեծացումը, երբ դա անհրաժեշտ և նպատակահարմար գտնի, ինչպես նաև թույլ տալ ցանկացած Տեղական Արհմիությանը երաշխավորել պարտատոմսերը, եթե նույնիսկ դա կանոնադրությամբ չի պահանջվում:

Մաս 2. Ոչ ոք չի կարող ընտրվել պաշտոնյայի, Գործադիր Խորհրդի անդամի, պատվիրակի կամ Տեղական Արհմիության այլ պաշտոնյայի պաշտոնի նշանակման համար, եթե անդամ չի եղել Տեղական Արհմիությունում շարունակական ժամանակ և նշանակումից անմիջապես առնվազն երկու տարի առաջ չի գտնվել նպաստավոր պայմաններում, այսինքն այդ ընթացքում չի վճարել Տեղական Արհմիության աշխատողների համար պահանջվող բոլոր տուրքերը վճարման համար սահմանված ամեն ամսվա ընթացքում: Չնայած վերը նշվածին՝ Տեղական Արհմիությունը կարող է ընդունել տեղական արհմիության այնպիսի կանոնակարգ, որը նվազեցնում է շարունակական լավ վիճակում գտնվելու պահանջը՝ երկու տարին դարձնելով

առնվազն վեց ամիս: Ոչ մի անձ, ով դատապարտված է եղել ծանր հանցագործության մեջ ինչպես նշված է Լանդրում Գրիֆին Ակտի 504-րդ մասում (կամ մեղադրվող հանցագործության մեջ) ըստ կիրառվող օրենքի դրույթների չի կարող ընտրվել պաշտոնի նշանակման համար համաձայն այս Մասի պայմանների: Եթե Տեղական Արհմիությունն օժտված է լինում իրավասությամբ ավելի քիչ, քան երկու տարի, շարունակական նպաստավոր վիճակում գտնվելու ժամանակահատվածը համապատասխանում է այն ամբողջ ժամանակաշրջանին, որի ժամանակ Տեղական Արհմիությունը կրում է իրավասությունը: Միջազգային Նախագահը կարող է ազատել վերը նշված պահանջների իրականացումից, եթե լուրջ հիմնավորում է ներկայացվում: Ցանկացած Տեղական Արհմիություն կարող է իր Սահմանադրության և կանոնակարգի մեջ ներկայացնել նշանակման ընտրության հետ կապված հետագա սահմանափակումները՝ հաշվի առնելով, որ այդ դրույթները պետք է հաստատվեն Միջազգային Արհմիության կողմից: Տեղական Միության Գործադիր Խորհրդի պահանջով Միջազգային Նախագահը կարող է Տեղական Արհմիությանն ազատել ընտրության պահանջներից հիմնավոր պատճառի ներկայացման դեպքում: Ասոցիացված, գործող և թոշակառու անդամները, ովքեր տեղական Արհմիության աշխատող անդամների համար սահմանված ամբողջական տուրքերից պակաս են վճարում, չեն կարող ընտրվել պաշտոնյայի, Գործադիր Խորհրդի անդամի, պատվիրակի կամ այլ պաշտոնի նշանակման համար: Տեղական Արհմիությունում պաշտոնյայի, Գործադիր Խորհրդի անդամի, պատվիրակի կամ այլ պաշտոնի համար լիազորված քվեարկությունը թույլատրված չէ: Ցուցակում ներառված նոր թեկնածուներին չի թույլատրվում Տեղական Արհմիության ներսում մասնակցել պաշտոնյայի, Գործադիր Խորհրդի անդամի, պատվիրակի կամ այլ պաշտոնի նշանակման ընտրությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ Միջազգային Նախագահը արագ կերպով հաստատում է դա Տեղական Միության Գործադիր Խորհրդի պահանջով:

Մաս 3. Տեղական Արհմիությունների և նրանց կից մարմինների Սահմանադրությունն ու կանոնակարգը, ինչպես նաև դրանց փոփոխությունները պետք է ներկայացվեն Միջազգային

Արհմիությանը և հաստատված լինեն մինչ վավերականացումը, չնայած, որ ըստ այդ հաստատման, բոլոր Տեղական Արհմիությունների և նրանց կից մարմինների Սահմանադրությունն ու կանոնակարգը պետք է միշտ համապատասխանեցվեն Միջազգային Արհմիության Սահմանադրությանն ու Կանոնակարգերին. քանի որ ժամանակ առ ժամանակ դրանք ենթակա են փոփոխման: Եթե Տեղական Արհմիությունը կամ նրան կից մարմինը չապահովեն գործող Սահմանադրության ու Կանոնակարգերի հաստատումը, Միջազգային Արհմիության Սահմանադրության ու Կանոնակարգերի դրույթները, քանի որ դրանք ժամանակ առ ժամանակ փոփոխվում են, նրանք կարող են կառավարել Տեղական Արհմիությունն ու նրան կից մարմինը որքանով, որ դա կիրառելի է: Չնայած հաստատմանը, եթե որևէ հակասություն է առաջանում Տեղական Արհմիության և կից մարմինների Սահմանադրության և Կանոնակարգերի կամ դրանց փոփոխությունների ու Միջազգային Արհմիության Սահմանադրության և Կանոնակարգերի միջև, քանի որ դրանք կարող են ժամանակ առ ժամանակ փոփոխվել, նման դեպքերում առաջնորդվում են Միջազգային Արհմիության Սահմանադրությամբ և Կանոնակարգերով:

Մաս 4. Յուրաքանչյուր Տեղական Արհմիություն պահանջի դեպքում իր անդամներին պետք է ապահովի Միջազգային և Տեղական Արհմիության Սահմանադրության և Կանոնակարգերի պատճեններով: Միջազգային Արհմիությունը Տեղական Միությանը Միջազգային Սահմանադրության և կանոնակարգերի պատճենները տրամադրում է ինքնարժեքով:

Մաս 5. Բոլոր Տեղական Արհմիությունները պետք է ներկայանան ընդհանուր, ստորաբաժանումների, կանոնադրության կամ աշխատանքի իրականացման վայրի վերաբերյալ թեմաներով անդամակցության հանդիպումներին առնվազն երկու ամիսը մեկ, բացի Հուլիս և Օգոստոս ամիսներից: Յուրաքանչյուր Տեղական Արհմիության Գործադիր Խորհուրդ պետք է ամեն դեպքում առնվազն ամսեկան մեկ անգամ հանդիպում անցկացնի: Այնուամենայնիվ, եթե Տեղական Արհմիության անդամակցությամբ հաստատվում է, այս մասի

պահանջները կարող են փոփոխվել Տեղական Արհմիության Սահմանադրության և Կանոնակարգերի մեջ:

Մաս 6(Ա). Սկսած 2016թ. Հունվարի 1-ից բոլոր այն անդամների համար, ով ունի տարեկան \$16,000 կամ ավել եկամուտ, ամսեկան նվազագույն տուրքը կազմում է \$36.00: Սկսած 2016թ. Հունվարի 1-ից բոլոր այն անդամներ համար, ովքեր ունեն \$5,500 - \$16,000 տարեկան եկամուտ, ամսեկան նվազագույն տուրքը կազմում է \$31.00:

2017 թ. Հունվարի 1-ից մինչև 2020թ. հունվարի 1-ը տարեկան \$5,500 կամ ցածր եկամուտ ունեցող բոլոր անդամների համար ամսեկան տուրքերը տարեկան բարձրացվելու են \$1.00-ով, դա կգործի ամեն տարվա Հունվարի մեկից:

Չնայած վերը նշվածին, Տեղական Արհմիության նախաձեռնությամբ, նվազագույն տուրքերը կարող են նվազեցվել թոշակառուների, կազմակերպող հանձնաժողովի անդամների և ասոցիացված անդամների համար: Տեղական Արհմիությունը կարող է նվազագույն տուրքեր սահմանել այն անդամների համար, ովքեր տարեկան ունեն \$5,500-ից քիչ եկամուտ: Ըստ պահանջի, այս պահանջները կարող են չեղյալ համարվել Միջազգային Նախագահի կողմից, ինչպես նշված է ստորև 6(d) ենթամասում:

(Բ). Տեղական Արհմիության տուրքերի համակարգը չի սահմանում տուրքերի գումարի առավելագույն սահմանափակում ըստ անդամի, եթե այն տարբերվում է Տեղական Արհմիության տուրքերի բանաձևից: Ըստ պահանջի, այս պահանջը կարող է չեղարկվել Միջազգային Նախագահի կողմից, ինչպես նշված է ստորև 6(d) ենթամասում՝ հաշվի առնելով, որ Միջազգային Նախագահի կողմից թույլատրվող ցանկացած առավելագույն սահմանափակում ինդեքսավորվում է՝ հաշվի առնելով գնաճը:

(Գ). Տեղական Արհմիությունները, որտեղ Սահմանադրությունն ու կանոնակարգերը սահմանում են տուրքերի այլ համակարգ, քան ֆիքսված տոկոսադրույքի համակարգն է (օրինակ սանդղակային, ժամային կամ տոկոսային բանաձևի համակարգը), պետք է պահպանեն բանաձևը, որպեսզի

ապահովեն այս մասում նշված ֆիքսված տոկոսադրույքին համարժեք տուրքերի նվազագույնը:

Յուրաքանչյուր Տեղական Արհմիություն փորձում է ունենալ ամսեկան համախառն շահույթից պահվող տոկոսների վրա հիմնված անդամակցության տուրքերի համակարգ:

Տուրքերի տոկոսային համակարգին անցում կատարելու նվազագույն տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը հավասար է Տեղական Արհմիության տուրքերի նախորդ համակարգից ստացվելիք եկամուտին այդ պահից սկսած:

Տուրքերի նախորդ համակարգից ստացվելիք եկամուտի հաշվարկը կատարվում է Տեղական Արհմիության անդամակցության ամսեկան միջինի հիման վրա վեց ամիս ժամանակահատվածի համար՝ մեկ ամիսն ավարտելով համակարգի փոխակերպման նախորդ օրը:

Այս ենթաբաժնի կիրառմանն ու մեկնաբանմանը վերաբերող հարցերը լուծվում են Միջազգային Քարտուղար-գանձապահի որոշմամբ, համաձայն Գործադիր Խորհրդի բողոքի:

(Դ). Միջազգային Նախագահը Միջազգային Գործադիր Խորհրդի վավերականացմամբ կարող է ազատել այս բաժնի պահանջներից հիմնավոր պատճառի դեպքում իրեն նպատակահարմար ժամանակով, ինչպես շարադրված է ստորև, այնքան ժամանակ, մինչև նման ազատումը չի խոչընդոտում Տեղական Արհմիությանը պատշաճ կերպով ներկայացնել իր անդամներին: Ցանկացած Տեղական Արհմիություն կարող է ամբողջովին ազատվել այդ պահանջների իրականցումից, եթե իր Սահմանադրությանն ու Կանոնակարգերին համաձայն, սահմանել է տուրքերի այլընտրանքային համակարգ կամ մեծացրել է տուրքերի չափը՝ համապատասխանելով տվյալ Բաժնի պահանջներին:

Տվյալ բաժնի պահանջների իրականացումից որևէ մեկից ամբողջական կամ մասնակի ազատումը հնարավոր է, եթե հաշվի է առնվում Տեղական Արհմիության ռեսուրսները, տուրքերի տոկոսադրույքը, արդյոք վերջերս Տեղական Արհմիությունը մեծացրել է տուրքերի չափը, թե ոչ, նրա կողմից ներկայացված աշխատողների տոկոսային հարաբերությունը՝ պաշտպանված

միության անվտանգության դրույթով և անդամների աշխատավարձի չափը:

Տեղական Արհմիությունը կարող է նաև ազատվել այդ պահանջների իրականացումից այն դեպքում, երբ աշխատում է ակտիվ և ռազմավարական առումով կազմակերպչական գործունեության մեջ ներգրավված նահանգների հետ՝ արդյունաբերական ստորաբաժանումների կողմից հաստատված պլանի համաձայն:

(Ե). Այս բաժնում ոչ մի դրույթ չի վերաբերում Կանադայում հիմնադրված Տեղական Արհմիություններին:

Մաս 7(Ս). Ցանկացած Կանադական Տեղական Արհմիության բոլոր անդամների համար նվազագույն տուրքերը կազմում են ամսեկան \$10.00, բացի այն դեպքերից, երբ Տեղական Արհմիության նախաձեռնությամբ այն կարող է նվազեցվել մինչև ամսեկան առնվազն \$2.50 թոշակառու անդամների և կազմակերպող հանձնաժողովի անդամների համար և ամսեկան \$2.00՝ ասոցիացված անդամների համար:

Կանադական Տեղական Արհմիությունների համար տուրքերի համակարգի տոկոս և ցանկացած Տեղական Արհմիության նվազագույն տուրքերը կազմում են ամսեկան համախառն աշխատավարձի 1 տոկոսի չափ կամ ամսեկան \$10.00, որն ավելի շատ է, բացի այն դեպքերից, երբ Տեղական Արհմիության նախաձեռնությամբ այն կարող է նվազեցվել թոշակառու անդամների, կազմակերպող հանձնաժողովի անդամների համար և ասոցիացված անդամների համար:

Միջազգային Նախագահը Միջազգային Գործադիր խորհրդի հաստատմամբ կարող է ազատել այս պահանջներից իրեն նպատակահարմար ժամանակով, այնքան ժամանակ, մինչև նման ազատումը չի խոչընդոտում Տեղական Արհմիությանը պատշաճ կերպով ներկայացնել իր անդամներին:

(Բ). Կանադական Տեղական Արհմիություններում բոլոր տուրքերի չափը կարող է մեծացվել Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից՝ Կանադական Խորհրդի հանձնարարականի հիման վրա:

Մաս 8. Լավ վիճակում գտնվելու և Տեղական Արհմիության և

Միջազգային Արհմիության բոլոր պարզավճարներից ու շահույթներից օգտվելու համար անդամները պետք է ժամանակին վճարեն Տեղական Արհմիության Սահմանադրությամբ սահմանված բոլոր տուրքերն ու վճարները:

Մաս 9. Երբ անդամն ազատված է աշխատանքից կամ բացակա է աշխատանքից գործատուի լոքաութի կամ միության կողմից թույլ տրված գործադուլի պատճառով ցանկացած օրացուցային ամսվա ընթացքում ավելի քան 20 օր, նա կարող է ստանալ իրավունք, եթե դա սահմանված է Տեղական Միության Սահմանադրությամբ և Կանոնակարգերով, չվճարել անդամակցության տուրքերը գործազրկության ժամանակահատվածում, բայց դա չպետք է գերազանցի ցանկացած օրացուցային ամսվա մեջ վեց ամիսը:

Մաս 10. Ցանկացած անդամ կարող է ստանալ տուրքերի վճարման համար ստացական կամ հաստատում:

Մաս 11. Ցանկացած Տեղական Արհմիություն կարող է պատվիրել, որ կանխիկացման քարտերը դուրս հանվեն այն անդամների կողմից, ովքեր աշխատում են առևտրից և տեղական Արհմիության իրավասություններից դուրս:

Մաս 12. Տեղական Արհմիությունը գրավոր ձևով կձանուցվի, երբ որևէ կողեկտիվ պայմանագիր կամ փոխհամաձայնության հուշագիր ստորագրվի և կտեղեկացվի ընդունվող աշխատողների քանակի և պայմանագրի ժամկետի ավարտի մասին:

Ֆայլի պահպանման և տեղեկատվական նպատակներով Տեղական Արհմիության կողմից ուժի մեջ մտած համաձայնագրերի և պայմանագրերի պատճենները դրանք ստորագրելուց հետո պետք է ուղարկվեն Միջազգային Արհմիության Հետազոտությունների Բաժին: Նման ծանուցումը կամ ներկայացումը չի պարտադրում որևէ պարտավորվածություն Միջազգային Արհմիությանը կամ նրա պաշտոնյաներին, ինչպես նաև նրանց չի դարձնում կողեկտիվ համաձայնագրի կամ փոխհամաձայնության հուշագրի որևէ կողմ:

Մաս 13. Ոչ մի Տեղական Արհմիություն կամ նրան կից մարմին

և հետևաբար ստորաբաժանում, անդամ կամ անդամների խումբ, ներառյալ Խորհուրդները, խորհրդակցությունները, լիգաները, ակումբները կամ Միջազգային Արհմիության անդամներից բաղկացած որևէ ասոցիացիա և նրա ստորաբաժանումները, չեն կարող ոչ մի ձևով՝ ուղղակի կամ անուղղակի, Միջազգային Արհմիության, Տեղական Արհմիության կամ կից մարմնի կամ այլ անվան տակ օգտագործել, շահագործել կամ վաճառել, գանձել կամ հավաքել որևէ հարկ, տուրք կամ այլ գումարներ, իրականացնել որևէ գործողություն միջոցների հավաքագրման նպատակով, ներառյալ որևէ հրապարակման մեջ ծրագրերն ու միջնորդող գովազդները, լինի դա ուղղակի կամ անուղղակի կերպով, առանց ձեռք բերելու Միջազգային Նախագահի գրավոր թույլտվությունը:

Այս բաժնում բոլոր վերը շարադրված հարցերը, որոնք առանց սահմանափակման վերաբերում են ֆինանսական միջոցներին, միջնորդություններին, նվերներին կամ Միջազգային Արհմիության կամ Տեղական Արհմիության ու կից մարմնի անունից հավաքված նվիրատվություններին, միշտ պետք է ենթարկվեն Միջազգային Արհմիության աուդիտին, իսկ այս բաժնում ներկայացված հարցերի վերաբերյալ բոլոր գրքերը, արձանագրությունները և փաստաթղթերը հասանելի պետք է լինեն Միջազգային Արհմիությանը նրա կողմից վերահսկողության, պատճենավորման և աուդիտի իրականացման նպատակով:

Միջազգային Նախագահը կարող է ունենալ իրավունք հաստատել այնպիսի կանոններ ու կանոնակարգեր, որոնք գտնում է նպատակահարմար և պատշաճ տվյալ Բաժնի նպատակներն իրականացնելու համար:

Մաս 14. Յուրաքանչյուր Տեղական Արհմիության Գործադիր Խորհուրդը նշանակում է այնպիսի հանձնաժողովներ, որոնք անժիրաժեշտ են Միջազգային Միության կազմակերպչական, քաղաքական գործունեության, սոցիալական և տնտեսական արդարության և կենսաթոշակային ծրագրերի ու քաղաքականության իրականացման համար: Եթե հատուկ նպատակներով հանձնաժողով կամ հանձնաժողովներ չեն նշանակվում, Տեղական Արհմիության գործադիր Խորհուրդը

մատուցում է այդ ծառայությունը իր կարողությունների շրջանակներում:

Մաս 15. Ոչ մի Տեղական Արհմիություն չի կարող բացել իր կողմից գրանցված ֆեդերալ քաղաքական հանձնաժողով կամ քաղաքական թեկնածուների հիմնադրամ ֆեդերալ ընտրություններում ներդրումներ կատարելու նպատակով՝ այդուհանդերձ հաշվի առնելով, որ Միջազգային Նախագահը կարող է իր հայեցողությամբ չեղարկել այդ դրույթը կամ սահմանել այնպիսի պայմաններ, որոնք Միջազգային Նախագահը անհրաժեշտ կհամարի:

Մաս 16. (Ա). Յուրաքանչյուր Տեղական Արհմիություն պետք է շարունակի իրականացնել տեղական արհմիության տարեկան բյուջեի կազմակերպումը, որը հավասար է տեղական բյուջեի 20 տոկոսին (բոլոր գլխահարկերի պարտավորությունների վճարումից հետո): Այդ բյուջեն պետք է տնօրինվի Միջազգային Արհմիության համապատասխան արդյունաբերական ստորաբաժանման սկզբունքներին և պլանին համապատասխան: Յուրաքանչյուր արդյունաբերական ստորաբաժանում պետք է ներկայացնի իր սկզբունքներն ու պլանը Միջազգային Գործադիր Խորհրդի հաստատմանը ամեն տարի:

(Բ). Ցանկացած տեղական միություն պետք է սահմանի առանձին հաշիվ կամ հաշվապահական հաշվառման համար գումար, որը ներառում է իր ամենամյա կազմակերպչական բյուջեն:

(Գ). Այն դեպքում, երբ Միջազգային Արհմիության համապատասխան արդյունաբերական ստորաբաժանումը կարծում է, որ տեղական արհմիությունը առանց հիմնավոր պատճառի ձախողել է իրականացնել կազմակերպչական բյուջեի 20 տոկոսի պարտավորությունը կամ տեղական արհմիության կազմակերպչական բյուջեն չի ծախսել միության ռազմավարական կամ ստորաբաժանման պլանին համապատասխան, նա կարող է գործը փոխանցել Միջազգային Քարտուղար-գանձապահին, որը կստուգի տեղական արհմիության կազմակերպչական հաշիվները և ծախսերը: Եթե ստուգումը ցույց է տալիս, որ տեղական արհմիությունը չի իրականացնում իր կազմակերպչական բյուջեն, ինչպես

սահմանված է այս դրույթում, Քարտուղար-Գանձապետը կարող է ղեկավարել, որ միայն որոշ պլանավորված ծախսեր շարունակեն իրականացվել տեղական արհմիության կողմից նրա կազմակերպչական հաշվից մինչև ստորաբաժանումն ու տեղական արհմիությունը փոխհամաձայնության գան խնդրի ավելի լայնամասշտաբ լուծման վերաբերյալ՝ Միջազգային Քարտուղար-Գանձապահի կողմից սահմանված հրատապ ընթացակարգերին համապատասխան:

(Դ). Եթե ոչ մի համաձայնություն չի ձեռքբերվում, համապատասխան ստորաբաժանումը գործը փոխանցում է Միջազգային Նախագահին, որը կարող է գործի լսում նշանակել Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից նշանակված պաշտոնյայի կողմից: Կախված գործը լսող պաշտոնյայի զեկույցից՝ Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է տեղական Արհմիությանը ստիպել ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարել կազմակերպչական հաշվի կամ տեղական արհմիության հաջորդ տարեկան կազմակերպչական բյուջեի գումարները կազմակերպչական արշավի նպատակով, որը սահմանված է տվյալ ստորաբաժանման ազգային պլանում:

Մաս 17. Միջազգային Արհմիության արդյունաբերական ստորաբաժանումները կարող են սահմանել տեղական արհմիության կատարողականության և հաշվապահության լրացուցիչ չափանիշներ, որպեսզի տեղական արհմիությունները իրականացնեն արդյունաբերական ստորաբաժանումների ժողովրավարական և օրինական քաղաքականությունը՝ Միջազգային Գործադիր Խորհրդի հաստատման համաձայն:

Մաս 18 (Ա). ԱՄՆ-ի յուրաքանչյուր տեղական արհմիություն պետք է ներդնի առնվազն \$6.00-ին համարժեք տարեկան գումար ամեն անդամի համար կամ ինչպես ամեն տարի սահմանվում է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից՝ աջակցելու SEIU-ի ամբողջական քաղաքական կրթությանն ու գործողությունների ծրագրին: Այս տարեկան SEIU C.O.P.E. միջոցների հավաքագրման պարտականությունը կարող է բավարարվել SEIU C.O.P.E-ին անդամների կամավոր նվիրատվություններով, Միջազգային Նախագահի կողմից հաստատված կազմակերպության կողմից կամ այդ երկուսի համադրության

միջոցով: Տեղական արհմիությունների կողմից SEIU C.O.P.E-ի համար հավաքված բոլոր նվիրատվությունները, պետք է ուղարկել SEIU C.O.P.E-ին: Ցանկացած նվիրատվություն, որը գերազանցում է ամեն անդամի կողմից տարեկան \$6.00-ը կամ այլ չափի գումար, պետք է հետ վերադարձվի տեղական արհմիությանը իր քաղաքական ծրագրերի համար, ինչպես սահմանված է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից: Եթե տեղական Արհմիությունը ձախողում է իրականացնել SEIU C.O.P.E. -ի ֆինանսական միջոցների տարեկան հավաքագրման պարտականությունը, նա պետք է նվիրաբերի պակասող գումարի և դրան ավելացրած 50 տոկոսի չափով գումար կամ այլ գումար, որը սահմանված է Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից՝ SEIU-ի քաղաքական կրթությանն ու գործողությունների ծրագրին աջակցելու նպատակով:

(Բ). Ցանկացած Տեղական Արհմիության նպատակն է ներգրավել և պահպանել իր անդամների 20 տոկոսին որպես կամավոր մասնակիցներ SEIU C.O.P.E-ին կամ Միջազգային Նախագահի կողմից հաստատված այլ կազմակերպությանը վերագրված գործատուների աշխատանքի սկզբունքով կամ կանոնավոր կերպով հարկվող ծրագրերի միջոցով:

Հոդված XVI

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՇԱՀԵՐ, ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Բաժին 1. Սույն Միջազգային միության ոչ մի անդամ չպետք է վնասի այլ անդամի շահերը՝ վարձատրության կամ ֆինանսական կարգավիճակի հետ կապված հարցերի կամ որևիցե այլ գործողության (ուղղակի կամ անուղղակի) միջոցով, որը կարող է անիրավորեն վտանգել անդամի պաշտոնավարումը կամ կարգավիճակը:

Բաժին 2. Ցանկացած անդամ կարող է սույն Միջազգային միության շրջանակներում փոխադրվել մեկ Տեղական միությունից մյուսը, ինչը ենթակա է հաստատման այն Տեղական միության կողմից, որի կազմ ցանկանում է փոխադրվել տվյալ անդամը՝ պայմանով, որ տեղի չի ունենա ամսական վճարների շարունակական վճարման ընդհատում՝ եթե անհրաժեշտ է

ապահովել գործող կարգավիճակի շարունակականությունը կամ ընթացիկ հետկանչման քարտ ներկայացնելուն պես:

Հոդված XVII

ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐ

ՊՐԵԱՍԲՈՒԼԱ. Կամայական մեղադրանքների ներկայացումից անդամների պաշտպանությունն ապահովելու համար գործում են հետևյալ ընթացակարգերը.

Բաժին 1. Տեղական միություններին, նրանց պաշտոնյաներին կամ անդամներին, ինչպես նաև մասնաճյուղ հանդիսացող որևէ մարմնի պաշտոնյաներին և Միջազգային միության պաշտոնյաներին, ըստ հանգամանքների, կարող են ներկայացվել հետևյալ մեղադրանքները.

(Սույն հոդվածում գործածվելիս «Տեղական մարմին» տերմինը ներառում է սույն Միջազգային միության կողմից արտոնագրված ցանկացած Տեղական միություն կամ մասնաճյուղ հանդիսացող մարմին):

(1) Սույն սահմանադրության կամ Տեղական միության սահմանադրության և կանոնադրության որևիցե կոնկրետ դրույթի խախտում.

(2) Պաշտոնեական երդման խախտում.

(3) Հավատարմության կոպիտ խախտում կամ անդամին անվայելուչ արարք.

(4) Պաշտոնյաների դեպքում՝ խիստ անարդյունավետություն, որը կարող է խանգարել կամ վնասել Միջազգային միության կամ Տեղական միության շահերին.

(5) Ֆինանսական չարաշահումներ.

(6) Կոռուպցիոն կամ ոչ էթիկական գործելակերպին կամ շորթմանը մասնակցելը.

(7) Երկակի միության գործունեություն քարոզելը կամ դրանում ներգրավվելը, ներառյալ, սակայն առանց սահմանափակման, մրցակից արհեստակցական կազմակերպությանն աջակցելը կամ միության կազմից դուրս գալը՝ հոդված XXV-ի խախտմամբ.

(8) Միջազգային միության կամ Տեղական միության՝ ժողովրդավարորեն և օրինականորեն սահմանված կանոնների, կանոնակարգերի, քաղաքականության և ընթացակարգերի, ներառյալ՝ Միջազգային միության արդյունաբերական ստորաբաժանումների ժողովրդավարորեն և օրինականորեն սահմանված կանոնների, կանոնակարգերի, քաղաքականության և ընթացակարգերի խախտում, որոնք ենթակա են հաստատման Միջազգային գործադիր խորհրդի կողմից.

(9) Որևիցե դրամական միջոցների, գրքերի, փաստաթղթերի կամ Միջազգային միությանը կամ Տեղական միությանը պատկանող այլ ունեցվածքի անիրավորեն վերցնելը կամ պահելը, ինչպես նաև որևիցե մատյանների, գրառումների, հաշիվների, ստացականների, հավաստատոմսերի կամ Միջազգային միությանը կամ Տեղական միությանը պատկանող այլ ունեցվածքի անօրինական ոչնչացումը, խեղաթյուրումը կամ ջնջումը.

(10) Որպես գործադուլաբեկ հանդես գալը կամ Միջազգային միության կամ Տեղական միության կողմից սահմանված վարձատրության կամ աշխատանքի ստանդարտների խախտումը.

(11) Անդամի կամ պաշտոնյայի նկատմամբ անբարեխղճորեն կամ դիտավորությամբ կեղծ մեղադրանքներ առաջադրելը:

Մեղադրանքները պետք է լինեն կոնկրետ և գրավոր:

Բաժին 2(ա). Տեղական միության որևիցե անդամի կամ պաշտոնյայի դեմ մեղադրանքները պետք է ներկայացվեն կրկնօրինակով՝ Տեղական միության քարտուղարին, որը պետք է դրա պատճենը անձամբ կամ գրանցված կամ պատվիրված նամակով տրամադրի մեղադրյալին՝ ուղարկելով մեղադրյալի վերջին հայտնի հասցեով՝ մեղադրանքների վերաբերյալ դատավարական լուսմից առնվազն 10 օր առաջ: Մեղադրանքներում պետք է հստակեցվեն այն իրադարձությունները կամ գործողությունները, որոնք, ըստ մեղադրող կողմի, հիմք են հանդիսանում մեղադրանքների համար, և նշվի (նշվեն) սույն հոդվածի բաժին 1-ի այն

ենթաբաժին(ներ)ը, որը (որոնք), ըստ մեղադրող կողմի, խախտվել են: Եթե մեղադրանքները հստակեցված չեն, դատաքննության մարմինը կարող է չընդունել մեղադրանքները դատավարական լուսմից առաջ կամ դրա ընթացքում, սակայն մեղադրող կողմն իրավունք ունի կրկին առավել մանրամասն ներկայացնել մեղադրանքները՝ սույն բաժնի պահանջներին համապատասխան: Մեղադրանքներ չեն կարող ներկայացվել ավելի քան 6 ամիս անց՝ սկսած այն պահից, երբ մեղադրող կողմը տեղեկացել է կամ կարող էր ողջամտորեն տեղեկանալ այն գործողության կամ գործողությունների մասին, որոնք հիմք են հանդիսանում մեղադրանքների համար.

(բ). Տեղական միության Գործադիր խորհուրդը հանդես է գալիս որպես դատաքննության մարմին կամ նշանակում է այդպիսին, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանադրությամբ և Տեղական մարմնի կանոնադրությամբ նախատեսվում է մեկ այլ դատաքննության ընթացակարգ: Մեղադրյալը կարող է ներկայանալ անձամբ և վկաների հետ՝ պատասխանելու իրեն ներկայացված մեղադրանքներին և նրա նկատմամբ պետք է ապահովվի ամբողջական և արդար դատաքննություն: Մեղադրյալը կարող է ընտրել իր Տեղական միության որևէ անդամի կամ փաստաբանի (եթե դա թույլատրվում է Տեղական միության սահմանադրությամբ կամ կանոնադրությամբ), որպեսզի վերջինս ներկայացնի մեղադրյալին պաշտպանության ընթացակարգում.

(գ). Եթե մեղադրանքները կամ դրանց մի մասը հաստատվում են, ապա դատաքննության մարմինը կայացնում է վճիռ և սահմանում է կարգապահական միջոցներ՝ ինչպես նախատեսված է սույն սահմանադրությամբ: Եթե մեղադրանքները չեն հաստատվում, ապա դրանք հանվում են, և մեղադրյալը վերականգնում է Տեղական միության պաշտոնավարման կամ անդամակցության իր ամբողջական իրավունքները.

(դ). Տեղական միության սահմանադրությամբ կամ կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում, դատաքննության մարմնի որոշումը զեկուցվում է Տեղական միության անդամների հաջորդ հերթական նիստին, որպեսզի

ձեռնարկվեն Տեղական միության սահմանադրությամբ կամ կանոնադրությամբ նախատեսված միջոցներ.

(ե). Եթե Միջազգային նախագահը գտնում է, որ Տեղական միության պաշտոնյայի նկատմամբ ներկայացված մեղադրանքները կապված են այնպիսի իրավիճակի հետ, որը կարող է լքողներին վտանգել Տեղական միության կամ Միջազգային միության շահերը, ապա Միջազգային նախագահը կարող է կասեցնել այդպիսի պաշտոնյայի պաշտոնավարումը Տեղական միությունում՝ մինչև որոշում ընդունելը.

(զ). Միջազգային նախագահը կարող է առաջնային իրավասություն ստանձնել.

i. Եթե Տեղական միությունը, Տեղական միության գործադիր խորհուրդը, Տեղական միության պաշտոնյան կամ Տեղական միության անդամը կամ անդամները կարծում են, որ Տեղական միության անդամի կամ պաշտոնյայի նկատմամբ ներկայացված մեղադրանքները կապված են այնպիսի իրավիճակի հետ, որը կարող է լքողներին վտանգել Տեղական միության կամ Միջազգային միության շահերը, կամ որ Տեղական միության դատաքննության ընթացակարգը ամբողջությամբ չի պաշտպանի անդամի, պաշտոնյայի կամ Տեղական միության շահերը, և նշված կողմը հայցում է, որ Միջազգային նախագահին ստանձնի առաջնային իրավասություն.

ii. Եթե Միջազգային նախագահը, հետաքննության հիման վրա, կարծում է, որ անդամի կամ պաշտոնյայի նկատմամբ ներկայացված մեղադրանքները ներառում են իրավիճակ, որը կարող է լքողներին վտանգել Տեղական միության կամ Միջազգային միության շահերը:

Երբ Միջազգային նախագահին ստանձնում է առաջնային իրավասություն, նա կարող է կասեցնել Տեղական միության դատաքննության մարմնի կողմից իրականացվող վարույթը և, առնվազն 10 օր առաջ ծանուցմամբ, մեղադրանքների վերաբերյալ դատավարական լսում անցկացնել անձամբ կամ Միջազգային նախագահի կողմից նշանակված դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների առջև (որը պարտադիր չէ, որ սույն կազմակերպության անդամ հանդիսանա): Միջազգային

նախագահը որոշում է կայացնում՝ դատական լսման ընթացքում արված արձանագրության և դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների զեկույցի հիման վրա:

Բաժին 3. Միջազգային միության պաշտոնյայի կամ Տեղական միության նկատմամբ մեղադրանքները պետք է ներկայացվեն կրկնօրինակով՝ Միջազգային քարտուղար-գանձապահին, որը պետք է դրա պատճենը անձամբ կամ գրանցված կամ պատվիրված նամակով տրամադրի մեղադրյալին՝ ուղարկելով մեղադրյալի վերջին հայտնի հասցեով՝ մեղադրանքների վերաբերյալ դատավարական լուսմից առնվազն 10 օր առաջ: Միջազգային գործադիր խորհուրդը կարող է մեղադրանքների վերաբերյալ լսում անցկացնել ինքնուրույն կամ իր կողմից նշանակված դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների առջև, կամ կարող է որոշում կայացնել մեղադրանքները մերժելու վերաբերյալ առանց դատավարական լսում անցկացնելու անհրաժեշտության: Եթե դատավարական լսումն անցկացվում է դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների կողմից, Միջազգային գործադիր խորհուրդն իր որոշումը կայացնում է դատական լսման ընթացքում արված արձանագրության և դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների զեկույցի հիման վրա:

Բաժին 4. Սույնով նախատեսված բոլոր լսումներում կամ դատաքննություններում, եթե մեղադրանքներ ներկայացնող անդամը հանդիսանում է դատաքննության մարմնի անդամ, նա կարող է ներկայանալ և ելույթ ունենալ՝ ի պաշտպանություն մեղադրանքների, սակայն չի կարող մասնակցել այդպիսի մեղադրանքների վերաբերյալ քննարկմանը կամ որոշումների կայացմանը: Եթե մեղադրյալը չի կարող կամ չի ցանկանում ներկա գտնվել սույնով նախատեսված որևիցե լսմանը, ապա պաշտպանությունը կարող է ներկայացվել գրավոր: Չներկայանալու կամ պաշտպանություն չներկայացնելու դեպքում, դատաքննության մարմինը կանցկացնի լսումը անկախ մեղադրյալի բացակայության հանգամանքից:

Բաժին 5. Դատաքննության մարմինը, անհրաժեշտ պատշաճ ընթացակարգ իրականացնելուց հետո, կարող է սահմանել այնպիսի տուգանք, որն այն նպատակահարմար է համարում և

որը պահանջվում է գործով:

Բաժին 6. Մեղադրյալի կամ մեղադրանքներ ներկայացնող անդամի կողմից Միջազգային գործադիր խորհրդին կարող է ներկայացվել մեղադրանքների վերաբերյալ Տեղական միության ցանկացած որոշման բողոքարկում՝ պայմանով որ տվյալ որոշումը հանդիսանում է վերջնական որոշում՝ Տեղական միության սահմանադրության և կանոնադրության դրույթներին համապատասխան, կամ Միջազգային նախագահի որոշման բողոքարկում: Ցանկացած բողոքարկում պետք է ներկայացվի գրավոր Միջազգային քարտուղար-գանձապահին, պատվիրված կամ գրանցված փոստով՝ որոշումից 15 օրվա ընթացքում: Չի պահանջվում որևէ առանձնահատուկ ձև կամ ընթացակարգ, բացառությամբ այն, որ բողոքարկման մեջ պետք է հստակորեն նշվի այն որոշումը, որը բողոքարկվում է, և բողոքարկման հիմքերը: Ցանկացած բողոքարկման քննարկման ընթացքում, բողոքարկվող որոշումն ամբողջական ուժի մեջ է մնում, բացառությամբ այն դեպքերի, երբ կասեցվում է Միջազգային գործադիր խորհրդի կողմից: Միջազգային գործադիր խորհուրդը կարող է որոշում կայացնել բողոքարկման վերաբերյալ դատաքննության մարմնի կողմից արված արձանագրության հիման վրա կամ կարող է, իր հայեցողությամբ, առնվազն 10 օր առաջ ծանուցմամբ, լսել փաստարկները կամ անցկացնել վերալուսման ինքնուրույն կամ իր կողմից նշանակված դատաքննության պաշտոնյայի կամ պաշտոնյաների առջև: Միջազգային գործադիր խորհուրդը կարող է հաստատել, չեղյալ հայտարարել կամ փոփոխել բողոքարկվող որոշումը:

Բաժին 7. Մեղադրանքների վերաբերյալ Միջազգային գործադիր խորհրդի ցանկացած որոշման բողոքարկումներ կարող են ներկայացվել հաջորդ Համաժողովին: Ցանկացած բողոքարկում պետք է ներկայացվի միննույն կերպով և միննույն ժամկետներում, որոնք նախատեսված են Միջազգային գործադիր խորհրդին ներկայացվող բողոքարկումների համար: Բողոքարկման քննարկման ընթացքում բողոքարկվող որոշումն ամբողջական ուժի մեջ է մնում: Բողոքարկողն իրավունք ունի ներկայանալ Համաժողովի բողոքարկման հանձնաժողովի առջև և, եթե բողոքարկողը Տեղական միություն է կամ անդամ է, որը

բողոքարկում է անդամակցությունից հեռացումը, իրավունք ունի ներկայանալ անմիջապես Համաժողովի առջև՝ Համաժողովի կողմից հաստատված պայմաններում և ժամանակահատվածում: Անհատ բողոքարկողը, բացառությամբ անդամակցությունից հեռացումը բողոքարկողի, իրավունք ունի ներկայանալ անմիջապես Համաժողովի առջև՝ միայն Համաժողովի համաձայնությամբ: Համաժողովի որոշումը բոլոր բողոքարկումների վերաբերյալ վերջնական և պարտադիր կատարման ուժ ունի:

Բաժին 8. Համաձայն գործող օրենսդրական ակտերի՝ յուրաքանչյուր Տեղական միություն կամ վերջինիս անդամ կամ պաշտոնյա կամ Միջազգային միության պաշտոնյա, որի նկատմամբ ներկայացվել են մեղադրանքներ և դրա արդյունքում կիրառվել է կարգապահական միջոց, կամ որը պնդում է, որ տուժել է կայացված անբարենպաստ որոշումների կամ վճիռների արդյունքում, համաձայնում է, որպես անդամակցության կամ մասնաճյուղ հանդիսանալու, ինչպես նաև անդամակցության կամ մասնաճյուղ հանդիսանալու շարունակման պայման, սպառել Միջազգային միության և Տեղական միության սահմանադրությամբ և կանոնադրությամբ նախատեսված բոլոր իրավական միջոցները, և այնուհետև համաձայնում է չներկայացնել որևիցե հայց կամ դիմում որևիցե դատարանի, տրիբունալի կամ այլ հաստատության՝ նախքան այդ իրավական միջոցները սպառելը:

Բաժին 9. Սպասարկման աշխատողների Միջազգային միության (SEIU) անդամների Իրավունքների և պարտականությունների օրինագիծը Միությունում իրականացվում է բացառապես սույն հոդվածով սահմանված ընթացակարգերի միջոցով, և սույնով նախատեսված ընթացակարգերին համապատասխան ընդունված ցանկացած որոշում, ներառյալ բոլոր բողոքարկումները, վերջնական են և պարտադիր կատարման ուժ ունեն բոլոր կողմերի համար և ենթակա չեն դատական վերանայման:

ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԻԶԱՆԿՅԱԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Բաժին 1. Տեղական միությունները պետք է միավորված լինեն տեղական, տարածաշրջանային, ազգային կամ միջազգային մարմինների հետ, եթե այդպիսիք գոյություն ունեն, համաձայն Միջազգային գործադիր խորհրդի կողմից սահմանված կանոնների: Միջազգային նախագահը կարող է, իր հայեցողությամբ և հիմնավոր պատճառների առկայության դեպքում, վերացնել տվյալ պահանջը առանձին տեղական միությունների համար:

Բաժին 2. Միջազգային գործադիր խորհուրդը պետք է ժամանակ առ ժամանակ հիմնադրի միջանկյալ կազմակերպություններ, նեռառյալ, սակայն առանց սահմանափակման, նահանգային և մարզային խորհուրդներ, կանադական տարածաշրջանային կոնֆերանսներ, ինչպես նաև այլ մարմիններ այն դեպքում, երբ, իր համոզմամբ, այդ մարմիններն անհրաժեշտ են՝ Միջազգային միության նպատակներն ու Տեղական միությունների շահերն ապահովելու համար: Միջազգային գործադիր խորհուրդը պետք է սահմանի այդ մարմինների իրավասությունը և հաստատի դրանց գործունեությունը և ֆինանսավորումը սահմանող կանոններ: Գանձման և բաշխման վարչական նպատակներով՝ Միջազգային գործադիր խորհուրդը կարող է պահանջել, որ Տեղական միությունները Միջազգային միությանը փոխանցեն մեկ անձին բաժին ընկնող հարկային վճարներ կամ այլ ֆինանսական պարտավորություններ, որոնք Տեղական միություններն ունեն միավորված մարմինների կամ կազմակերպությունների նկատմամբ: Ստանալուն պես՝ Միջազգային միությունը պետք է փոխանցի այդ վճարները համապատասխան միավորված մարմնին կամ կազմակերպությանը:

Բաժին 3. Բոլոր Տեղական միությունները, որոնք ըստ Միջազգային միության հաստատման, գտնվում են որևիցե միջանկյալ մարմնի իրավասության ներքո, պետք է միավորված լինեն այդ մարմինների հետ և հետևեն նրանց կանոնադրության պահանջներին, ներառյալ կանոնադրության այն դրույթները, որոնցով պահանջվում է մեկ անձին բաժին ընկնող հարկերի վճարում միջանկյալ մարմնին՝ վճարման ուշացման համար

տոկոսի հետ միասին՝ եթե դա լիազորված է միջանկյալ մարմնի կողմից: Միջազգային գործադիր խորհուրդը կարող է, իր հայեցողությամբ, փոփոխել այս պահանջները: Միջանկյալ մարմնի՝ մեկ անձին բաժին ընկնող հարկային պարտավորությունը կամ գնահատումը հաստատելու կամ փոփոխելու ցանկացած առաջարկ պետք է ներկայացվի Միջազգային նախագահին՝ վերջինիս կողմից հաստատման համար՝ նախքան միջանկյալ մարմնի հաստատմանն այն ներկայացնելը: Նահանգային խորհուրդների դեպքում՝ Տեղական միությունը պետք է միավորվի յուրաքանչյուր նահանգային խորհրդի հետ, որն իրավասություն ունի իր անդամների առաջնային աշխատավայրերի նկատմամբ, և յուրաքանչյուր նահանգային խորհրդին վճարի մեկ անձին բաժին ընկնող հարկ այն անդամների համար, որոնց առաջնային աշխատավայրը գտնվում է տվյալ նահանգային խորհրդի իրավասության ներքո:

Բաժին 4. Միջանկյալ մարմինների կանոնադրությունները չպետք է հակասեն Միջազգային միության սահմանադրությանը և կանոնադրությանը: Կանոնադրությունները պետք է սահմանեն, որ այդ մարմիններում Տեղական միության ունեցած քվեների քանակը պետք է համարժեք լինի իր թվաքանակին, որը որոշվում է միջանկյալ մարմնին մեկ անձին բաժին ընկնող հարկի վճարմամբ, բացառությամբ ասոցացված անդամների, ցմահ անդամակցությամբ անդամների և գործակալության վճար վճարողների: Միջազգային նախագահը կարող է վերացնել այս պահանջը, եթե նրա կողմից հաստատվում է քվեարկության այլընտրանքային ընթացակարգ: Կանոնադրությունները և դրանց փոփոխությունները պետք է ներկայացվեն Միջազգային նախագահին և հաստատվեն նրա կողմից՝ նախքան վավեր դառնալը: Նման հաստատման հետ մեկտեղ՝ յուրաքանչյուր միջանկյալ մարմին պետք է վերաներկայացնի իր կանոնադրությունը Միջազգային նախագահին՝ քննարկման և հաստատման համար, յուրաքանչյուր հերթական Միջազգային համաժողովի ավարտից 120 օրվա ընթացքում:

Բաժին 5. Տարածաշրջանային կոնֆերանսների և Համատեղ ու Նահանգային խորհուրդների կանոնադրությամբ պետք է սահմանվի, որ բոլոր գործող կանոնակարգերի համաձայն

ընտրված Տեղական միության բոլոր պաշտոնյաները պետք է, այդ ընտրության հիման վրա, դիտարկվեն որպես տվյալ մարմնի այն բոլոր Համաժողովների իրավասու պատվիրակ, որոնք կարող են տեղի ունենալ իրենց պաշտոնավարման ժամանակահատվածում: Եթե որոշակի միջանկյալ մարմնի կանոններով, Տեղական միությունը տվյալ Համաժողովին լրացուցիչ պատվիրակներ ունենալու իրավունք ունի, ապա, Տեղական միության գործադիր խորհրդի որոշմամբ, կարող է իրականացվել Համաժողովի լրացուցիչ թվով պատվիրակների առաջադրման և գաղտնի ընտրության ընթացակարգ: Տեղական միությունը պետք է սահմանի իր կանոնադրության մեջ պաշտոնյաներին որպես պատվիրակներ նշանակելու հերթականությունը, եթե Համաժողովին որպես պատվիրակներ ներկայանալու իրավունք ունեն պաշտոնյաների ընդհանուր քանակից քիչ թվով պաշտոնյաներ՝ պայմանով, որ Տեղական միության գլխավոր գործադիր տնօրենը կունենա այդպիսի իրավունք (եթե այլ կերպ իրավունակ է), նույնիսկ Տեղական միության կողմից նշանակման բացակայության դեպքում: Ցանկացած Տեղական միություն կարող է իր տեղական սահմանադրության և կանոնադրության դրույթով հրաժարվել վերը նշված դրույթից այն մասին, որ Տեղական միության պաշտոնյաները հանդիսանում են այդպիսի միջանկյալ մարմինների Համաժողովի ի պաշտոնե պատվիրակներ, և կարող է նախատեսել պատվիրակների առաջադրման և, անհրաժեշտության դեպքում, գաղտնի ընտրության ընթացակարգ:

Բաժին 6. Միջանկյալ մարմնի ոչ մի պաշտոնյա չի կարող որևէ տեսակի հատուցում ստանալ միջանկյալ մարմնից, բացառությամբ նվազագույն վճարի կամ ծախսերի հատուցման (համապատասխան դեպքերում): Այս սահմանափակումը չի գործում Կանադայի միջանկյալ մարմինների նկատմամբ:

Հոդված XIX

ԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՎՃԱՐՆԵՐ

Ցանկացած Տեղական միության անդամների համար, որոնք 1984թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ գործող կարգավիճակում էին՝

սույն հոդված XIX-ի իմաստով, 1984թ. սեպտեմբերի 1-ին փոփոխված և ուժի մեջ մտած Սպասարկման աշխատողների միջազգային միության Մահվան նպաստի ծրագիրը կգործի այն անդամների դեպքում, որոնք համապատասխանում են փոփոխված Ծրագրում նախատեսված մասնակցության չափանիշներին և պահանջներին: Այն դեպքում, երբ Միջազգային գործադիր խորհուրդը, իր հայեցողությամբ, որոշում է, որ անհրաժեշտ կամ նպատակահարմար է վերացնել, կրճատել կամ սահմանափակել Ծրագրով նախատեսված վճարները կամ լրացնել կամ փոփոխել այդ վճարները կառավարող դրույթները, ապա այն իրավասություն ունի դա անելու: Միջազգային միությունը պետք է ծանուցի յուրաքանչյուր Տեղական միությանը՝ Ծրագրի դրույթների ցանկացած փոփոխության ուժի մեջ մտնելու ամսաթվից 60 օր առաջ:

Հոդված XX

ՏԵՂԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻԱՎՈՐՎԱԾ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՑԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՍ

Բաժին 1. Կենսաթոշակային հիմնադրամը, որը հայտնի է որպես «SEIU-ի միավորված մարմինների պաշտոնյաների և աշխատողների կենսաթոշակային հիմնադրամ», որն ստեղծվել է սույն սահմանադրության մանդատին համապատասխան և գործում է Միջազգային գործադիր խորհրդի և հոգաբարձուների միջև կնքված հավատարմագրային համաձայնագրի հիման վրա, կշարունակի գործել հիշյալ հավատարմագրային համաձայնագրի դրույթներին համապատասխան: SEIU-ի միավորված մարմինների պաշտոնյաների և աշխատողների կենսաթոշակային հիմնադրամը բաժանվում է երկու հստակ բաժինների՝ Միացյալ Նահանգների բաժին և Կանադայի բաժին:

Բաժին 2. Միջազգային միությունը պետք է հանդիսանա «Ծրագրային հովանավոր», ինչպես տվյալ եզրը սահմանված է 1974թ. «Աշխատողների կենսաթոշակային եկամտի ապահովման մասին» օրենքում:

Բաժին 3. Միջազգային գործադիր խորհուրդն իրավասու է.

(ա). Նշանակել կենսաթոշակային հիմնադրամի բոլոր անհատ հոգաբարձուներին և սահմանել նրանց թվաքանակը, ազատել հոգաբարձուներին և լրացնել թափուր պաշտոնները, որոնք կարող են ժամանակ առ ժամանակ առաջանալ՝ պայմանով, որ առնվազն երկու հոգաբարձուներ պետք է հանդիսանան Տեղական միությունների պաշտոնյաներ կամ աշխատողներ և առնվազն երկու հոգաբարձուներ պետք է հանդիսանան Միջազգային գործադիր խորհրդի անդամներ, ինչպես նաև Կանադայի հոգաբարձուների թիվը պետք է լինի ոչ պակաս, քան պահանջվում է Կանադայի օրենսդրությամբ.

(բ). Միջազգային միության անունից համաձայնագրեր կնքել հոգաբարձուների հետ՝ հավատարմագրային պայմանագիրը անհրաժեշտ կամ ցանկալի կերպով փոփոխելու վերաբերյալ.

(գ). Կենսաթոշակային հիմնադրամի հոգաբարձուների առաջարկությամբ վերացնել որևիցե Տեղական միության կամ միավորված մարմնի կողմից Կենսաթոշակային հիմնադրամում մասնակցություն ունենալու կամ վերջինիս կատարվող ամբողջական կամ մասնակի վճարների պահանջը՝ պարզելուց հետո, որ այդ հատկացումները նպատակահարմար, անհրաժեշտ կամ պարտադիր չեն, ինչպես նաև Միջազգային գործադիր խորհրդի կողմից պահանջվող պայմաններով, այդ թվում այն, որ մասնակից Տեղական միությունները չվճարված գումարները փոխանցեն անմիջապես Միջազգային միությանը՝ այնպիսի նպատակների համար, որոնք խորհուրդը նպատակահարմար է համարում.

(դ). Ամբողջությամբ կամ մասնակիորեն վերացնել կամ ավելացնել սույն հոդված XX-ի բաժին 8-ով պահանջվող վճարները՝ Միջազգային միության կամ դրա որևէ Տեղական միության հետ որևիցե արհեստակցական կազմակերպության կամ Տեղական միության միաձուլման կամ միավորման դեպքում՝ պարզելուց հետո, որ տվյալ գործողությունն անհրաժեշտ է կամ նպատակահարմար:

Հոդված 4. Կենսաթոշակային հիմնադրամի հոգաբարձուները պետք է հանդիսանան «Նշանակված խնամառուներ», ինչպես այդ

տերմինը սահմանված է 1974թ. «Աշխատողների կենսաթոշակային եկամտի ապահովման մասին» օրենքում:

Հոդված 5. Հոգաբարձուները պետք է լիազորված լինեն, և սույնով լիազորվում են, ընդունել կենսաթոշակային ծրագիր կամ ծրագրեր և դրանց կառավարման համար կանոններ և կանոնակարգեր, որոնք նրանք նպատակահարմար են համարում՝ պայմանով, որ ծրագիրը կամ ծրագրերը, կանոններն ու կանոնակարգերը, գործող օրենսդրությամբ թույլատրվող չափով, սահմանեն որ.

(ա). ծածկույթի իրավունք ունեն միայն այն պաշտոնյաները, լրիվ դրույքով մշտական աշխատողները, որոնք ստանում են \$4,000 տարեկան դրույքով համախառն վարձատրություն, և ոչ լրիվ դրույքով աշխատող և ժամանակավոր աշխատողները, որոնք աշխատում են ավելի քան 6 ամիս ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում և այդ ժամանակահատվածում ստանում են տարեկան \$4,000 կամ ավելի համախառն վարձատրություն: Համախառն վարձատրությունը ներառում է միայն այն աշխատավարձը, որը վճարվում է Տեղական միության կամ միավորված մարմնի կողմից կամ, հոգաբարձուների կողմից մասնակցության համար ընդունված լինելու դեպքում, Տեղական միությանը կամ միավորված մարմնին առնչվող որևիցե կազմակերպության կողմից, որը նպաստում կամ ապահովում է այդ Տեղական միության կամ միավորված մարմնի անդամակցության նպատակները: Համախառն վարձատրությունը սահմանվում է այնպես, որպեսզի հաշվի չառնվի այն հատուցումը, որը հոգաբարձուները կարող են համարել հատուկ կամ արտասովոր վարձատրություն (օրինակ՝ ժողովներին կամ ցույցերին մասնակցելու համար վճարները), ներառյալ, սակայն առանց սահմանափակման, ամբողջությամբ կամ մասամբ տրվող այն վարձատրությունը, որը կարող է ստացվել երկրորդ կամ հավելյալ գործատուից: Այն դեպքում, երբ գործող օրենսդրությամբ պահանջվում է աշխատողի մասնակցություն և/կամ կենսաթոշակային միավորների շնորհում այնպիսի զբաղվածության համար, որն այլապես կբացառվեր վերոգրյալով, հոգաբարձուները պետք է փորձեն սահմանափակել այդպիսի մասնակցությունը և ծառայության

միավորների շնորհումը՝ վերոգրյալին համապատասխան, օրենքով թույլատրվող չափով:

Հոգաբարձուները պետք է իրավասու լինեն ճշգրտել \$4,000 ն/կամ 6-ամսյա հատկացման պահանջները այն դեպքում, երբ հոգաբարձուները որոշեն, որ հիշյալ փոփոխություն(ներ)ը ակտուարական տեսանկյունից ողջամիտ են.

(բ). Համապատասխան կազմակերպությունների աշխատողները կարող են Կենսաթոշակային հիմնադրամում մասնակցության իրավունք ունենալ կախված այն կանոններից և կանոնակարգերից, որոնք կարող են ընդունվել հոգաբարձուների խորհրդի կողմից:

Հոդված 6. Հոգաբարձուների խորհուրդը ունի հետևյալ իրավասությունները, ի լրումն այն իրավասությունների, որոնք կարող են նրանց տրվել հավատարմագրային համաձայնագրով.

(ա). Օգտվել ակտուարի, փաստաբանի և այլ մասնագիտական խորհրդատուների ծառայություններից, որոնք, ըստ նրանց, անհրաժեշտ կերպով կաջակցեն նրանց կենսաթոշակային ծրագրի կամ ծրագրերի ձևակերպման, ողջամիտ ակտուարական հիմքով ծրագիրը պահպանելու համար հատկացումների դրույքի որոշման ու դիտանցման և Կենսաթոշակային հիմնադրամի պահպանման հարցերում, և Կենսաթոշակային հիմնադրամից վճարում կատարել այդ ծառայությունների դիմաց.

(բ). Տեղական միության կամ միավորված մարմնի քարտուղար-գանձապահից պահանջել իրենց տրամադրել տվյալներ, որոնք նրանք կարող են անհրաժեշտ համարել Կենսաթոշակային հիմնադրամի պատշաճ կառավարման համար.

(գ). Կատարել կենսաթոշակային ծրագրի կամ ծրագրերի բոլոր անհրաժեշտ փոփոխությունները, որոնք կարող են պահանջվել, որպեսզի Կենսաթոշակային խնամառու հիմնադրամը համապատասխանի չափանիշներին և ազատված լինի հարկերից՝ հարկային օրենսգրքի և եկամտային հարկի մասին օրենքի (Կանադա) գործող դրույթներով, կամ որոնք նրանց կողմից կարող են անհրաժեշտ համարվել՝ կենսաթոշակային ծրագիրը կամ ծրագրերը և Խնամառու հիմնադրամը բոլոր այլ գործող օրենքներին համապատասխանեցնելու համար.

(դ). Ծածկույթի մասով բացառումություններ կատարել այն պաշտոնյաների կամ աշխատողների դեպքում, որոնք ծածկույթի իրավունք ունեն պետական կամ հանրային ծառայություններ մատուցող գործատուի կողմից իրականացվող աշխատողների կենսաթոշակային նպաստների ծրագրի ներքո՝ այնպիսի միասնական և ոչ խտրական կանոններով, որոնք կարող են սահմանվել Հոգաբարձուների խորհրդի կողմից՝ այդ անձանց համար կենսաթոշակային ծածկույթի կամ նպաստների կրկնօրինակումը կանխարգելելու համար, եթե այդպիսի բացառությունները չեն հակասում գործող օրենսդրությանը կամ անբարենպաստորեն չեն ազդում կենսաթոշակային ծրագրի կամ խնամառության՝ հարկերից ազատված լինելու կարգավիճակի վրա.

(ե). Ավելացնել կամ նվազեցնել հողված XX-ի բաժին 8-ով պահանջվող վճարները՝ օրենքով թույլատրվող կարգով.

(զ). Ձեռնարկել բոլոր այն քայլերը, որոնք նրանք անհրաժեշտ են համարում՝ սույն հողված XX-ի նպատակներն իրագործելու և Կենսաթոշակային հիմնադրամի մասնակիցների իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար:

Հողված 7. Հոգաբարձուները Կենսաթոշակային հիմնադրամի բոլոր ակտիվները պահում են առանձին՝ Միջազգային միության կողմից ստացված բոլոր այլ հասույթից և եկամտից գատ, փոխանցում են հիշյալ Կենսաթոշակային հիմնադրամի ակտիվները կորպորատիվ հոգաբարձու(ներ)ին կամ կորպորատիվ պահառու(ներ)ին, որոնց նրանք կարող են նշանակել, ազատել պաշտոնից և նշանակել նրանց իրավահաջորդ, ինչպես նաև Կենսաթոշակային հիմնադրամից վճարներ կատարել այդ կորպորատիվ հոգաբարձու(ներ)ին կամ կորպորատիվ պահառու(ներ)ին:

Բաժին 8(ա). Միջազգային գործադիր խորհրդի կամ հոգաբարձուների կողմից սույնով սահմանված իրենց իրավասությունների համաձայն կատարված փոփոխություններին և լրացումներին համապատասխան՝ Միացյալ Նահանգների յուրաքանչյուր Տեղական միություն և միավորված մարմին Կենսաթոշակային հիմնադրամին վճարում է գումար՝ պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր

պաշտոնյայի և աշխատողի ամսական համախառն վարձատրության 14 տոկոսի չափով: Կանադայի յուրաքանչյուր Տեղական միություն և միավորված մարմին Կենսաթոշակային հիմնադրամին վճարում է գումար՝ պահանջներին համապատասխանող յուրաքանչյուր պաշտոնյայի և աշխատողի ամսական համախառն վարձատրության 14 տոկոսի չափով:

(բ). Վերը նշված հատկացումը Կենսաթոշակային հիմնադրամին վճարվում է մինչև այն ամսին հաջորդող ամսվա վերջը, որում պահանջներին համապատասխանող պաշտոնյան կամ աշխատողը ստանում է որևիցե վարձատրություն, որից վճարման ենթակա է կենսաթոշակային հատկացումը: Հատկացումներն սկսվում են պահանջներին համապատասխանող պաշտոնյայի կամ աշխատողի զբաղվածության առաջին օրվանից:

(գ). Եթե Տեղական միությունը կամ միավորված մարմինը, որից պահանջվում է հատկացում կատարել Կենսաթոշակային հիմնադրամին, չի կատարում սույնով պահանջվող վճարները, կիրառվում է սույն սահմանադրության և կանոնադրության հոդված XIII-ի բաժին 3-ի դրույթը:

Հոդված 9. Միջազգային միությունը ապահովագրում և ազատում է բոլոր հոգաբարձուներին, հիմնադրամի համակարգողին և հիմնադրամի գրասենյակի աշխատողներին ցանկացած պարտավորությունից, որը կարող է առաջանալ նրանց պաշտոնավարման ընթացքում, բացառությամբ նրանց կոպիտ անփութության, միտումնավոր իրավազանցության, խարդախության կամ քրեորեն պատժելի արարքի հետևանքով առաջացած պարտավորության, ներառյալ բոլոր իրավական ծախսերը, որոնք առաջացել են այդպիսի մեղադրանքներից պաշտպանության կապակցությամբ:

Հոդված XXI

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՏԵՂԱԿԱՆ ԿԻՐԱԴԿՈՒՄԸ

Այն Տեղական Միությունը կամ հարակից մարմինը, որը կամայականորեն կանտեսի սույն Սահմանադրության և Կանոնակարգերի դրույթների կիրարկումը, ենթակա է արտոնագրի կասեցման կամ զրկման կամ էլ այլ պատժամիջոցների կիրառության, ինչը կորոշվի Միջազգային Նախագահի կողմից:

Հոդված XXII

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒ ԶԼԻՆԵԼԸ

Բացառությամբ սույն Սահմանադրությամբ նախատեսված այլ դեպքերի, Տեղական Միությունը կամ հարակից մարմինը կամ Տեղական Միության որևէ ծառայող, աշխատակից, կազմակերպիչ կամ ներկայացուցիչ կամ այս Միջազգային Միության հարակից մարմին լիազորված չէ պայմանագրեր կնքել կամ պարտավորություններ սահմանել Միջազգային Միության համար կամ դրա անունից, քանի դեռ գրավոր կերպով լիազորված չէ Միջազգային Նախագահի և Միջազգային Քարտուղար-Գանձապահի կամ Միջազգային Գործադիր Խորհրդի կողմից:

Հոդված XXIII

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Կիրառվող օրենքի համաձայն, Տեղական Միությունը, դրա անդամը կամ հարակից մարմինը չի կարող կատարել որևէ գործողություն Միջազգային Միության, մեկ այլ Տեղական Միության, հարակից մարմնի կամ ծառայողների նկատմամբ՝ կապված Միջազգային Միության, դրա Տեղական Միությունների, հարակից մարմինների գործունեության հետ, քանի դեռ նա չի կատարել սույն Սահմանադրությամբ և դրա ներքո հրապարակված օրենքների բոլոր ընթացակարգերը: Տեղական Միությունը, դրա անդամը և հարակից մարմինը, որը հայց է ներկայացնում այս դրույթի խախտմամբ, ի հավելումն այլ տուգանքների, կպարտավորվի կազմակերպությանը կամ ծառայողներին փոխհատուցել դատարանի և իրավաբանների ծախսերը կամ դրանց որոշակի մասնաբաժինը:

Բ. Միջազգային Գործադիր Խորհրդի հաստատումով, Միջազգային Միությունը լիազորված է վճարել հետաքննության, խորհրդի զբաղվածության և այլ անհրաժեշտ բոլոր ծախսերը՝ կապված այն պատճառի, ինդրի, դեպքի կամ դեպքերի հետ, որտեղ Միջազգային Միության ծառայողը, ներկայացուցիչը, աշխատակիցը, գործակալը կամ որևէ անձ, ով, ենթադրաբար, գործում է Միջազգային Միության անունից, մեղադրվում է որևէ օրենքի խախտման կամ խախտումների մեջ կամ նրան դատի են տվել քաղաքացիական այնպիսի գործողությունների համար, որոնք բխում են նրա պաշտոնական պարտականություններից և կատարվել են Միջազգային Միության անունից, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ ծառայողը, ներկայացուցիչը, աշխատակիցը կամ գործակալը մեղադրվում է Միջազգային Միության, հարակից մարմնի կամ դրանց անդամի վստահության խախտման մեջ, ինչի դեպքում նրան կփոխհատուցեն, միայն դատարանի՝ իր օգտին որոշված դատավճռի դեպքում:

Գ. Ոչ Միջազգային Միությունը, ոչ էլ դրա ծառայողները պատասխանատու կամ հաշվետու չեն որևէ Տեղական Միության, հարակից մարմնի կամ ծառայողների, անդամների և գործակալների սխալ և անօրինական գործողությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ Միջազգային Միությունը կամ դրա ծառայողները փաստացի մասնակցել կամ լիազորել են նման գործողությունները, կամ էլ հավանություն են տվել դրանց՝ փաստացի տեղեկանալով այդ մասին:

Դ. Միջազգային Միության միայն ընտրված ծառայողներն են լիազորված գործել որպես դատական գործընթացի գործակալներ: Միջազգային Միության ընդհանուր կազմակերպիչները, աշխատակազմի անդամներն ու աշխատակիցները, իսկ ստորադաս մարմինների ծառայողներն ու աշխատակիցները, ցանկացած պարագայում, լիազորված չեն գործել որպես Միջազգային Միության գործակալներ դատական գործընթացի ընթացքում:

Հոդված XXIV **ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Այս Սահմանադրությունն ու Կանոնակարգը կարող են

փոփոխվել Միջազգային Միության պարբերական Համագումարի նախաձեռնությամբ կամ հենց այդ նպատակով հրավիրված Հատուկ Համագումարի կողմից: Համագումարում փոփոխությունները կարող են առաջարկվել այն նույն կարգով, որը նախատեսված է Համագումարի որոշումների ներկայացման համար: Նման փոփոխության ընդունման համար անհրաժեշտ է ստանալ Համագումարի քվեների մեծամասնությունը: Եթե այլ կերպ նախատեսված չէ, ապա բոլոր փոփոխությունները վավեր են դառնում՝ Համագումարի կողմից ընդունվելուց անմիջապես հետո:

Հոդված XXV **ԼՈՒԾԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Բաժին 1. Այս Միջազգային Միությունը չի կարող լուծարվել՝ յոթ տարակարծիք Տեղական Միությունների առկայության պարագայում: Տեղական Միությունը, ժամանակավոր տեղական կամ կազմակերպչական հանձնաժողովը չեն կարող լուծարվել, կազմից դուրս գալ կամ կապը խզել՝ յոթ տարակարծիք Տեղական Միությունների առկայության պարագայում: Այլ հարակից մարմինները չեն կարող լուծարվել, կազմից դուրս գալ կամ կապը խզել՝ երկու տարակարծիք Տեղական Միությունների առկայության դեպքում: Միջազգային Միությանը, գրանցված կամ հավաստագրված փոստի միջոցով, կտեղեկացվի Տեղական Միության կամ հարակից մարմնի կողմից պլանավորված, Միջազգային Միությունից դուրս գալու քվեարկության նպատակով հանդիպման մասին, անցկացման օրվանից առնվազն 60 օրվա ընթացքում: Միջազգային Միության որևէ ներկայացուցչի հնարավորություն կտրվի ելույթ ունենալ այդ հանդիպման ընթացքում:

Միջազգային Նախագահը կորոշի, թե արդյոք անդամակցության քվեարկությունը պետք է անցկացվի գաղտնի կերպով անդամների հանդիպման ընթացքում, թե փոստային հանրաքվեի միջոցով, և, մեկ այլ միջոցով, որի միջոցով տարակարծիք Տեղական Միությունները կամ անդամները կարող են հաստատել իրենց անհամաձայնությունը: Քվեները կհաշվվեն անկախ չեզոք ընկերակցության կողմից: Տեղական Միության կամ դրա

հարակից մարմնի կասեցման, լուծարման կամ կապի խզման դեպքում, դրա ամբողջ գույքը, ֆինանսներն ու ակտիվները, անշարժ և շարժական, դառնում են Միջազգային Միության սեփականությունը: Տեղական Միությունը կամ դրա հարակից մարմինը, ոչ մի պարագայում, ինքնուրույն կեպով չի բաշխի իր ֆինանսական միջոցները, ակտիվներն ու գույքը:

Բաժին 2. Բացառությամբ այն դեպքերի, երբ ցայտուն կերպով թույլատրվում է համակցման պայմանագրով կամ Միջազգային Միության կողմից, տեղական միության ծառայողը կամ հարակից մարմինը չի սատարի կամ աջակցի Միջազգային Միության լուծարմանը, կասեցմանը կամ կապերի խզմանը նպաստող գործունեությանը: Բացառությամբ այս երկու հանգամանքների, Միջազգային Նախագահը կամ Միջազգային Գործադիր Խորհուրդը կարող է նախաձեռնել այս Սահմանադրությամբ սահմանված ցանկացած գործողություն՝ պաշտպանելու անդամների և միությունների շահերը, երբ տեղական միությունում կամ հարակից մարմնում փորձ արվի լուծարել, կասեցնել կամ կապերը խզել, ներառելով, բայց չսահմանափակվելով Հոդված VIII-ի Բաժին 7-ում նշված գործողությամբ:

Հոդված XXVI **ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

Եթե սույն Սահմանադրության ցանկացած դրույթ փոփոխվի կամ անվավեր կամ չգործող համարվի պետական, գավառական կամ դաշնային կառավարության գործադիր, դատական կամ վարչական իրազեկ մասնաճյուղի կողմից, ներառելով, բայց չսահմանափակվելով տուրքերի կամ մեկ շնչին ընկնող հարկին վերաբերող դրույթները, ապա Գործադիր Խորհուրդը լիազորություն ունի կասեցնել այդ դրույթի գործողությունը անվավերության կամ փոփոխման գործընթացի ժամանակ և փոխարինել այն մեկ այլ դրույթով, որը կհամապատասխանի անվավերության պատճառ դարձած առարկություններին և անվավեր ճանաչված դրույթի նպատակներին: Իսկ տուրքերի կամ մեկ շնչին ընկնող հարկին վերաբերող դրույթի քննադատման դեպքում, տվյալ իշխանությունը նույնպես

կկիրառվի, այն դեպքում, երբ Գործադիր Խորհուրդը որոշի, որ այդ գործողությունները անհրաժեշտ է կատարել դատական կամ վարչական ընթացակարգերից առաջ՝ Սահմանադրության ինդրահարույց դրույթի նպատակներն արդյունավետ իրականացնելու համար: Եթե սույն Սահմանադրության որևէ Հոդված կամ Բաժին պետք է փոփոխվի կամ անվավեր ճանաչվի՝ օրենքի գործողության կամ համապատասխան իրավասու դատարանի պահանջով, ապա սույն Սահմանադրության մնացած մասը և սովյալ Հոդվածի կամ Բաժնի այն մասը, որը վերաբերում է անհատներին կամ հանգամանքերին և ենթակա չէ փոփոխման, կարող է կիրառվել:

**ՀԱՎԵԼՎԱԾ Ա. ԾՄՄ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՕՐԻՆԱԳԻԾԸ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Կարծիք հայտնելու, լավելու և հարգվելու իրավունք, միության գործունեությանը, արժեքներին և հմտություններին ծանոթանալու իրավունք:

Միության առաջնորդներին, արդար և ժողովրդավարական ճանապարհով, ընտրելու իրավունք:

Միության տուրքերի լիարժեք հաշվառմանը և միության ռեսուրսների պատշաճ տնտեսվարմանը տեղեկանալու իրավունք:

Միության բանակցային փորձերին մասնակցելու և միության պայմանագրերը հաստատելու իրավունք:

Անդամների խնդիրները լուծելու իրավունք՝ արդար և արագ կերպով:

Պատասխանատվություն՝ կառուցելու ուժեղ և արդյունավետ աշխատանքային շարժում, աջակցելու անկազմակերպ աշխատողների կազմակերպմանը, ապահովելու քաղաքական ձայն աշխատողների համար և պաշտպանելու գործընկերներին

և բոլոր աշխատողներին:

Պատասխանատվություն՝ տեղեկություններ ստանալու միության ներքին կառավարման վերաբերյալ և մասնակցելու միության գործերի վարմանը:

Միությանը աջակցելու պատասխանատվություն:

Բոլոր աշխատողներին և անդամներին արդար կերպով վերաբերելու պատասխանատվություն:

Միությանը կառուցվածքային քննադատություն առաջարկելու պատասխանատվություն:

**ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ԾՄՄ ԱՆԴԱՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ**

Իրավունք՝ ունենալու աշխատանք, որը պիտանի է հասարակության համար, բավարարում է անհատի պահանջները, ապահովում է պատշաճ կենսամակարդակ, առողջ ու անվտանգ աշխատավայր և զբաղվածության առավելագույն հնարավոր երաշխիքներ:

Իրավունք՝ ունենալու նշանակալից և պաշտպանված ձայն գործատուի կողմից աշխատանքի նախագծման ու ձևակերպման և երկարաժամկետ պլանավորման ընթացքում, ինչպես նաև այդ պլանավորմանը մասնակցելու համար անհրաժեշտ ուսուցում:

Աշխատանքում արդար և անաչառ վերաբերմունքի իրավունք:

Գործատուի եկամտի մեջ արդարացի մասնաբաժին ունենալու իրավունք:

Իրավունք՝ լիովին մասնակցելու միության գործունեությանը, որը վերաբերում է իր աշխատանքի ծավալին, բովանդակությանը և կառուցվածքին:

Պարտականություն՝ մասնակցելու աշխատավայրում արդյունավետ մասնակցության սկզբունքներն ու արժեքները հաստատելուն և պահպանելուն ուղղված միության ջանքերին:

Պարտականություն՝ ընդունելու և հարգելու միության բոլոր

անդամների շահերը միության նպատակների վերաբերյալ որոշումներ կայացնելիս:

Պարտականություն՝ տեղեկացված լինելու իր աշխատանքային ոլորտի և այդ ոլորտում աշխատողների վիճակի վրա ազդեցություն ունեցող ուժերի վերաբերյալ:

Պարտականություն՝ լիովին մասնակցելու աշխատանքում աշխատողների մասնակցությունն ընդլայնելուն ուղղված միության ջանքերին:

Պարտականություն՝ լիովին և արդարացիորեն կիսելու իր կարողություններն ու ջանքերն աշխատանքում և ընդունելու իր գործատուի օրինական նպատակները:

ՀԱՎԵԼՎԱԾ Գ. ԾՄՄ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ԵՎ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաստատվել է ԾՄՄ-ի Միջազգային գործադիր խորհրդի կողմից 2009թ. հունիսի 13-ին: Վերանայված տարբերակը հաստատվել է ԾՄՄ-ի Միջազգային գործադիր խորհրդի կողմից 2016թ. հունվարի 21-ին

ՄԱՍ Ա. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ծառայողների միջազգային միության (ԾՄՄ) արժեքներն են աշխատողների արժանապատվությունը և նրանց մատուցած ծառայությունների կարևորությունը: Մենք նվիրված ենք աշխատողների և նրանց ընտանիքների կյանքը բարելավելու և առավել արդար ու մարդկային հասարակություն ձևավորելու գաղափարներին: Մենք հանձն ենք առել հետամուտ լինել բոլորի համար արդարության ապահովմանը, մասնավորապես՝ տնտեսական և սոցիալական արդարության ապահովմանը մեր համայնքում առավելագույնս շահագործվողների համար: Մեր առաքելությունն իրագործելու համար, մենք պետք է Միության յուրաքանչյուր մակարդակում ապահովենք լավ մասնագիտացված և նպատակասլաց առաջնորդների առկայություն, որոնք կարտացոլեն անդամների ողջ բազմազանությունը:

Միության անդամները մեծ վստահություն են տածում իրենց առաջնորդների նկատմամբ: ԾՄՄ-ի ընտրված պաշտոնյաները և ղեկավարները միության անդամների հանդեպ ստանձնում են ոչ միայն ֆիդուցիար պարտականություններ, այլ, հաշվի առնելով մեր առաքելության բարոյական նպատակները, ԾՄՄ-ի առաջնորդները պարտավոր են ցուցաբերել բարձր մակարդակի էթիկական վարքագիծ ղեկավարման հետ կապված բոլոր որոշումները կայացնելիս և անդամների անունից ֆինանսական գործարքներ իրականացնելիս: Անդամներն ունեն միության ֆինանսական միջոցների պատշաճ կառավարման և միության ծախսերի թափանցիկության պահպանման իրավունք: Ռեսուրսների ոչ պատշաճ օգտագործումը կամ ղեկավար դիրքի չարաշահումը

խարխլում և թուլացնում է անդամների վստահությունը Միության նկատմամբ: Կոռուպցիան իր բոլոր ձևերով չի հանդուրժվելու ԾՄՄ-ի կողմից: Սույն էթիկայի կանոնագիրքը և շահերի բախման քաղաքականությունը («Կանոնագիրք» կամ «ԾՄՄ-ի կանոնագիրք») ամրապնդում է Միության վարքագծի էթիկայի կանոնները, կազմակերպչական գործելակերպը և կիրարկման ստանդարտները՝ դրանով իսկ նպաստելով Միության կողմից իր առջև դրված կարևոր առաքելության իրականացմանը:

Մենք ընդունում ենք, որ էթիկայի ոչ մի կանոնագիրք չի կարող կանխել որոշ անձանց կողմից վարքագծի էթիկական չափանիշների խախտումը: Մենք նաև գիտակցում ենք, որ ԾՄՄ-ի կանոնագիրքն որպես աղպիսին բավարար չէ Միության ներսում էթիկական մշակույթ պահպանելու համար: Սույն Կանոնագրքի ստեղծման նպատակներն իրագործելու համար, մենք պետք է ստեղծենք հաշվետվողականության համակարգեր բոլոր ընտրված առաջնորդների և աշխատողների համար: Այս համակարգերը պետք է ներառեն համապատասխան ստուգումներ և հավասարակշռող մեխանիզմներ և ներքին գործառնական ընթացակարգեր, որոնք նվազագույնի կհասցնեն ոչ պատշաճ օգտագործման և չարաշահման հնարավորությունները, ինչպես նաև դրանց մասին պատկերացումները, Միության ֆինանսական միջոցները ծախսելիս կամ որոշումների կայացման լիազորությունն օգտագործելիս: Համակարգերը պետք է ներառեն նաև համապատասխան դրույթ դասընթացների անցկացման վերաբերյալ՝ սույն Կանոնագրքի մասին պատկերացում կազմելու և գործադրելու համար: Առավել լայն իմաստով կարևորում ենք այն ստանդարտների, գործելակերպերի և արժեքների ամբողջությունը, որոնք ներկայացված են ԾՄՄ-ի էթիկայի և ստանդարտների գծով քաղաքականության Ա բաժնում՝ «Հզոր էթիկական մշակույթ», որոնք գործադրվել էին Կանոնագրքի հետ մեկտեղ 2009թ-ին:

Մասնավորապես, ԾՄՄ-ն պարտավորվում է ապահովել անդամների ներգրավման և մեր Միությունում մասնակցության ողջամիտ ուղիներ: ԾՄՄ-ի Անդամների իրավունքների և

պարտականությունների օրինագիծը Միությունում հանդիսանում է ԾՄՄ-ի անդամների իրավունքների և պարտականությունների կարևոր աղբյուր: Դրա բացառիկ կիրարկումը

ԾՄՄ-ի Սահմանադրության և կանոնակարգերի XVII հոդվածում նշված կարգով արտացոլում է նվիրվածությունը ժողովրդավարական սկզբունքներին, որոնցով միշտ առաջնորդվել է ԾՄՄ-ն: XVII հոդվածով նախատեսված անդամների կամայական կամ անօրինական գործունեությունից պաշտպանության բազմաթիվ միջոցները նույնպես կազմում են Միության ժողովրդավարական մշակույթի ապահովման կարևոր բաղադրիչը: Նմանապես, հարակից մարմինների կողմից անդամների կանոնավոր ժողովների անցկացման պահանջը, ինչպես նշված է Սահմանադրության XV հոդվածի 5-րդ բաժնում, ԾՄՄ-ի ժողովրդավարական գործունեության մեկ այլ կարևոր տարր է: Ի վերջո, ռասայի, դավանանքի, մշակի գույնի, կրոնի, սեռի, սեռային արտահայտման, սեռական ուղղվածության, ազգային ծագման, քաղաքացիության կարգավիճակի, ամուսնական կարգավիճակի, ծագման, տարիքի կամ հաշմանդամության տեսանկյունից խտրականության և ոտնձգությունների դեմ ուղղված դրույթները, որոնք ներառված են ԾՄՄ-ի Սահմանադրության III հոդվածի 4-րդ բաժնում, հարակից մարմինների Սահմանադրություններում և կանոնակարգերում, ԾՄՄ-ի խտրականության և ոտնձգությունների դեմ քաղաքականությունում և ընթացակարգերում և հարակից մարմինների նմանատիպ քաղաքականությունում, արգելում են այնպիսի վարքագիծը, որը հակասում է ԾՄՄ-ի պատմականորեն ձևավորված համոզմունքին, որ մեր հզորությունը կայանում է մեր միասնության և բազմազանության մեջ և խտրականության ուժերը չպետք է մեզ պառակտեն:

Ակնկալվում է, որ անձիք, որոնց հանդեպ կիրառելի է սույն Կանոնագիրքը, պետք է հետևեն նահանգին դաշնային օրենքներին, ԾՄՄ-ի և, հարակից մարմինների Սահմանադրությանը և կանոնակարգերին, ԾՄՄ-ի և հարակից մարմինների խտրականության և ոտնձգությունների դեմ

քաղաքականությանը և ընթացակարգերին՝ որպես ողջ Միությունում էթիկական մշակույթ և վարքագծի բարձրակարգ ստանդարտներ ապահովելու մեր պարտավորվածության անբաժանելի մաս: Այս օրենքների և քաղաքականության խախտումներն էթիկական բնույթի խախտումներ են, այնուամենայնիվ՝ այդ խախտումները պետք է կարգավորվեն կիրառելի օրենքներով և քաղաքականությամբ, այլ ոչ Կանոնագրքով նախատեսված միջոցներով, եթե դրանք չեն հանդիսանում նաև սույն Կանոնագրքի ենթադրվող խախտումներ: Մասնավորապես, ԾՄՄ-ի կամ հարակից մարմինների Սահմանադրություններով և կանոնակարգերով կարգավորվող հարցերի համար կիրարկման միակ մեխանիզմն այդ փաստաթղթերով նախատեսված մեխանիզմն է, եթե առկա չեն նաև սույն Կանոնագրքի ենթադրվող խախտումներ: Ի վերջո, սույն Կանոնագրքի համաձայն, կոլեկտիվ բանակցային պայմանագրերի շրջանակում առաջացած բողոքները ենթակա չեն կիրարկման, քանի դեռ դրանք նույնպես չեն հանդիսանում սույն Կանոնագրքի ենթադրվող խախտումներ:

Սույն Կանոնագրքի գործողության ոլորտը և ստանդարտները ներկայացված են հետևյալ բաժիններում:

Բաժին 1. Կիրառելիությունը Միջազգային միության համար: ԾՄՄ-ի կանոնագիրքն ամբողջությամբ կիրառելի է ԾՄՄ-ի բոլոր պաշտոնյաների, գործադիր խորհրդի անդամների և աշխատողների համար: Այս անձիք սույն փաստաթղթում նշվում են որպես «ծածկույթում ընդգրկված անձիք»: ԾՄՄ-ն պետք է Կանոնագիրքն ամբողջությամբ հավելի կամ կցի իր Սահմանադրության և կանոնակարգերի հաջորդ և բոլոր հետագա հրապարակումներին:

Բաժին 2. Կիրառելիությունը ԾՄՄ-ի հարակից մարմինների համար: ԾՄՄ-ի Միջազգային գործադիր խորհրդի ընդունմամբ ԾՄՄ-ի կանոնագիրքն ամբողջությամբ կիրառելի է հարակից մարմինների և ԾՄՄ-ի կողմից արտոնագրված տեղական միությունների բոլոր պաշտոնյաների, գործադիր խորհրդի անդամների և աշխատողների համար («Հարակից մարմիններ»):

Այս անձիք սույն փաստաթղթում նշվում են որպես «ծածկույթում ընդգրկված անձիք»:

(a). Յուրաքանչյուր հարակից մարմին պետք է ապահովի, որպեսզի Կանոնագիրքը սկսի գործել բոլոր աշխատողների համար հնարավորինս սեղմ ժամկետներում, սակայն ոչ մի պարագայում ոչ ուշ, քան մինչև 2020թ. ավարտը:

(b). Յուրաքանչյուր հարակից մարմին պետք է Կանոնագիրքն ամբողջությամբ հավելի կամ կցի իր Սահմանադրության և կանոնակարգերի հաջորդ և բոլոր հետագա հրապարակումներին:

(c). Եթե սույն փաստաթղթում հղում է կատարվում ԾՄՄ-ին կամ ԾՄՄ-ի ծրագրին, բաժնին կամ պաշտոնին, համապատասխան հղումը վերաբերում է որոշակի հարակից մարմնին կամ դրա համարժեք ծրագրին, բաժնին կամ պաշտոնին:

(d). Յուրաքանչյուր հարակից մարմին պատասխանատու է Կանոնագրքի կիրարկման և իր ծածկույթում ներառված անձանց տեղեկացման համար՝ համաձայն Կանոնագրքի պայմանների, ԾՄՄ աջակցության և վերահսկողության:

(e). Կանոնագիրքը նպատակ չի հետապնդում գերծ պահել որևէ հարակից մարմնին կիրառել ավելի բարձր ստանդարտներ և լավագույն փորձը՝ ԾՄՄ-ի Էթիկայի հարցերի գծով մարդու իրավունքների պաշտպանի կողմից հաստատման պայմանով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին 3. Ծածկույթում ընդգրկված անձանց պարտականությունները:

(a). Բացահայտման պարտականություն: Անձիք, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, պետք է սույն Կանոնագրքի Զ մասում նշված ԾՄՄ-ի Էթիկայի գծով մարդու իրավունքների պաշտպանին կամ հարակից մարմնի Էթիկայի հարցերով միջնորդին տեղեկացնեն շահերի ցանկացած բախման կամ տարաձայնության մասին, որն առաջանում է այն դեպքում,

երբ անդամների շահերի հետ կապված նրանց առաջնային պարտականությունը պոտենցիալ կերպով վտանգվում է մրցակցի շահերով, ներառյալ, բայց չսահմանափակվելով սույն Կանոնագրքում նշված շահերով, հարաբերություններով կամ գործարքներով: Անձիք, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, պետք է բացահայտեն փաստացի, ենթադրվող կամ հնարավոր բախումները այն պահին, ըբ տեղեկանում դրանց մասին: Որակագրկում ԾՄՄ-ում կամ հարակից մարմնում աշխատելու համար:

(b). Որակագրկում ԾՄՄ-ում կամ հարակից մարմնում աշխատելու համար: Ոչ մի անձ չի կարող զբաղեցնել ԾՄՄ-ի կամ որևէ հարակից մարմնի պաշտոնյայի կամ ղեկավարի պաշտոնը, եթե դատապարտվել է որևէ հանցավոր գործունեության համար, որը կապված է ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու հետ, կամ աշխատանքային կազմակերպությունում պաշտոնի կամ աշխատանքի չարաշահման միջոցով անդամների հաշվին ապօրինի եկամուտ ստանալուն հավակնելու կամ ձեռք բերելու համար, բացառությամբ կիրառելի դաշնային օրենքով նախատեսված սահմանափակ թվով բացառությունների:

(c). Որակագրկում ԾՄՄ-ում կամ հարակից մարմնում աշխատելու համար: Ոչ մի անձ չի կարող զբաղեցնել ԾՄՄ-ի կամ որևէ հարակից մարմնի պաշտոնյայի կամ ղեկավարի պաշտոնը, եթե դատապարտվել է որևէ հանցավոր գործունեության համար, որը կապված է ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու հետ, կամ աշխատանքային կազմակերպությունում պաշտոնի կամ աշխատանքի չարաշահման միջոցով անդամների հաշվին ապօրինի եկամուտ ստանալուն հավակնելու կամ ձեռք բերելու համար, բացառությամբ կիրառելի դաշնային օրենքով նախատեսված սահմանափակ թվով բացառությունների:

ՄԱՍ 9. ԲԻԶՆԵՍ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Բաժին 4. Անդամների միջոցները պաշտպանելու ընդհանուր պարտակայություն, Գրառումներն ուսումնասիրելու անդամների իրավունք:

(a). Աշխատանքային կազմակերպության ակտիվները և միջոցները գտնվում են հավատարմագրային կառավարման ներքո՝ ի շահ անդամների: Անդամներն իրավունք ունեն հավաստիանալու, որ այդ ակտիվները և միջոցներն օգտագործվում են պատշաճ և համապատասխան նպատակների համար: Միությունը պետք է իրականացնի իր հատուկ գործառույթերը, այդ թվում՝ կատարի առքուվաճառքի կամ կարևոր ծառայությունների մատուցման բոլոր պայմանագրերը սույն Կանոնագրքին համապատասխան: ԾՄՄ-ի և ԾՄՄ-ի հարակից մարմինների բոլոր պաշտոնյաները, գործադիր խորհրդի անդամները և աշխատողները, անկախ ընտրված կամ նշանակված լինելու հանգամանքից, ունեն վստահության և կարևոր ֆիդուցիար պարտականություն՝ ազնվորեն և հավատարմորեն ծառայել անդամների շահերին:

(b). Աշխատանքի կառավարման մասին հաշվետվությունների ներկայացման և բացահայտման մասին ակտի 201 բաժնի համաձայն՝ ԾՄՄ-ն, հիմնավոր պատճառի առկայության դեպքում, պետք է թույլատրի անդամին ուսումնասիրել ցանկացած մատյանները, գրառումները և հաշիվները, որոնք անհրաժեշտ կլինեն այդ բաժնով նախատեսված ԾՄՄ-ի տարեկան ֆինանսական հաշվետվությունը ստուգելու համար՝ ԱՄՆ-ի Աշխատանքի վարչության համար:

(c). Հարակից մարմինները, որոնց անդամները միայն կառավարության մարմինների աշխատողներն են, պետք է թույլատրեն անդամին ուսումնասիրել պետական գործակալությանը ներկայացված իր ֆինանսական հաշվետվությունը և, նահանգի օրենքի համաձայն ու հիմնավոր պատճառի առկայության դեպքում, պետք է թույլատրեն անդամին ուսումնասիրել ցանկացած մատյանները, գրառումները և հաշիվները, որոնք անհրաժեշտ կլինեն հարակից մարմնի ֆինանսական հաշվետվությունը ստուգելու համար:

Բաժին 5. Արգելված ֆինանսական շահեր և գործարքներ: Ծածկույթում ընդգրկված անձիք, ելնելով իրենց հայտնի տեղեկատվությունից, չեն կարող ունենալ այնպիսի զգալի

սեփականություն կամ ֆինանսական շահ, որը հակասում է նրանց ֆիդուցիար պարտականությանը:

(a). Այս կանոնների նպատակների համար «զգալի սեփականությունը կամ ֆինանսական շահը» այն է, ինչն էապես նպաստում է անձի ֆինանսական բարեկեցությանը կամ թույլ է տալիս անձին էական ներգործություն կամ ազդեցություն ունենալ գործարար կազմակերպության որոշումների կայացման ընթացքի վրա:

(b). «Զգալի սեփականությունը կամ ֆինանսական շահը» չի ներառում բաժնետոմսերի գնման պլան, շահույթի բաշխման պլան, կազմակերպության շահույթում աշխատողի մասնակցության ծրագիր (ESOP) կամ սեփականության հանձնումը հավատարմագրային կառավարման: Այն նաև չի արգելում անձանց, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, համատեղ ֆոնդի կամ այլ նմանատիպ ներդրումային մեխանիզմի միջոցով տիրապետել ցանկացած գործատուի հրապարակայնորեն վաճառվող բաժնետոմսերին, որի հետ ԾՄՄ-ն կամ հարակից մարմինն իրականացնում է կոլեկտիվ բանակցություններ կամ ունի գործարար հարաբերություններ, կամ որը ԾՄՄ-ն կամ հարակից մարմինը փորձում են կազմակերպել՝ պայմանով, որ նման շահերի վրա ազդող բոլոր գործարքները պետք է համապատասխանեն ազատ շուկայի դրույթներին և պայմաններին:

(c). Անձանց, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, չի թույլատրվում՝

(1) Գիտակցաբար ունենալ զգալի սեփականություն կամ ֆինանսական շահ որևէ կազմակերպությունում, որը կոլեկտիվ բանակցություններ է իրականացնում ԾՄՄ-ի կամ վերջինիս որևէ հարակից մարմնի հետ,

(2) Ազդել կամ փորձել ազդել այն որոշման վրա կամ որևէ կերպ մասնակցել այն որոշմանը, որը վերաբերում է ԾՄՄ-ի կամ հարակից մարմնի հարաբերություններին որևէ վաճառողընկերության կամ այլ կազմակերպության կամ անձի հետ, որտեղ անձը, ում վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, նրա ազգականը,

ամուսինը/կինը կամ գործընկերն ունի զգալի սեփականություն կամ ֆինանսական շահ, կամ

(3) Ներգրավված լինել սեփական շահերը հետապնդող գործարքներում ՕՄՄ-ի կամ վերջինիս որևէ Հարակից մարմնի հետ, ինչպես օրինակ գույքի առք ու վաճառքը ՕՄՄ-ին առանց Միջազգային Քարտուղար-գանձապահի հաստատման (կամ հարակից մարմնի Քարտուղար-գանձապահի հաստատման, ինչպես կիրառելի է), որը պետք է ձեռք բերվի ամբողջական ուսումնասիրությունից հետո, այդ թվում՝ գնվող կամ վաճառվող գույքի իրական շուկայական արժեքի անկախ գնահատումից հետո:

(d) Այս բաժնի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով՝ ծածկույթում ընդգրկված անձիք պետք է բացահայտեն այս բաժնով նախատեսված շահերը, գործարքները կամ մասնակցությունները՝ սույն Կանոնագրքի 3(բ) բաժնի համաձայն:

Բաժին 6. Վճարներ և նվերներ գործատուներից, վաճառողներից և անդամներից:

(a) Ծածկույթում ընդգրկված անձիք չպետք է գիտակցաբար ընդունեն ստորև ներկայացված հանգամանքներում նվազագույն ֆինանսական արժեքը գերազանցող արժեքով վճարներ, հատուցումներ կամ նվերներ որևէ գործատուից, որը ներգրավված է կամ ձգտում է ներգրավված լինել ՕՄՄ-ի կամ դրա հարակից մարմնի հետ կուլեկտիվ բանակցություններում, կամ որևէ բիզնես կամ պրոֆեսիոնալ ընկերությունից, որը համագործակցում է կամ ձգտում է համագործակցել ՕՄՄ-ի կամ դրա հարակից մարմնի հետ:

(1) Այս բաժինը չի վերաբերում այն վճարներին և հատուցումներին, որոնք տրամադրվում են անձանց, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, արգելված գործատուների կողմից որպես վարձատրություն նրանց հիմնական և մշտական աշխատանքի համար:

(2) Այս բաժինը չի վերաբերում այն աշխատանքին կամ ծառայություններին, երբ ծածկույթում ընդգրկված անձիք

կատարում և մատուցում են արգելված գործատուներին կամ բիզնեսներին կես դրույքով աշխատանքի հիմունքով, պարզած ձեռքի հեռավորության սկզբունքով գործարքի միջոցով և նման աշխատանքի կամ ծառայությունների համար սովորական համարվող վճարի դիմաց:

(3) Այս բաժինը չի վերաբերում այն միջոցառումներին ուղղված մասնակցությանը, որոնք կազմակերպվում են պետական պաշտոնյաների կողմից և որոնց ընթացքում քննարկվում են պետական քաղաքականության հարցերը:

(4) Արագ փչացող ապրանքները, որոնց արժեքը գերազանցում է նվազագույն արժեքը, որոնք սակայն հնարավոր չէ վերադարձնել, ինչպես օրինակ սնունդը, այս բաժնի պահանջների համաձայն պետք է դեն նետվեն կամ տեղադրվեն ընդհանուր օգտագործման տարածքում, որպեսզի անդամները և գրասենյակի աշխատողները կարողանան դրանցից օգտվել: Եթե նվերը դեն է նետվում կամ դրանից բոլորն օգտվում են, խորհուրդ է տրվում այդ մասին տեղեկացնել նվերը սովորին՝ կապված ծածկույթում ընդգրկված անձանց հետ՝ շահերի բախումից գերծ մնալու և կրկնությունից խուսափելու համար:

(b) Ծածկույթում ընդգրկված անձիք չպետք է գիտակցաբար ընդունեն անձնական վճարներ կամ նվերներ որևէ անդամից, եթե անձնական հարաբերությունները կախված չեն Միության և անդամի միջև հարաբերություններից, բացառությամբ նվազագույն ֆինանսական արժեքով նվերների: Այս դրույթը կիրառելի չէ միության գրասենյակի արշավներին ուղղված հատկացումների համար, որոնք կատարվել են ԾՄՄ-ի Մահմանադության և կանոնակարգերի համաձայն:

Բաժին 7. Միության միջոցների և գույքի յուրացում: Ծածկույթում ընդգրկված անձիք չպետք է օգտագործեն, յուրացնեն կամ վերաուղղորդեն ԾՄՄ-ին պատկանող միջոցները կամ գույքն իրենց անձնական շահերի կամ առավելությունների համար:

Բաժին 8. Կիրառելիությունը երրորդ կողմերի համար: Սույն Կանոնագրքի սկզբունքները կիրառելի են երրորդ կողմերի այն ներդրումների և գործունեության համար, որոնք ԾՄՄ-ի պաշտոնյաների կամ աշխատողների ֆինանսական շահերը քողարկելու կամ սույն Կանոնագրքի ստանդարտները շրջանցելու հնարք են հանդիսանում:

Բաժին 9. Որոշ արգելված փոխառություններ: ԾՄՄ-ն չպետք է տրամադրի փոխառություններ այն պաշտոնյային կամ աշխատողին կամ վերջինիս ընտանիքի անդամներին, եթե պաշտոնյայի կամ աշխատողի կամ վերջինիս ընտանիքի անդամի պարտքի ընդհանուր գումարը երբևէ գերազանցել է \$2,000:

ՄԱՍ Դ. ՀԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՖՈՆԴԵՐ ԵՎ ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին 10. Ծածկույթում ընդգրկված անձանց պարտականությունները:

(a) Հատուցումների ֆոնդեր.

(1) Այս բաժնի նպատակների համար.

a. «Հատուցումների ֆոնդ կամ պլան» նշանակում է կենսաթոշակային, առողջապահական կամ սոցիալական հատուցումների ֆոնդ կամ պլան, որը հովանավորվում է ԾՄՄ-ի կամ հարակից մարմնի կողմից, կամ որում ԾՄՄ-ն կամ հարակից մարմինն ունի մասնակցություն:

b. Կիրառելի է 5-րդ բաժնում նշված «զգալի սեփականություն կամ ֆինանսական շահ» հասկացության սահմանումը:

(2) Ծածկույթում ընդգրկված անձիք, որոնք զբաղեցնում են ֆիդուցիարի պաշտոն կամ ունեն պարտականություններ հատուցումների ֆոնդի կամ պլանի հետ կապված կամ ազդեցություն հատուցումների ֆոնդի կամ պլանի կառավարման վրա, չեն կարող

a. Ունենալ որևէ էական ֆինանսական շահ կամ ցանկացած վարկաբեկիչ անձնական կապեր որևէ ներդրումային կառավարչի, ապահովագրական ընկերության աշխատողի, բրոքերի, խորհրդատուի կամ այլ ընկերության կամ անձի հետ, որը համագործակցում է կամ ձգտում է համագործակցել ֆոնդի կամ պլանի հետ,

b. Ընդունել որևէ անձնական վճար որևէ բիզնեսից կամ պրոֆեսիոնալ ընկերությունից, որը համագործակցում կամ ձգտում է համագործակցել ֆոնդի կամ պլանի հետ, եթե դա չի հանդիսանում պայմանագրով նախատեսված վճար իրականացված աշխատանքի համար, կամ

c. Ստանալ որևէ տեսակի վարձատրություն ծառայության համար որպես ֆոնդի և պլանի աշխատողի ներկայացուցիչ կամ նշանակված հոգաբարձու, բացառությամբ պատշաճ կերպով և փաստացի կրած խելամիտ ծախսերի փոխհատուցման, որը տրամադրվում է հավասարաչափ նշված ներկայացուցիչներին կամ հոգաբարձուներին՝ պայմանով, որ դա չի հանդիսանում այս դրույթի խախտում, ըստ որի ՏՄՄ-ի կամ հարակից մարմնի լրիվ դրույքով աշխատող չհանդիսացող պաշտոնյան կամ ղեկավարը կարող է լինել ֆոնդի կամ պլանի օրինականորեն վարձատրվող աշխատող, եթե նման աշխատանքը համապատասխանում է կիրառելի իրավական սահմանափակումներին և ամբողջությամբ բացահայտվում է համապատասխան հաշվետվությունների միջոցով:

(3) Այս բաժնի հետ համապատասխանություն ապահովելու նպատակով՝ բոլոր անձիք, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, պետք է բացահայտեն այս բաժնով կարգավորվող ցանկացած շահերը, գործարքները

կամ հարաբերությունները՝ սույն Կանոնագրքի 3(բ) բաժնի համաձայն:

(4) Ոչ մի անձ չի կարող ունենալ ֆիդուցիարի կարգավիճակ կամ պարտականություններ հատուցումների ֆոնդի կամ պլանի կառավարման հետ կապված, եթե դատապարտվել է որևէ հանցավոր գործունեության համար, այդ թվում՝ ծանր մարմնական վնասվածքներ պատճառելու համար կամ աշխատողների հատուցումների ֆոնդում կամ պլանում պաշտոնի կամ աշխատանքի չարաշահման միջոցով աշխատողների հատուցումների ֆոնդի կամ պլանի շահառուների հաշվին ապօրինի եկամուտ ստանալուն հավակնելու կամ ձեռք բերելու համար, բացառությամբ կիրառելի դաշնային օրենքով նախատեսված սահմանափակ թվով բացառությունների:

(b) Կապակցված կազմակերպություններ:

(1) Այս բաժնի նպատակների համար ԾՄՄ-ի կամ հարակից մարմնի հետ «կապակցված» կազմակերպություն նշանակում է այն կազմակերպությունը

- որի կառավարման խորհրդի անդամների 25 կամ ավելի տոկոսը կազմում են ԾՄՄ-ի կամ հարակից մարմնի պաշտոնյաները կամ աշխատողները, կամ
- որի ֆինանսավորման 50 կամ ավելի տոկոսը տրամադրվում է ԾՄՄ-ի կամ հարակից մարմնի կողմից:

(2) Ծածկույթում ընդգրկված անձիք, որոնք զբաղեցնում են ֆիդուցիարի պաշտոն կամ ունեն պարտականություններ ԾՄՄ-ի հետ կապակցված կազմակերպության հետ կապված կամ ազդեցություն վերջինիս կառավարման վրա, պետք է հետևեն ԾՄՄ-ի կանոնագրքի դրույթներին և համապատասխանեն վերջինիս ստանդարտներին կապակցված կազմակերպության անունից գործելիս:

ՄԱՍ Ե. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաժին 11. Ընտանեկան և անձնական հարաբերությունները կարգավորող կանոնների նպատակը: ԾՄՄ-ն չի արգելում աշխատանքի ընդունել ներկայիս պաշտոնյաների կամ աշխատողների՝ աշխատանքի ընդունման պահանջները բավարարող ազգականներին կամ այն անձանց, ում հետ պաշտոնյան կամ աշխատողը գտնվում է ռոմանտիկ կամ անձնական մտերիմ հարաբերություններում: ԾՄՄ-ն նաև չի արգելում աշխատել համապատասխան պահանջները բավարարող վաճառողների հետ, որոնք աշխատանքի են ընդունում ԾՄՄ-ի ներկայիս պաշտոնյաների կամ աշխատողների ազգականներին կամ այն անձանց, ում հետ պաշտոնյան կամ աշխատողը գտնվում է ռոմանտիկ կամ անձնական մտերիմ հարաբերություններում:

Այնուամենայնիվ, ԾՄՄ-ն ընդունում է, որ նման հարաբերությունները կարող են հանգեցնել խնդիրների, այդ թվում՝ հովանավորչության կամ թվացյալ հովանավորչության ազգականների կամ անձնական հարաբերություններում ներգրավված անձանց հանդեպ:

Նշված անձանց հանդեպ հատուկ վերաբերմունք ցուցաբերելը կամ նման տպավորություն ստեղծելը հակասում է կառավարման և հաշվետվողականության մեր սկզբունքներին և ԾՄՄ-ի գործունեությունը պատասխանատու կերպով իրականացնելու մեր պարտականությանը: Այս մասի դրույթները մշակված են ապահովելու համար, որպեսզի ընտանեկան կամ անձնական հարաբերությունները չազդեն ներգրավված աշխատողների և այլ պաշտոնյաների, աշխատողների և երրորդ կողմերի մասնագիտական փոխհարաբերությունների վրա:

Բաժին 12. Սահմանումներ: Այս մասի նպատակների համար՝

- (a) «Ազգական» նշանակում է ծնող, ամուսին/կին, ամուսնուն/կնոջը համարժեք անձ, դուստր, որդի, պապիկ/տատիկ, թոռ, եղբայր, քույր, մորաքույր/հորաքույր, հորեղբայր/մորեղբայր, գարմուհի,

զարմիկ, առաջին կամ երկրորդ զարմիկ, ամուսնու/կնոջ ազգականներ, «խորթ» ազգականներ, որդեգրող ծնող, որդեգրված երեխա և աշխատողի ընտանիքի ցանկացած անդամ: Կողակցի ազգականներն ընդգրկվում են նույն չափով, որքանով ընդգրկվում են ամուսնու/կնոջ ազգականները:

(b) «Անձնական հարաբերություններ» նշանակում են շարունակական ռումանտիկ կամ մտերիմ անձնական հարաբերություններ, որոնք կարող են ներառել, սակայն չեն սահմանափակվում ժամադրությամբ, միասին ապրելով կամ կողակից կամ այլ կարևոր անձ լինելով: Այս սահմանումը կիրառելի է անկախ հարաբերություններում գտնվող անձանց սեռից, գենդերային ինքնությունից կամ սեռական ուղղվածությունից: Այս սահմանափակումը չի վերաբերում այն ընկերներին, ծանոթներին կամ նախկին գործընկերներին, ովքեր այլ կերպ չեն ընդգրկվում «անձնական հարաբերությունների» շրջանակում:

Բաժին 13. Արգելված վարքագիծ: Կիրառվելու են հետևյալ ընդհանուր սկզբունքները:

(a) Ազգականների և այն անձի հետ անձնական հարաբերություններում գտնվող անձանց աշխատանքի ընդունման դիմումները, ովքեր ընդգրկված են ծածկույթում, կգնահատվեն որակավորման նույն ստանդարտներով, որոնք կիրառվում են մյուս դիմողներին գնահատելու համար: Ընտանեկան կամ անձնական հարաբերություններում գտնվող անձանց անունից դիմումների փոխանցումը աշխատանքի ընդունող համապատասխան մարմնին չի համարվում աշխատանքի ընդունման որոշումների վրա ազդելու փորձ: Հետագա միջամտությունը դիմումի դիտարկման գործընթացին կարող է համարվել ոչ պատշաճ վարքագիծ:

(b) Ծածկույթում ընդգրկված անձիք չեն կայացնի աշխատանքի ընդունելու վերաբերյալ որոշումներ իրենց

ազգականների կամ իրենց հետ անձնական հարաբերություններում գտնվող անձանց հետ կապված կամ չեն փորձի ազդել այլ անձանց կողմից աշխատանքի ընդունելու վերաբերյալ որոշումների կայացման վրա:

(c) Վերադաս պաշտոն զբաղեցնող աշխատողները չեն կարող հանդիսանալ իրենց ազգականի կամ այն անձի անմիջական վերադասը, որի հետ գտնվում են անձնական հարաբերություններում:

Անմիջական հաշվետվողականության կամ վերադաս-ստորադաս հարաբերությունների բացակայության պարագայում, ազգականներին կամ այն աշխատողներին, որոնք գտնվում են ընտանեկան կամ անձնական հարաբերություններում, սովորաբար թույլատրվում է աշխատել միևնույն բաժնում՝ պայմանով, որ չլինեն առանձնակի գործառնական դժվարություններ:

(d) Անձիք, որոնց վրա տարածվում է Կանոնագրքի գործողությունը, չպետք է կայացնեն աշխատանքին առնչվող որոշումներ կամ մասնակցեն կամ ներդրում ունենան այլ անձանց կողմից կայացվող աշխատանքին առնչվող որոշումներին, որոնք վերաբերում են իրենց ազգականներին կամ այն աշխատողներին, որոնց հետ նրանք գտնվում են անձնական հարաբերություններում, նույնիսկ եթե նրանք չեն հանդիսանում այդ անձի անմիջական ղեկավարը: Չթույլատրվող որոշումները ներառում են, սակայն չեն սահմանափակվում աշխատանքի ընդունման, աշխատավարձի, աշխատաժամերի, հատուցումների, առաջադրանքների, գնահատումների, դասընթացների, կարգապահության, առաջխաղացման և տեղափոխությունների վերաբերյալ որոշումներով:

(e). Այս բաժնի հետ համապատասխանությունն ապահովելու համար, ծածկույթում ընդգրկված բոլոր անձինք նպատակահարմարության դեպքում պետք է տեղեկացնեն Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին կամ Էթիկայի հարցերով միջնորդին այս բաժնով նախատեսված ցանկացած

հարաբերությունների մասին՝ այս Կանոնագրքի Բաժին 3(բ)-ի համաձայն:

ՄԱՍ 2: ԿԻՐԱՐԿՈՒՄ

Բաժին 14. Էթիկայի հարցերով պատասխանատու: Էթիկայի հարցերով պատասխանատուի գրասենյակը հիմնված է տրամադրելու անկախ աջակցություն ԾՄՄ-ին՝ Կանոնագրքի իրագործման և կիրարկման հարցում: Էթիկային հարցերով պատասխանատուն պետք է լինի ամբողջությամբ վստահելի և համբավ վայելող անձնավորություն, ցանկալի է էթիկայի, օրենքի կիրարկման և աշխատանքային շարժումների հարցերում փորձառությամբ: Էթիկայի հարցերով պատասխանատուն իր ծառայությունները կմատուցի պայմանագրի համաձայն և չի հանդիսանա Միջազգային միության և նրա Միակցություններից որևէ մեկի աշխատակիցը: Էթիկայի հարցերով պատասխանատուն կնշանակվի Միջազգային նախագահի կողմից և կհաստատվի Միջազգային գործադիր խորհրդի կողմից: Միջազգային նախագահը, միջազգային քարտուղար-գանձապահը և ԾՄՄ Միջազգային գործադիր խորհուրդը Կանոնագրքի հետ առնչվող հարցերը կարող են ներկայացնել Էթիկայի հարցերով պատասխանատուին՝ ուսումնասիրության և խորհրդակցության նպատակով՝ Բաժիններ 22-ի և 23-ի համապատասխան:

Բաժին 15: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպան: ԾՄՄ-ի էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը հիմնվում է Կանոնագրքի և ընթացիկ գործառնությունների իրականացումն ու կիրարկումը վերահսկելու նպատակով՝ ամրապնդելու էթիկայի մշակույթը Միությունում: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը պատասխանատու է Միջազգային միությանը և դրա Միակցություններին Կանոնագրքի և էթիկայի մշակույթի հետ առնչվող հարցերի և մտահոգությունների շուրջ աջակցություն ցուցաբերելու, Կանոնագրքի և էթիկայի մշակույթի թեմաներով ԾՄՄ -ի և հարակից մարմնի ծառայողների և անձնակազմի համար անցկացվող էթիկայի հարցերով պատասխանատուն իր ծառայությունները կմատուցի պայմանագրի համաձայն և չի

հանդիսանա Միջազգային միության և նրա Միակցություններից որևէ մեկի աշխատակիցը: վերապատրաստումները ղեկավարելու, էթիկայի հարցերով մտահոգություններին և բողոքներին արձագանքելու՝ Բաժիններ 17-23-ի համապատասխան, շահերի բախման մասին տեղեկությունների ստացման և լուծումներ տալու, էթիկայի հարցերով պատասխանատուին աջակցելու և ընդհանուր առմամբ ՕՄՄ -ի էթիկայի ծրագրի շրջանակներում ըստ անհրաժեշտության այլ օժանդակություն տրամադրելու համար: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը, էթիկայի հարցերով պատասխանատուի հետ խորհրդակցելով, տարեկան հաշվետվություն կներկայացնի ՕՄՄ -ի Գործադիր խորհրդին՝ ամփոփելով համապատասխանության, վերապատրաստման, կիրարկման, մշակույթի կառուցման և դրանց առնչվող այլ գործունեությունները և առաջարկություններ ներկայացնելով էթիկայի ծրագրի փոփոխությունների վերաբերյալ, որոնք, ըստ նրա, կխթանեն ծրագրի արդյունավետությունը: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը պարբերաբար կարող է նաև ուսումնասիրություններ իրականացնել՝ Կանոնագրքի հետ համապատասխանության մշտադիտարկման նպատակով, նաև սահմանելու՝ արդյոք համագործակցությունները, համատեղ ձեռնարկությունները և կառավարող կազմակերպությունների հետ ձեռք բերված համաձայնությունները համապատասխանում են սույն Կանոնագրքին, ըստ հավուր պատշաճի արձանագրվում են, արտացոլում են ապրանքների և ծառայությունների համար ողջամիտ ներդրում կամ վճարում՝ ՕՄՄ -ի հարկերից ազատված լինելու նպատակներին համապատասխան, և չեն հանգեցնում մասնավոր շահի, անթույլատրելի մասնավոր օգուտի ստացմանը կամ գեշահույթ բերող գործարքների: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը կլինի ՕՄՄ Իրավաբանական բաժնի աշխատակից:

Բաժին 16: Հարակից մարմնի էթիկայի հարցերով միջնորդ: Յուրաքանչյուր հարակից մարմին կնշանակի էթիկայի հարցերով միջնորդ, որը հասանելի կլինի էթիկայի հարցերով խորհրդատվության և ուղղորդման համար, կձառայի որպես հարակից մարմնի հիմնական կոնտակտային անձը

Միջազգային գրասենյակի էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանի հետ, կաջակցի Կանոնագրքի կիրարկման հարցում, կվերահսկի էթիկայի թեմաներով վերապատրաստումների անցկացման գործընթացները, կաջակցի հարակից մարմնի՝ էթիկայի մշակույթի ամրապնդման ուղղությամբ և կծառայի որպես էթիկայի հարցերով առաջնորդ մարմնում:

(a) Նախագահները, գլխավոր գործադիր տնօրենները, քարտուղար-գանձապահները, ֆինանսական գծով գլխավոր տնօրենները, աշխատակազմի ղեկավարները և նախորդիվ նշված պաշտոնների ցանկացած այլ համարժեք պաշտոնյաներն իրավունակ չեն ծառայելու որպես էթիկայի հարցերով միջնորդներ:

(b) Հարակից մարմիններին խրախուսվում է դիտարկել էթիկայի հարցերով միջնորդի պաշտոնի պարբերական ռոտացիան՝ կանխելու գործառնական դժվարությունները, զարգացնելու էթիկայի համատարած առաջնորդություն հարակից մարմնում: Միակցությունները ԾՄՄ-ի էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին կտեղեկացնեն էթիկայի հարցերով միջնորդների նշանակման և այդ պաշտոնում առաջացած ցանկացած թափուր հաստիքի մասին առաջին հնարավորության դեպքում:

(c) էթիկայի հարցերով միջնորդները պարբերաբար կվերապատրաստվեն իրենց ստանձնած դերի համապատասխան Միջազգային միության կողմից: Հարակից մարմինները պետք է ցանկացած ջանք գործադրեն՝ ապահովելու էթիկայի հարցերով իրենց միջնորդների մասնակցությունը:

Բաժին 17: Բողոքներ:

(a) Ծածկույթում ընդգրկված ցանկացած անձ կամ անդամ կարող է գրավոր բողոք ներկայացնել Կանոնագրքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Բանավոր մտահոգությունները և բողոքները կկրճատվեն և կընդունվեն գրավոր կերպով՝ բողոքին հետագա ընթացք

տալու համար: Բողոքները պետք է ստորագրվեն բողոքող (ներ)ի կողմից կամ պարունակեն նրա(նց) անունը, դրանք կմնան գաղտնի՝ Բաժին 24-ի համապատասխան: Կանոնագրքի ենթադրյալ խախտումների մասին բողոքները չեն կիրարկվի ՕՄՄ -ի կամ հարակից անդամի Սահմանադրության և Կանոնադրության համաձայն, եթե դրանք չեն համարվի նաև Սահմանադրության և Կանոնադրության ենթադրյալ խախտումներ:

(b) Միջազգային միությունը ՕՄՄ -ի ինտերնետային կայքում Էթիկայի բնույթի հարցերով բողոքներ ներկայացնելու համար կոնտակտային տվյալներ կհրապարակի և այդ տվյալները կտրամադրի ըստ պահանջի:

(c) Յուրաքանչյուր հարակից մարմին իր անձնակազմին և անդամներին կտրամադրի Էթիկայի հարցերով իրենց միջնորդների կոնտակտային տվյալները:

Բաժին 18: Միջազգային միության կողմից վերահսկվող բողոքներ: Կանոնագրքի ենթադրյալ խախտումների մասին բողոքները, որոնք ներկայացվում են Միջազգային միություն կամ Էթիկայի հարցերով պատասխանատուին, նախ կներկայացվեն Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը կուսումնասիրի Միջազգային միություն ներկայացված Էթիկայի բողոքները և կարձագանքի դրանց իր հայեցողությամբ այդ թվում, սակայն չսահմանափակվելով, տրամադրելով խորհրդակցություն կամ ուղղորդում, դրանք ոչ պաշտոնապես լուծելով, ուղղորդելով Էթիկայի հարցերով գրասենյակից դուրս այլ աղբյուրների և ներկայացնելով Էթիկայի հարցերով պատասխանատուին կամ հարակից անդամին հետագա ընթացքի համար: Բողոքը ներկայացնող անձը կծանուցվի բողոքի կարգավիճակի մասին՝ Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանի հայեցողությամբ և անպայմանորեն վերջնական ամփոփումից հետո:

Բաժին 19: Հարակից մարմնի կողմից վերահսկվող բողոքներ, Ծանուցում Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին: Էթիկայի հարցերով բողոքները, որոնք բարձրացվում են հարակից մարմնի դեմ կամ նրան հղելով, կուսումնասիրվեն ներգրավված հարակից մարմնի կողմից և ըստ անհրաժեշտության կարող են հիմք հանդիսանալ աշխատողի նկատմամբ կարգապահական պատժամիջոցների կամ միության ներքին պաշտոնական մեղադրանքների առաջադրման համար, որոնք կվարվեն դատավարություն իրականացնող մարմնի առջև՝ հարակից մարմնի Սահմանադրության և Կանոնադրության և/կամ ԾՄՄ -ի Սահմանադրության և Կանոնադրության պահանջների համապատասխան: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը կարող է խորհրդակցություն տրամադրել հարակից մարմնին՝ Կանոնագրքի ենթադրյալ բողոքների կամ մեղադրանքների հետաքննության և ընթացքի վերաբերյալ: Այն դեպքերում, երբ բողոքի շրջանակներում ներգրավված լինեն հարակից մարմնի նախագահը, գլխավոր գործադիր տնօրենը, աշխատակազմի ղեկավարը, քարտուղար-գանձապահը, ֆինանսական հարցերով գլխավոր տնօրենը կամ այդ պաշտոնների համարժեք այլ պաշտոնյաներ, հարակից մարմինն այդ մասին կտեղեկացնի Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին առաջին հնարավորության դեպքում: Էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանը կարող է խորհրդակցել Էթիկայի հարցերով պատասխանատուի հետ՝ հարակից մարմնի կողմից բարձրացված ցանկացած հարցի վերաբերյալ:

Բաժին 20: Համագործակցության ձախողում, Անբարեխիղճ բողոքներ: Ծածկություն ընդգրկված անձի կողմից սույն Կանոնագրքի Էթիկայի բնույթի բողոքի կամ ենթադրյալ խախտման առնչությամբ ընթացող որևէ վարույթի կամ հետաքննության հետ լիովին համագործակցելու անհիմն ձախողումը կհամարվի այս Կանոնագրքի անկախ խախտում: ԾՄՄ -ն իրավունք է վերապահում, նախապես ծանուցելով, հետևելով հետաքննությանը և պատշաճ ընթացակարգին, կարգապահական պատժամիջոցների ենթարկել այն անձանց, որոնք անբարեխիղճ կեցվածք են ցուցաբերում կամ

գիտակցաբար կեղծ բողոք, զեկույց կամ հարցում են ներկայացնում ոտնձգությունների կամ չարամիտ պահվածքի վերաբերյալ:

Բաժին 21: Առաջնային իրավասություն

(a) Առաջնային իրավասության դիմումներ: Եթե հարակից մարմինը կամ մարմնի գործադիր խորհրդի անդամը, ծառայողը կամ անդամը գտնում է, որ ծածկույթում ընդգրկված որևէ անձի դեմ առաջադրված միության ներքին մեղադրանքները, որոնք համարվում են նաև այս Կանոնագրքի ենթադրյալ խախտումներ, կապված են այնպիսի իրավիճակի հետ, որը կարող է լրջորեն վտանգել հարակից մարմնի կամ Միջազգային միության շահերը, կամ որ հարակից մարմնի վարույթի լսումները լիովին չեն պաշտպանի հարակից մարմնի, ծառայողի կամ անդամի շահերը, ապա այդ անձը կարող է դիմել Միջազգային նախագահին՝ ստանձնելու Առաջնային իրավասություն ԾՄՄ-ի Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի, Բաժին 2(f)-ի համապատասխան:

(b) Միջազգային նախագահի կողմից Առաջնային իրավասության ստանձնումը: ԾՄՄ Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի, Բաժին 2(f)-ի համաձայն, Միջազգային նախագահն իր հայեցողությամբ կարող է ստանձնել Առաջնային իրավասություն միության ներքին պաշտոնական մեղադրանքների առնչությամբ, որոնք համարվում են նաև այս Կանոնագրքի ենթադրյալ խախտումներ, եթե հետաքննության արդյունքում նա կարծում է, որ ծածկույթում ընդգրկված անձի դեմ առաջադրված մեղադրանքները կապված են այնպիսի իրավիճակի հետ, որը կարող է լրջորեն վտանգել հարակից մարմնի կամ Միջազգային միության շահերը: Միջազգային նախագահն իր հայեցողությամբ կարող է հարցը ներկայացնել Էթիկայի հարցերով պատասխանատուին՝ Առաջնային իրավասության հնարավոր ստանձման վերաբերյալ առաջարկություն ստանալու նպատակով:

Բաժին 22: Պաշտոնական մեղադրանքների ներկայացումը Էթիկայի հարցերով պատասխանատուին: Եթե ԾՄՄ-ի

Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի, Բաժին 3-ի համաձայն Միջազգային միության դեմ առաջադրված ներքին պաշտոնական մեղադրանքները նաև համարվում են ծառայողի, Միջազգային միության գործադիր խորհրդի անդամի կամ հարակից մարմնի կողմից թույլ տված Կանոնազրգրի ենթադրյալ խախտումներ, ապա նման մեղադրանքները կարող են ներկայացվել Էթիկայի հարցերով պատասխանատուին՝ ուսումնասիրության և առաջարկություններ ներկայացնելու նպատակով:

Բաժին 23: Էթիկայի հարցերով պատասխանատուի կողմից հայցադիմումների ուսումնասիրություն:

(a) Եթե Կանոնազրգրի խախտումների մասին որևէ բողոքի կամ պաշտոնական մեղադրանքի անհիմն պնդումների ուսումնասիրության արդյունքում Էթիկայի հարցերով պատասխանատուն գտնի, որ պնդումները կարիք ունեն և/կամ պահանջում են հետագա ուսումնասիրություն, նա կառաջադրի պատասխան կամ գործողությունների շարք՝ Միջազգային միության կողմից բողոքին կամ մեղադրանքներին արձագանքելու համար, այդ թվում, սակայն չսահմանափակվելով, հետևյալով՝

- (1) ԾՄՄ-ի աշխատակազմի և/կամ արտաքին հետաքննիչ(ներ)ի կողմից իրականացվող հետագա հետաքննություն,
- (2) ԾՄՄ-ի Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի համաձայն պաշտոնական մեղադրանքների առաջադրում,
- (3) ԾՄՄ-ի Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի, Բաժին 2(f)-ի համաձայն Միջազգային նախագահի կողմից Առաջնային իրավասության ստանձնում,
- (4) Արտաքին լսումներ իրականացնող ծառայողի նշանակում՝ ԾՄՄ-ի Սահմանադրության և Կանոնադրության XVII հոդվածի, Բաժին 3-ի համաձայն դատաքննություն անցկացնելու նպատակով,

- (5) Ծածկույթում ընդգրկված աշխատակիցների կարգապահություն,
- (6) Պաշտոնական վարույթներում մեղադրվող ծածկույթում ընդգրկված ծառայողների կամ անդամների նկատմամբ կիրառվող պատժամիջոցներ և
- (7) այլ համապատասխան գործողություններ՝ ըստ Էթիկայի հարցերով պատասխանատուի հայեցողության:

(b) Եթե Կանոնագրքի ենթադրյալ խախտումների վերաբերյալ պնդումների ուսումնասիրության արդյունքում Էթիկայի հարցերով պատասխանատուն եզրահանգի, որ պնդումներն անհիմն են կամ հետագա հետաքննության անհրաժեշտություն չկա, նա այդ եզրահանգումները կներկայացնի Միջազգային միությանը:

ՄԱՍ-Է: ԻՐԱԶԵԿԻՉՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բաժին 24: Գաղտնիություն: ԾՄՄ-ն կձեռնարկի բոլոր ողջամիտ ջանքերը՝ պահպանելու այն անձ(անց)ի գաղտնիությունը, որը բարձրացնում է Էթիկայի բնույթի մտահոգություն, հարցադրում, զեկույց կամ բողոք Կանոնագրքի համաձայն, եթե բողոք ներկայացնողը չի տվել այդ տվյալները հայտնելու լիազորություն կամ անհրաժեշտություն չկա, որպեսզի ԾՄՄ-ն հանդես գա նրա անունից որպես վստահված անձ կամ իրականացնի իրավական պարտականություններ: ԾՄՄ-ն նաև կվարի Էթիկայի բնույթի բողոքների և մտահոգությունների հաղորդակցությունը հնարավորինս գաղտնի կերպով և խոհեմությամբ՝ այն պայմանով, որ նա կարողանա ավարտուն և արդար հետաքննություն իրականացնի, հանդես գա նրա անունից որպես վստահված անձ և իրականացնի իրավական պարտականություններ, անհրաժեշտության դեպքում ուսումնասիրի նրա գործողությունները:

Բաժին 25: Ոչ մի հատուցում: ԾՄՄ-ն հորդորում է բոլոր ծառայողներին և աշխատակիցներին Կանոնագրքի խախտումների վերաբերյալ էթիկայի բնույթի մտահոգությունները և բողոքները հրավիրել Միության ուշադրությանը՝ վերը նշված Մաս Զ-ի համաձայն:

(a) ԾՄՄ-ն ուղղակիորեն արգելում է ծածկույթում ընդգրկված անձանց և անդամների նկատմամբ հատուցման իրականացում՝

(1) Այս Կանոնագրքի համաձայն բարեխիղճ բողոքներ, զեկույցներ և հարցադրումներ կատարելու,

(2) Կանոնագրքի կողմից արգելվող ցանկացած գործողության կանխման,

(3) Ապացույցներ, վկայություններ կամ տեղեկության տրամադրելու կամ Կանոնագրքի ցանկացած հետաքննության կամ կիրարկման ընթացքի հետ անվերապահորեն համագործակցելու և

(4) Վերը նշված ՄԱՍ Զ-ով նախատեսված կիրարկման ընթացակարգին անվերապահորեն մասնակցելու նպատակով:

(b) ԾՄՄ -ն առանձնապես չի հանդուրժի հարակից մարմնի էթիկայի հարցերով միջնորդների հանդեպ ցուցաբերած հատուցումը՝ իրենց պարտականությունները կատարելու համար:

(c) Հատուցման ցանկացած ենթադրյալ գործողություն պետք է զեկուցվի ԾՄՄ-ի էթիկայի հարցերով մարդու իրավունքների պաշտպանին կամ հարակից մարմնի էթիկայի հարցերով միջնորդին, որին անմիջապես արձագանք կտրվի:

ՀԱՎԵԼՎԱԾ Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ. ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

ՆԱԽԱԳԱՀ. «Իմ պարտականությունն է տեղեկացնել Ձեզ, որ Սպասարկման աշխատողների միջազգային միությունը պահանջում է յուրաքանչյուր թեկնածուի՝ անդամակցություն ստանալու ցանկության կատարյալ ազատություն: Առկա է հավատարմության պարտականություն, սակայն թույլ տվեք Ձեզ հավաստիացնել, որ այդ պարտականության կատարման մեջ չկա Ձեր քաղաքացիական կամ կրոնական պարտականություններին հակասող ոչ մի բան: Ընբռնելով սա՝ արդյո՞ք պատրաստ եք ստանձնել պարտականությունը»:

(Պատասխան)

ՆԱԽԱԳԱՀ. «Այժմ խնդրում եմ, որ Ձեզնից յուրաքանչյուրը բարձրացնի իր աջ ձեռքը և արտասանի հետևյալ պարտականությունը.

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

«Ես՝ (անուն, ազգանուն) _____, խոստանում եմ պատվով, որ բարեխղճորեն կկատարեմ սույն Միության և Սպասարկման աշխատողների միջազգային միության սահմանադրության ու կանոնադրության պահանջները:

Ես համաձայնում եմ կրթել ինքս ինձ և այլ անդամներին աշխատավորական շարժման պատմության հարցերում և, իմ կարողությունների չափով, պաշտպանել արհմիութենական շարժման սկզբունքները: Ես գիտակցաբար չեմ վնասի որևէ անդամի կամ թույլ չեմ տա, որ նրան վնասեն, եթե ի վիճակի եմ դա կանխել:

Որպես SEIU-ի անդամ, ես պատասխանատվություն եմ ստանձնում նպաստել Միության տեսլականի իրագործմանը, որն է՝ արդար հասարակություն, որում բոլոր աշխատողները գնահատված են, իսկ մարդիկ՝ հարգված, որում բոլոր ընտանիքներն ու համայնքները բարգավաճում են, և մենք ապագա սերունդներին թողնում ենք առավել լավ և արդար

հասարակություն»:

ՆԱԽԱԳԱՀ. «Այժմ Դուք Սպասարկման աշխատողների միջազգային միության անդամներ եք»:

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆԶՄԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Ես՝ (անուն, ազգանուն) _____, ընդունում եմ իմ պատասխանատվությունը՝ որպես Սպասարկման աշխատողների միջազգային միության ընտրված պաշտոնյա, և խոստանում եմ, որ բարեխղճորեն կկատարեմ ԾՄՄ սահմանադրության և կանոնադրության պահանջները: Խոստանում եմ ջանասիրաբար աշխատել աշխատողներին միավորելու ուղղությամբ՝ մեր անդամների արդար հասարակության տեսլականը կյանքի կոչելու համար: Ուշադիր ընթերցել և ստորագրել եմ Պաշտոնյաների պաշտոնի ստանձնման պարտականությունը և սույնով պարտավորվում եմ հետևել դրան»:

Պաշտոնյաների պաշտոնի ստանձնման պարտականություն.

Ես ընդունում եմ իմ պատասխանատվությունը՝ որպես Սպասարկման աշխատողների միջազգային միության ընտրված պաշտոնյա, , և խոստանում եմ, որ բարեխղճորեն կկատարեմ Սպասարկման աշխատողների միջազգային միության սահմանադրության և կանոնադրության պահանջները:

Ես խոստանում եմ, որ կիրականացնեմ էթիկայի վրա հիմնված, պատասխանատու կառավարում՝ ներկայացնելով մեր անդամներին և կազմակերպելով նոր աշխատողների՝ բոլորի շահերին ուղղված կարողությունների ամրապնդման համար:

Ես համաձայնում եմ պաշտպանել արհմիութենական շարժման սկզբունքները:

Ես գիտակցաբար չեմ վնասի որևէ անդամի կամ թույլ չեմ տա, որ նրան վնասեն, եթե ի վիճակի եմ դա կանխել:

Ես խոստանում եմ իրականացնել կառավարում՝ հիմք ընդունելով SEIU-ի հետևյալ չափանիշները.

- Ընդհանուր և միասնական նպատակ.
- Հարցերի հանդեպ բաց վերաբերմունք և սովորելու պատրաստակամություն.

Գործելով մեր համոզմունքների քաջությամբ;

- Աշխատելով հաշվետվողականությամբ; և
- Ձգտելով ներառվածությանը

«Ես հավատում եմ և պայքարելու եմ ԾԱՄՄ արդար հասարակության տեսությանը, որտեղ բոլոր աշխատողները գնահատված են, իսկ անձինք՝ հարգված, որտեղ բոլոր ընտանիքներն և համայնքները բարգավաճում են և որտեղ մենք ստեղծում ենք էլ ավելի լավ և հավասար հնարավորություններով աշխարհ մեր ժառանգների համար:»

Ես՝ որպես իմ առաջնորդական պարտավորությունների մաս, կաշխատեմ սևամորթների նկատմամբ ինստիտուցիոնալ ռասիզմի վերացման ուղղությամբ, ինչն անհրաժեշտ է մեր անդամների, նրանց ընտանիքների և համայնքների, ինչպես նաև բոլոր աշխատողների համար ազնիվ և արդար տնտեսության կառուցման համար: Մենք կարող ենք աշխատողների համար տնտեսական արդարության հասնել միայն բոլորի համար ռասայական հավասարության և արդարության հասնելով:

Ես պարտավորվում եմ մեր անդամներին վերաբերող առաջնորդական որոշումներ կայացնելիս դրսևորել ամենաբարձր էթիկական մոտեցումները:

Մոյնով հաստատում եմ, որ ընթերցել և ստորագրել եմ Պաշտոնյաների պաշտոնի ստանձնման պարտականությունը և պարտավորվում եմ հետևել դրան:

Պաշտոնյայի ստորագրություն՝

Բանակցություն

Բանակցությունները պետք է ղեկավարվեն հետևալ կանոններով, բացառությամբ այն դեպքերի, երբ Տեղական

Միությունը ընդունել է իր սեփական կանոնները և կանոնակարգերը:

Կանոն 1. Գործարքի հերթական կարգը ցանկացած պահի կարող է կասեցվել հանդիպման քվեարկությամբ՝ անհետաձգելի գործարքի կարգավորման համար:

Կանոն 2. Բոլոր միջնորդությունները (նախագահի պահանջի առկայության դեպքում) կամ հրաժարականները պետք է ներկայացվեն գրավոր:

Կանոն 3. Ցանկացած խոսակցություն, շշուկով կամ այլ կերպ, կամ որևէ այլ գործողություն, որը կարող է խանգարել կամ խանգարող ազդեցություն ունենալ ելույթ ունեցող անդամի վրա, կամ խախտել հանդիպման ընթացքը կամ խոչընդոտել գործարքի արձանագրությանը, դիտվում է որպես կարգի խախտում:

Կանոն 4. Հանդիպման ընթացքում գաղտնի քննարկումներ չեն թույլատրվում:

Կանոն 5. Նախագահող պաշտոնյայի կողմից ընդունված յուրաքանչյուր միջնորդություն պետք է աջակցության ենթարկվի, և նախաձեռնողը, ինչպես նաև աջակցողը պետք է ոտքի կանգնեն և նախագահի կողմից ճանաչվեն:

Կանոն 6. Միջնորդություն ներկայացրած յուրաքանչյուր անձ կարող է այն չեղյալ ճանաչել՝ աջակցողի համաձայնությամբ, սակայն արդեն իսկ քննարկման ենթարկված միջնորդությունը կարող է չեղարկվել բացառությամբ ձայների մեծամասնությամբ:

Կանոն 7. Փոփոխություն փոփոխելու միջնորդությունը ընդունելի է, սակայն չի թույլատրվում փոփոխել արդեն իսկ փոփոխված փոփոխություն:

Կանոն 8. Միջնորդությունը վիճարկման ենթակա չէ, մինչդեռ հայտարարված չէ նախագահողի կողմից:

Կանոն 9. Այն անդամը, ով ցանկանում է խոսք ասել, պետք է ոտքի կանգնի, դիմի նախագահողին, և միայն վերջինիս կողմից հավանություն ստանալու դեպքում, շարունակի իր խոսքը:

Կանոն 10. Այն դեպքում, երբ ելույթ ունենալու ցանկությամբ ոտքի է կանգնում երկու կամ ավելի անդամ, նախագահողը պետք

է որոշի, թե ում տալ խոսքի իրավունք:

Կանոն 11. Ցանկացած անդամ, ելույթ ունենալուց, պետք է խոսի քննարկվող հարցի սահմաններում և պետք է խուսափի բոլոր անձնական, անվայել կամ հեզնական արտահայտություններից:

Կանոն 12. Ոգելից խմիչքների կամ օրենքով հետապնդվող որևէ նյութի ազդեցության տակ հանդիպումներին մասնակցությունը հեռացման հիմք է հանդիսանում:

Կանոն 13. Որևէ անդամ չպետք է խոչընդոտի մյուսին ելույթի ժամանակ, բացառությամբ կարգի խախտման դեպքի. այդ դեպքում անդամը պետք է հստակ նշի կարգը, և նախագահողը պետք է այն վերականգնի առանց բանակցության:

Կանոն 14. Ելույթի ժամանակ կարգի հրավիրված յուրաքանչյուր անդամ պետք է նստի, մինչդեռ կարգը վերականգնած չէ, ինչից հետո կարող է շարունակել իր ելույթը:

Կանոն 15. Ցանկացած անդամ, ով նախագահողի որոշման հետևանքով իրեն անձամբ տուժած է համարում, կարող է այդ որոշումը բողոքարկել մարմին:

Կանոն 16. Երբ բողոքը ներկայացվել է նախագահողի որոշման դեմ, Փախնախագահն պետք է գործի որպես նախագահող. նախագահողի կողմից հանդիպմանը բողոքը պետք է ներկայացվի հետևյալ խոսքերով՝ «Արդյո՞ք նախագահության որոշումը պետք է դիտվի որպես սույն Միության որոշում:» Սույնից հետո անդամը իրավունք ունի հիմնավորելու իր բողոքը, իսկ նախագահը կպատճառաբանի որոշման կայացումը; անադմները կանցնեն բերված բողոքի վերաբերյալ քվեարկությանը, առանց հետագա բանակցությունների, և նախագահի որոշման բեկանումը հնարավոր կլինի միայն ձայների մեծամասնության քվեարկության դեպքում:

Կանոն 17. Նույն հարցի վերաբերյալ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ելույթի իրավունք, մինչ դեռ բոլոր ցանկացողները ելույթ չեն ունեցել, առանց միաձայն համաձայնության՝ երկու անգամից ոչ ավել, առանց ներկա գտնվող մասնկիցների երկու-երրորդի քվեարկության՝ յուրաքանչյուր անգամ հինգ րոպեից ոչ ավել:

Կանոն 18. Նախագահող պաշտոնյան չպետք է խոսի որևէ հարցի վերաբերյալ, մինչդեռ չի հանձնել իր աթոռը,

բացառություն են կազմում՝ կարգի վերականգնման, պաշտոնական գեկույցի, կամ կազմակերպության շահերին առնչվող խորհուրդների ներկայացման դեպքերի:

Կանոն 19. Երբ հարցը դրված է, ոչ մի միջնորդություն չի կարող ներկայացվել, բացառությամբ հետևյալի՝

1. Հետաձգելու;
2. Հարցը մի կողմ թողնելու;
3. Նախկին հարցին անդրադառնալու;
4. Տրված ժամկետը երկարաձգելու;
5. Անդրադառնալու կամ կատարելու;
6. Լրացնելու:

Սույն միջնորդությունները պետք է ունենան վերը նշված հերթականությունը: Սույն միջնորդություններից առաջին երեքը բանավիճման ենթակա չեն:

Կանոն 20. Եթե հարցը փոփոխվել է, ապա փոփոխումը հարցի պետք է առաջինը ներկայացվի; Եթե առաջարկվել է մեկից ավելին փոփոխություն, ապա հարցը պետք է դրվի հետևյալ կերպ՝

1. Փոփոխության փոփոխություն:
2. Փոփոխություն:
3. Սկզբնական առաջարկ:

Կանոն 21. Երբ հարցը հետաձգվել է անորոշ ժամկետով, այն չպետք է նորից վեր հանվի, բացառությամբ ձայների երկու-երրորդի քվեարկությամբ:

Կանոն 22. Հետաձգելու միջնորդությունը պետք է միշտ իր հերթին ներկայացվի, բացառությամբ՝

1. Երբ անդամը ելույթ է ունենում;
2. Երբ անդամները քվեարկում են:

Կանոն 23. Հարցը քվեարկությանը ներկայացնելուց առաջ

նախագահող պաշտոնյան պետք է հարցնի. ՚Դուք հարցին պատրաստ եք, ինչից հետո այն կարող է ներկայացվել քննարկմանը: Երբ ոչ մի անդամ ոտքի չի կանգնում ելույթ ունենալու, կամ քննարկումն ավարտված է, նախագահող պաշտոնյան հարցը պետք է ներկայցնի հետևյալ կերպ. Սույն միջնորդության կողմնակիցները թող ասեն՝ այե, և հաստատող քվեարկությունից հետո դիմի. Նրանք, ովքեր որ ունեն հակառակ կարծիք, ասեք՝ ոչ: Քվեարկությունից հետո, նախագահող պաշտոնյան պետք է հայտարարի արդյունքները հետևյալ կերպ՝ Այն անցել է [չի անցել], և այսպես կարգադրվել:

Կանոն 24. Նախքան նախագահ պաշտոնյաի՝ հարցը քվեարկությանը ներկայացված լինելու մասին հայտարարելը, ցանկացած անդամ կարող է խնդրել խմբից բաժանման մասին: Նախագահողը պետք է բավարարի սույն խնդրանքը: Այնուհետև անցկացվում է քվեարկությունը:

Կանոն 25. Երբ հարցը լուծված է, այն կարող է կրկին անգամ քննարկվել ներկա գտնվող մասնակիցների ձայների երկու-երրորդի որոշմամբ:

Կանոն 26. Վերաքննարկման միջնորդությունը պետք է ներկայացվի և աջակցության ենթարկվի մեծամասնության հետ քվեարկած երկու մասնակիցների կողմից:

Կանոն 27. Այն անձը, ում նախագահողը երեք անգամ հրամայել է նստել, առանց համաձայնեցման պետք է զրկվի նույն նիստի ցանկացած հետագա գործարքի մասնակցելու իրավունքից:

Կանոն 28. Բոլոր հարցերը, եթե այլ բան նախատեսված չէ, պետք է լուծվեն ձայների մեծամասնությամբ:

Կանոն 29. Հանդիպման նախագահող պաշտոնյան պետք է կիրառի նշված կանոններն և կանոնակարգերը և սույն կանոնների խախտման համար կարող է հրամայել հանդիպումից դուրս հրավիրել անդամներին:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Բացում
2. Ծառայողների Գրանցում
3. Նախորդ հանդիպման արձանագրության ընթերցում
4. Անդամակցության Դիմումներ
5. Նոր անդամների ընդունում
6. Տեղեկատվություն և օրինագծեր
7. Ծառայողների, գործադիր խորհրդի և հանձնաժողովների զեկույցներ
8. Անավարտ գործեր
9. Նոր գործ
10. Բարեկեցություն
11. Ընդմիջում



MARY KAY HENRY

Միջազգային Նախագահ

LUISA BLUE

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

LESLIE FRANE

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

GERRY HUDSON

Միջազգային Զարտուղար-Գանձապետ

HEATHER CONROY

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

VALARIE LONG

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

NEAL BISNO

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

SCOTT COURTNEY

Միջազգային Գործադիր Փոխնախագահ

ROCIO SÁENZ

Միջազգային Գործադիր Փոխնախագահ